



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ
ՆԱԽԱԳԱՀ

Հայաստանի Հանրապետություն, 0019 Երևան, Մ. Բաղրամյան 19, հեռ. (+374 11) 888-107, 888-146, էլ. հասցե՝ intrel@armsai.am

№ ՀԿԵ-311

« 31 » 05 2021 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ա. ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Միրզոյան

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի ա) ենթակետով և 30-րդ հոդվածի 1-ին մասով՝ Ձեզ է ներկայացվում Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2020 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումը:

Հարգանքով

Լ. ՅՈՒԼՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ՈՐՈՇՈՒՄ

«27» Տեպրեմբեր

2021 թվականի N 169-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի
9-րդ մասի 6-րդ կետով՝ ՀՀ հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2020
թվականի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումը՝ համաձայն սույն
որոշման Հավելվածի:

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ

Լ. ՅՈԼՅԱՆ

Հավելված
ՀՀ հաշվեքննիչ պալատի
2021 թվականի մայիսի 27-ի թիվ 169-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ՏԱՐԵԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

2020 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԵՐԵՎԱՆ 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՌՈՏ ԱՄՓՈՓԱԳԻՐ	3
ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ	3
ՄԱՍ 1. ՌԻՍԿԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	10
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	10
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԱՅԱՆՏԱՌ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ	18
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ	23
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԶՄԵՌԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ, ԸՆԹԱՅԻԿ ՊԱՀՊԱՆՈՒՄ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ	29
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ	33
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	38
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	40
ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ	43
ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ	45
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ և ՄՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐ	47
ՎԱՆԱԶՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ	49
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՔՍԱՏՈՒՐՔԵՐԻ (ՀԱՄԱՐԺԵՔ ԱՅԼ ՏՈՒՐՔԵՐԻ, ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ) ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԵԳՐԵԼՈՒ ԵՎ ԲԱՇԽԵԼՈՒ, ԴՐԱՆՔ ՈՐՊԵՍ ԵՎԱՄՈՒՏ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՆԿԱՏՄԱՐ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ (ԵԱՏՄ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԻԴԻՏԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ)	55
ՄԱՍ 2. ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	58
ՄԱՍ 3. 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	65
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	68

ՀԱՄԱՌՈՏ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Սույն տարեկան հաղորդումը ներկայացվում է՝ ի կատարումն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 198-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, ինչպես նաև «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի ա) ենթակետի և 28-րդ հոդվածի պահանջների: Այն պատրաստվել է՝ առաջնորդվելով Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) ստանդարտներով՝ ISSAI-ներով:

Սույն տարեկան հաղորդումը ներկայացնում է հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում 2020 թվականի շրջանակներում Հաշվեքննիչ պալատի կողմից իրականացված հաշվեքննության վերաբերյալ աշխատանքները:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅ

Հաշվեքննիչ պալատը 2020 թվականին իրականացրել է 78 հաշվեքննություն, որից 65-ը՝ Հաշվեքննիչ պալատի 2020 թվականի գործունեության ծրագրի առաջին մասի շրջանակներում (2020 թվականի պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննություններ), իսկ 13-ը՝ սույն գործունեության ծրագրի երկրորդ մասի շրջանակներում (ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանությամբ):

2021 թվականից սկսած՝ Հաշվեքննիչ պալատը պետական բյուջեի կատարման վերաբերյալ իր ամենամյա եզրակացությունը ներկայացնում է նոր ձևաչափով՝ «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով: Համաձայն վերջինիս՝ 2020 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը պետք է կազմվի հաշվետու տարվա պետական բյուջեի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության միջոցով՝ օգտագործելով նույն տարվա պետական բյուջեի երեք, վեց և ինն ամիսների կատարման նկատմամբ ֆինանսական և համապատասխանության հաշվեքննությունների ընթացիկ եզրակացությունները: Այդ նպատակով Հաշվեքննիչ պալատը, «Պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույց»-ի համաձայն, 2020 թվականի ընթացքում պլանավորել և իրականացրել է ՀՀ 2020թ. պետական բյուջեի կատարման եռամսյակային թվով 65 հաշվեքննություն 17 գերատեսչությունում՝ ապահովելով 1,711,556,936.0 հազ. դրամի չափով փաստացի ծախսեր ընդգրկող գերատեսչությունների հաշվեքննության ծածկույթ (ընդ որում, ՀՀ առողջապահության նախարարությունում իրականացվել է միայն տարեկան կատարման հաշվեքննություն, քանի որ մինչ այդ հաշվեքննությունը կասեցված է եղել նախարարության խնդրանքով՝ համաճարակային իրավիճակի և ռազմական դրության հետևանքով առաջացած գերձանրաբեռնվածությամբ պայմանավորված):

¹ Հիմքը՝ ՀՀ առողջապահության նախարարի 2020թ. մարտի 22-ի թիվ ԱԹ/ՊԳ.1/5596-20 գրությունը

Հաշվի առնելով, որ ՀՀ Սահմանադրության և «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի համաձայն, ՀՀ 2020թ. պետական բյուջեի կատարման հաշվեքննությունների արդյունքներն ամփոփող եզրակացությունը, որպես ինքնուրույն փաստաթուղթ, ներկայացվելու է ՀՀ Ազգային ժողովին և հրապարակվելու Հաշվեքննիչ պալատի կայքում, սույն տարեկան հաղորդումը չի կրկնում այդ նույն տեղեկատվությունը:

Հաշվեքննիչ պալատի 2020 թվականի գործունեության ծրագրի երկրորդ մասի շրջանակներում (ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանությամբ) հաշվետու տարվա համար նախատեսված 29 հաշվեքննությունից 13-ն ավարտվել է, մեկը՝ կասեցվել, իսկ 15-ը՝ դեռևս շարունակվում է (օրենքի ուժով տեղափոխվել է հաջորդ տարի՝ 2021թ.):

Թվով 15 հաշվեքննության տեղափոխումը գործունեության հաջորդ շրջափուլ պայմանավորված էր 2020թ.-ին բռնկված «ԿՈՎԻԴ-19» համավարակով, ինչն էականորեն բարդացրեց հաշվեքննությունների անցկացումը: Մասնավորապես, ՀՀ կառավարության 16.03.2020թ. թիվ 298-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում 2020 թվականի մարտի 16-ից մինչև 2020 թվականի սեպտեմբերի 11-ը ներառյալ հայտարարվել էր արտակարգ դրություն, որով պայմանավորված, այլ սահմանափակումների հետ մեկտեղ, Պարետի որոշումներով ՀՀ տարածքում սահմանված էր նաև հանրային ծառայությունների իրականացման, ՀՀ տարածքում անձանց տեղաշարժի մի շարք կարևոր սահմանափակումներ, ինչը թույլ էր տալիս հաշվեքննություններն իրականացնել կամ հեռավար կարգով, կամ ՀՀ հաշվեքննիչ պալատի գրասենյակում՝ դիմակների կրման և սոցիալական հեռավորության պահպանման պարտադիր պահանջով:

Հաշվեքննությունների բնականոն ընթացքի վրա, համավարակից զատ, էական ազդեցություն է ունեցել նաև 2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմը, երբ հաշվեքննության իրականացումն անհնարին դարձնող անկանխատեսելի հանգամանքով պայմանավորված (ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» N 1586-Ն որոշում) 2020թ. սեպտեմբերի 30-ից մինչև նոյեմբերի 20-ը Հաշվեքննիչ պալատի համապատասխան որոշմամբ կասեցված էին բոլոր հաշվեքննությունները և ստուգումները (ռազմական դրությունը գործել է 2020թ. սեպտեմբերի 27-ից 2021թ. մարտի 24-ը):

Արդյունքում, «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 4-րդ մասի հիմքով 2020 թվականի գործունեության տարեկան ծրագրից 15 ծրագրային կետ տեղափոխվել է 2021 թվականի գործունեության տարեկան ծրագիր (ցանկը հաղորդման Հավելված 1.-ում):

Ոլորտային նկարագիր: 2020 թվականին Հաշվեքննիչ պալատի հաշվեքննության շրջանակը ներառել է աշխատանքի և սոցիալական ապահովության, ջրային ոլորտի, ոստիկանության, բարձր տեխնոլոգիական արդյունաբերության, բնապահպանության, արտակարգ իրավիճակների, մշակույթի, ճանապարհաշինության, համայնքային և այլ ոլորտները:

Հրապարակված հաշվեքննություններ: Իրականացված 13 հաշվեքննության արդյունքներով Հաշվեքննիչ պալատի կողմից հաստատված ընթացիկ եզրակացությունները օրենսդրությամբ սահմանված ժամկետում ներկայացվել են Ազգային ժողով, Կառավարություն և համապատասխան հաշվեքննության օբյեկտներին, և դրանցից 12-ը, «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան, հրապարակվել են Հաշվեքննիչ պալատի պաշտոնական www.armsai.am և ՀՀ հրապարակային ծանուցումների www.azdarar.am ինտերնետային կայքերում (հրապարակված հաշվեքննությունների ամփոփ արդյունքները ներկայացված են սույն հաղորդման Մաս 1-ում):

Պետական գաղտնիք պարունակող հաշվեքննություններ: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է պետական գաղտնիք պարունակող հաշվեքննություն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ (բացառությամբ վարկային և դրամաշնորհային ծրագրերի), որի արդյունքները գաղտնիության հիմքով չեն հրապարակվել: «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի հիմքով՝ Հաշվեքննիչ պալատը որոշել է վերոնշյալ հաշվեքննության արդյունքներն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն: Նշված հաշվեքննության ընթացիկ եզրակացությունը հասանելի է «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունում պահպանման ծախսերի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտին առնչվող բյուջետային միջոցների օգտագործման, բյուջետային մուտքերի ապահովման և պետական սեփականության օգտագործման հաշվեքննությունը պարունակել է նաև գաղտնի մաս, որի շրջանակներում կազմված հաշվեքննության արձանագրության փաստերը գաղտնիության հիմքով չեն հրապարակվել:

Կասեցված և չվերսկսված հաշվեքննություն: Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ ԵԱՏՄ) մարմիններում բյուջետային միջոցների ձևավորման, կառավարման ու տնօրինման, գույքի և այլ ակտիվների օգտագործման նկատմամբ ԵԱՏՄ անդամ երկրների բարձրագույն հաշվեքննիչ մարմինների կողմից 2020 թվականին իրականացվելիք համատեղ հաշվեքննությունը, «ԿՈՎԻԴ-19» համավարակով պայմանավորված, ԵԱՏՄ անդամ պետությունների բարձրագույն հաշվեքննիչ մարմինների ղեկավարների համատեղ որոշմամբ կասեցվել է: Սույն համատեղ հաշվեքննությունը նախատեսվում է իրականացնել 2021 թվականի երկրորդ կիսամյակում:

Իրավապահ մարմինների հետ համագործակցություն: 2017-2020թթ. գործունեության ծրագրերի շրջանակներում իրականացված հաշվեքննությունների (վերահսկողությունների) արդյունքներով իրավապահ մարմինների է տրամադրվել 44 նյութ, որոնցից 41-ը՝ ՀՀ գլխավոր դատախազությանը, 1-ը՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը, 1-ը՝ ՀՀ հատուկ քննչական ծառայությանը, 1-ը՝ ՀՀ քննչական կոմիտեին:

Ուղարկված նյութերի շրջանակներում 23-ի մասով տրվել է իրավական գնահատական, իսկ 21 նյութի մասով ուսումնասիրությունները շարունակվում են: Իրավական գնահատականի արժանացած 23 նյութի մասով հարուցվել է 45 քրեական գործ, որից 6 նյութ կցվել է արդեն հարուցված քրեական գործերի, իսկ 9-ը՝ կարճվել է: Հարուցված գործերի շրջանակներում մեղադրանք է առաջադրվել 3 անձի: Հարուցված գործերից մեկի մասով կայացվել է մեղադրական դատավճիռ, որն օրինական ուժի մեջ է մտել: ՀՀ գլխավոր դատախազության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն հարուցված քրեական գործերի մասով պատճառված վնասի նախնական չափը կազմում է մոտ 3,413,300 հազ. դրամ: Պատճառված վնասի վերջնական չափը պարզելու համար նախաքննությունը շարունակվում է:

Հաշվետու ժամանակահատվածում «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի հիմքով՝ Հաշվեքննիչ պալատի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազություն են ուղարկվել ՀՀ բնապահպանության նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ի ֆինանսատնտեսական գործունեության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ֆինանսատնտեսական գործունեության և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ ֆինանսատնտեսական գործունեության (գաղտնի) նկատմամբ հաշվեքննությունների արդյունքները: ՀՀ գլխավոր դատախազության պահանջով թվով երեք հաշվեքննությունների մասով Հաշվեքննիչ պալատի կողմից նյութեր են տրամադրվել: Իրավապահ մարմինների հետ վերջին 4 տարիների համագործակցության վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է հաղորդման Հավելված 2.-ում:

Հաշվեքննության կարծիքներ և եզրակացություններ: Հաշվեքննողներն կիրառել են հաշվեքննության երեք տեսակներ՝ «ֆինանսական», «համապատասխանության» և «կատարողականի»: Հաշվեքննության առաջադրանքներն իրականացնելիս կիրառվել են հաշվեքննության համար նախատեսված բոլոր ընթացակարգերը:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ²

Ֆինանսական	1
Համապատասխանության	8
Կատարողականի	5

Ֆինանսական և համապատասխանության հաշվեքննությունների արդյունքներով «դրական եզրահանգում» հաշվեքննության կարծիք որևէ հաշվեքննությամբ չի տրամադրվել: 8 հաշվեքննությունների մասով տրամադրվել է «ոչ լիարժեք եզրահանգում» հաշվեքննության կարծիք այսինքն՝ հայտնաբերվել են էական խեղաթյուրումներ, դրանց հետևանքները համատարած չեն, և հաշվետվություններն

² Վիճակագրության մեջ ներառված չեն պետական գաղտնիք պարունակող և ԵԱՏՄ համատեղ հաշվեքննությունների տեսակները

էականորեն խեղաթյուրված են, կամ հայտնաբերվել են էական խեղաթյուրումներ, դրանց հետևանքները համատարած չեն, և անհնար է ստանալ բավարար տեղեկատվություն հաշվեքննություն իրականացնելու համար:

Կատարողականի հաշվեքննություններով ներկայացվում են «տնտեսման» և(կամ) «օգտավետության» (ծախսային արդյունավետություն) և (կամ) «արդյունավետության» (նպատակային արդյունավետություն) սկզբունքների պահպանման վերաբերյալ հաշվետվություններ:

2020 թվականի կատարողականի հաշվեքննության հաշվետվություններում ներկայացված կատարողականի հաշվեքննության սկզբունքների չպահպանման վիճակագրությունն ամփոփ ներկայացված է ստորև.

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐ

Տնտեսման	3
Օգտավետության	4
Արդյունավետության	4

Հաշվեքննությամբ ներկայացված առաջարկություններ: Բացահայտված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների և ռիսկեր պարունակող դեպքերի վերացման և կանխարգելման, ինչպես նաև աշխատանքների արդյունավետության բարձրացման համար հաշվեքննության, ստուգման օբյեկտներին, ՀՀ կառավարությանը և այլ մարմիններին ներկայացվել են ընդհանուր թվով 192 առաջարկություն, որոնք բնութագրական հատկանիշներով կարելի է բաժանել երեք տեսակի՝ համակարգին միտված, արդյունքին միտված և խնդրին միտված:

Համակարգին միտված առաջարկությունները նպատակ են հետապնդում բարելավելու կառավարման, ֆինանսական, իրավական համակարգերի գործունեության արդյունավետության բարձրացումը: Հաշվեքննիչ պալատի կողմից 2020 թվականի տարեկան ծրագրով իրականացված հաշվեքննությունների արդյունքում ներկայացվել է համակարգին միտված 59 առաջարկություն:

Արդյունքին միտված առաջարկությունները նպատակ են հետապնդում բարելավելու ծրագրերը և ծառայությունները նպատակներին և ակնկալվող արդյունքներին հասնելու համար: Հաշվեքննիչ պալատի կողմից 2020 թվականի տարեկան ծրագրով իրականացված հաշվեքննությունների արդյունքում ներկայացվել է արդյունքին միտված 50 առաջարկություն:

Խնդիրների բացահայտմանը և լուծմանը միտված առաջարկությունների նպատակը հաշվեքննության արդյունքում բացահայտված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների վերացումը կամ շտկումն է: Հաշվեքննիչ պալատի նույն ժամանակահատվածում ներկայացվել է խնդիրներին միտված 83 առաջարկություն:

Հաշվեքննության գործիքակազմ: Տարեկան հաղորդման մեջ ներկայացված բոլոր հաշվեքննությունների ընթացիկ եզրակացությունները կազմվել են՝ հիմք ընդունելով հաշվեքննության ընթացքում հաշվեքննողների կողմից կազմված հաշվեքննության (ստուգման) արդյունքների վերաբերյալ արձանագրությունները: Բոլոր ուղղություններով կազմվել է հաշվեքննության 35 արձանագրություն, որից 3-ը՝ գաղտնի, ինչպես նաև իրավաբանական անձանց մոտ ստուգման 7 արձանագրություն: Դրանք, համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի, ամբողջությամբ ներկայացվել են հաշվեքննության (ստուգման) օբյեկտների ղեկավարներին: Վերջիններիս կողմից ներկայացվել են առարկություններ և բացատրություններ: Առարկությունները որոշ դեպքերում իրենց բնույթով եղել են մեկնաբանություններ և բացատրություններ արձանագրված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների վերաբերյալ: Հաշվեքննիչ պալատի կողմից ընդունված առարկությունները հաշվի են առնվել ընթացիկ եզրակացությունների մշակման գործընթացում:

Հաշվեքննողների գործողությունները հաշվեքննության (ստուգման) օբյեկտների կողմից չեն բողոքարկվել:

2020 թվականի գործունեության ծրագիրը կատարվել է Հաշվեքննիչ պալատի հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով: Հաշվեքննիչ պալատը որոշ դեպքերում պայմանագրային կարգով հաշվեքննության գործընթացում ներգրավել է համապատասխան բնագավառի, ինչպես նաև հաշվեքննության և ստուգման վերաբերյալ հատուկ մասնագիտական գիտելիքներ ունեցող մասնագետներ և փորձագետներ:

Հաշվեքննության ընթացքում հաշվեքննողները ղեկավարվել են հաշվեքննության իրականացման համար «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, միաժամանակ, չարգելված դեպքերում կիրառել են Բարձրագույն հաշվեքննիչ մարմինների միջազգային ստանդարտներով նախատեսված հաշվեքննության հատուկ գիտելիքներ:

Հաշվեքննության ողջ գործընթացը, համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի պահանջների, հաշվեքննողների կողմից փաստաթղթավորվել է: Հաշվեքննության արդյունքները ձեռք են բերվել անաչառ և համակողմանի տեղեկատվության և փաստերի հիման վրա: Տրված բոլոր գնահատականները հիմնված են պատշաճ ապացույցների վրա: Հաշվեքննիչ պալատի և հաշվեքննության որակն ապահովելու նպատակով Հաշվեքննիչ պալատի նախագահի կողմից ապահովվել են հաշվեքննության գործընթացում գործող հիերարխիկ շղթայի համար (հաշվեքննող - հաշվեքննության առաջադրանքի ղեկավար - հաշվեքննություն իրականացնող ստորաբաժանումը համակարգող պալատի անդամ - հաշվեքննիչ պալատ) նախատեսված ներքին հսկողության ընթացակարգերը:

Հաշվեքննիչ պալատն իր գործունեության ընթացքում ամբողջությամբ հետևել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով սահմանված «քաղաքական չեզոքության» սկզբունքի պահանջներին: Սույն տարեկան հաղորդումը, ինչպես նաև բոլոր ընթացիկ եզրակացությունները զերծ են որևէ

«որակումից», որը կարող է վերաբերել բացահայտված անհամապատասխանություններին և խեղաթյուրումներին, ինչպես նաև զերծ են որևէ «կանխատեսումից», որը կարող է առնչվել բացահայտված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների հետևանքներին:

ՄԱՍ 1. ՌԻՍԿԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննիչ պալատը տարեկան հաղորդման մեջ արտացոլում է հաշվեքննության առավել ուշագրավ արդյունքները, իսկ հաշվեքննության բոլոր մանրամասները ներկայացված են ընթացիկ եզրակացություններում, որոնք հրապարակված են Հաշվեքննիչ պալատի պաշտոնական կայքում: Այս մոտեցումը նպատակ ունի Հաշվեքննիչ պալատի տարեկան հաղորդումն անհարկի չձանրաբեռնել, դարձնել մատչելի, դրանում ներառել միայն էական նշանակության տեղեկություններ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննության օբյեկտը		
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն		
Հաշվեքննության կատարման ժամկետը	Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	
2020 թվականի հունիսի 8-ից մինչև 2021 թվականի մարտի 31-ը	2019թ. հունվարի 1-ից մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ը	
Հաշվեքննության առարկան	Հաշվեքննության մեթոդաբանությունը	
Ֆինանսատնտեսական գործունեություն	կատարողականի հաշվեքննություն Հաշվեքննության շրջանակներում իրականացվել են ստուգումներ «Խարբերդի մասնագիտացված մանկատուն», «Երևանի Մարի Իզմիրյանի անվան մանկատուն», «Երևանի թիվ 1 տուն ինտերնատ» և «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ներում	
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
21	-	37
Համառոտ եզրակացություն		Հղումը
Չեն պահպանվել տնտեսման և արդյունավետության սկզբունքները*		

Ծանոթություն: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (հաշվեքննության ենթարկված մասով), ինչպես նաև ենթակա՝ «Խարբերդի մասնագիտացված մանկատուն», «Մարի Իզմիրյանի անվան մանկատուն», «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» և «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից 2019 թվականին իրականացված ֆինանսատնտեսական գործունեությունը չի արտացոլում ձեռք բերվող ռեսուրսների

ուղղված ծախսերը՝ սահմանված ժամկետի, որակի, քանակի, ծավալի պահպանմամբ և համարժեք հարուցմամբ նվազագույնի հասցնելու բավարար մակարդակի գործողություններ:

Ուշագրավ փաստեր³

«Խարբերդի մասնագիտացված մանկատուն», «Մարի Իզմիրյանի անվան մանկատուն», «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» և «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ներ

- Նախարարության կողմից չի կատարվել Նշված ՊՈԱԿ-ներին դրամաշնորհի տրամադրման վերաբերյալ Պայմանագրերի 2.3.2 կետերի պահանջները, համաձայն որի «նախարարությունը պարտավոր էր կատարել առանձին միջոցառումների իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ»:
- Մի շարք մատակարարված ապրանքի քանակները կամ գերազանցել կամ թերակատարվել են պայմանագրերով սահմանված չափաքանակներին:
- Կազմակերպությունները գնումների պլանները, ինչպես նաև գնման հայտերը կազմելիս հաշվի չեն առել տարեսկզբի առկա ապրանքանյութական արժեքների մնացորդները, ինչը հնարավորություն կտար տնտեսելու ֆինանսական միջոցները և հնարավորինս բացառելու տարեվերջի զգալի մնացորդները:
- Մի շարք գնման առարկաների համար սահմանվել են այնպիսի պարամետրեր և պայմաններ, որոնք խիստ դժվարացնում, իսկ որոշ դեպքերում անգամ անհնարին դարձնում գնորդի կողմից առանց լաբորատոր փորձաքննության (որը սակայն չի պահանջվել) որոշելու ապրանքների համապատասխանությունը սահմանված չափանիշներին: Սակայն այդ ապրանքները ընդունվել են ու կատարվել են համապատասխան վճարումներ:
- Տնօրենների կողմից հաստատված հաստիքային միավորները չեն համապատասխանել ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ 1292-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչներին: Արդյունքում սահմանված չափորոշիչների համեմատ մի շարք հաստիքային միավորների մասով ավելի հաստիքներ է հաստատվել և միաժամանակ այլ հաստիքային միավորների մասով պակաս հաստիքներ է հաստատվել:
- Էական ռիսկ է պարունակում «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ում պայմանագրով սահմանված թվով 220 խնամվողի համար որոշ ապրանքատեսակների ձեռքբերման քանակը, մասնավորապես՝ եթե «Սվիտեր բրոյա 7-18 տարեկան երեխաների համար» գնվել է 300 հատ, ապա «Սպորտային հագուստ աղջկա»՝ 30 հատ, «Վարտիկ տղամարդու» 300 հատ, իսկ «Ձմեռային կոշիկ տղայի» 10 զույգ, «Ներքնակի երես փոքր» 20 հատ:
Ավելին, շահառուների հնարավոր առամնաբուժական սպասարկման ապահովման նպատակով բժշկական պարագաների մասով ձեռք են բերվել նաև՝ «Ավազե բորեր գնդաձև, կոնաձև, գլանաձև» ընդամենը 15 հատ, «Անկերային շտիֆտներ»

³ Հաշվեքննիչ պալատի 2021թ. մարտի 30-ի թիվ 83-Ա որոշմամբ՝ հաշվեքննության նյութերն ամբողջությամբ ուղարկվել է ՀՀ գլխավոր դատախազություն

ընդամենը 10 հատ, որոնք բաժանելով 220 շահառուների թվին ստանում ենք տարեկան կտրվածքով թվով 15 շահառուին բաժին ընկնող ընդամենը 1 հատ «ալմագե բոր», իսկ թվով 22 շահառուին 1 հատ «անկերային շտիֆտ»:

• «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ում և «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ում սանիտարահիգիենիկ պարագաների օգտագործման նվազագույն չափորոշիչները հիմնականում չեն պահպանվել: Համանմանության սկզբունքով, համեմատվել է ՌԴ-ի Սևաստոպոլ քաղաքի բնակչության աշխատանքի և սոցիալական պաշտպանության դեպարտամենտի 2019 թվականի հունիսի 21-ի թիվ 224 հրամանով հաստատված նույնապրոֆիլ հաստատությունների համար սահմանված անձնական հիգիենայի պարագաների անվանացանկի և չափաքանակների հետ: Արդյունքում արձանագրվել է, որ որոշ անձնական հիգիենայի պարագաների մասով շահառուների համար ձեռքբերված/հատկացվածը էականորեն պակաս է նույնապրոֆիլ ռուսական ընկերությունից: Մասնավորապես «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ում ատամի մածուկի պահանջը ապահովված է եղել 14,9%-ով, ատամի խոզանակի պահանջը ապահովված է եղել 50,4%-ով, սափրվելու մեկանգամյա ածելիի պահանջը ապահովված է եղել 10,0%-ով, օճառի պահանջը ապահովված է եղել 20,3%-ով:

• 01.01.2020թ-ի դրությամբ «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգում հաշվառված անձանց տվյալների և «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի շահառուների տվյալների համադրման արդյունքում նույնականացված անձանց տվյալների ուսումնասիրությամբ արձանագրվեց, որ թվով 4 շահառուներ ստանում են հաշմանդամության նպաստներ, մինչդեռ ՀՀ կառավարության 05.05.2011թ-ի թիվ 665-Ն որոշմամբ սահմանված կարգի հավելված 9-ի 4-րդ գլխի 20-րդ կետի համաձայն շահառուներին կենսաթոշակ չպետք է տրամադրվեր:

• 07.12.2020թ-ի դրությամբ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված ՏԲ-ում ընդգրկված անձանց տվյալների և Կազմակերպության աշխատակիցների տվյալների համադրման արդյունքում նույնականացված անձանց ուսումնասիրությամբ պարզվեց, որ «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ում թվով 45 աշխատակիցներ հանդիսանում են նաև այլ Կազմակերպությունների աշխատակիցներ, ընդ որում, թվով 14 աշխատակիցներ միաժամանակ աշխատում են 3 և ավելի գործատուների մոտ, «Մարի Իգմիրյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ում թվով 19 աշխատակիցներ հանդիսանում են նաև այլ Կազմակերպությունների աշխատակիցներ, որոնցից թվով 6 աշխատակիցներ միաժամանակ աշխատում են թվով 3 և ավելի գործատուների մոտ, «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ում թվով 30 աշխատակիցներ հանդիսանում են նաև այլ կազմակերպությունների աշխատակիցներ, որոնցից թվով 9 աշխատակիցներ միաժամանակ աշխատել են թվով 3 և ավելի գործատուների մոտ, «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ում՝ թվով 45 աշխատակիցներ հանդիսանում են նաև այլ կազմակերպությունների աշխատակիցներ:

• Որոշ ամիսներին մեկ խնամվողի հաշվարկով մեկ օրվա ծախսված սննդի գումարը գերազանցել է սահմանված առավելագույն չափաքանակները, որի արդյունքում գերազանցող ընդհանուր գումարը կազմել է Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ»

ՊՈԱԿ-ում՝ 9,818.9 հազ. դրամ, «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ում՝ 2,616.6 հազ. դրամ և այլն:

- «Մարի Իզմիրյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ում, առանց Նախարարության հետ համապատասխան գործընթացները կատարելու, Կազմակերպության կողմից իրականացվել է ֆինանսական միջոցների հողվածափոխություն, որի արդյունքում 9,036.1 հազ. դրամով աճել է Կազմակերպության պարզևատրման ֆոդը:

- 2019 թվականի ֆինանսական հաշվետվությունները պատրաստելուց առաջ ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը ապահովելու նպատակով «Մարի Իզմիրյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ում ակտիվների և պարտավորությունների գույքագրում չի անցկացրել:

- «Մարի Իզմիրյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ում հաշվապահական հաշվառումը վարվել է «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի մի շարք հոդվածների անտեսմամբ, ինչը հանգեցրել է կրեդիտորական պարտքերի, տույժերի և տուգանքների գոյացմանը:

- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի՝ Նախարարության ենթակա կազմակերպությունների մասով աշխատողներին 14-օրյա հերթափոխով աշխատանքի ներգրավման վերաբերյալ առ 11.06.2020թ.-ի հանձնարականի կատարման շրջանակներում կնքված բոլոր համաձայնագրերում «Մարի Իզմիրյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի տնօրենի անունը նշված չլինելու պարագայում, հաշվետու ժամանակաշրջանի հունիս-դեկտեմբեր ամիսներին տնօրենի համար հաշվարկվել և վճարվել է շուրջ 50% պարզևավճար՝ ընդամենը 1,048.6 հազ. դրամ:

- «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ում փաստացի խնամվողների թվաքանակի շարժի վերաբերյալ ներկայացված հաշվետվություններում նշված խնամվողների թվաքանակի և մենյու-պահանջագրերով ամսական կտրվածքով կերակրվողների քանակի միջև առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես դեկտեմբեր ամսին մենյու-պահանջագրերով կերակրվել է 7,069 խնամվող, սակայն նախարարություն ներկայացվել է 7,138 մարդ/օր, այսինքն, 69 մարդ/օրով ավելի:

- 2019 թվականի դեկտեմբեր ամսին «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի աշխատակիցներին վճարվել է պարզևատրում, որի հիմնական ֆինանսական աղբյուր է հանդիսացել մի շարք ծախսային հոդվածների չօգտագործված ֆինանսական միջոցների վերաբաշխումը: Գոյացած ազատ միջոցները հանդիսացել են ոչ թե տնտեսման արդյունքում գոյացած գումար, այլ սխալ պլանավորման արդյունք՝ պարզևատրմանն ուղղված հիմնական գումարը գոյացել է խնամվողների հանդերձանքի և դեղորայքի թերի ձեռքբերումների արդյունքում:

- ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի «Ծերերի և հաշմանդամների խնամքի և սոցիալական սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» N 730-Ն որոշման հավելված 4-ով նախատեսված է խնամվողների հագուստի և անկողնային պարագաների թվով 40 անվանում, սակայն «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ում գնումների հայտերով ներկայացրել էր վերոնշված ցանկից ընդամենը 14 անվանում՝ 3,665.9 հազ. դրամի, այն դեպքում, երբ նախահաշվով տվյալ պարագաների համար տարեսկզբին նախատեսվել էր 10,734.0

հազ. դրամ գումարի ծախս: Ընդ որում մի շարք դեպքերում նախարարության կողմից իրականացված մրցույթի արդյունքում միավորների գները ոչ թե նվազել է, այլ առանց որևէ հիմնավորման ավելացել:

- «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ում ավտոբուսային փոխադրումների ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի տեխնիկական բնութագրի, ինչպես նաև գնանշման հարցման հայտի մեջ նշված չէր, թե քանի անգամ և ինչ երթուղիով պետք է իրականացվեին ուղևորափոխադրումների երթուղիները և հեռավորությունները, նստատեղերի քանակը, այն դեպքում երբ հաշվի առնելով տրամադրվող վառելիքի կտրոնների արժեքը, տրանսպորտին հատկացվող օրական միջին գումարը կազմել է շուրջ 10 հազ. դրամ:

- «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի կողմից 2019 թվականի կարիքների համար ձեռքբերված դեղերի և բուժգործիքների քանակների ուսումնասիրությունից արձանագրվել է, որ կատարվել է ոչ ճիշտ պլանավորում. մի շարք դեպքերում 2019 թվականին ձեռք է բերվել ու տարվա ընթացքում օգտագործվել է այնքան քանակի դեղեր և բուժգործիքներ, ինչքան որ ի սկզբանե եղել է Կազմակերպության պահեստում 2019 թվականի սկզբի մնացորդում:

- «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի թվով 11 շահառուի անվամբ կատարվել է անշարժ գույքի գործարք՝ որից թվով 10 դեպքերում առանց խնամակալի հաստատության տեղեկության /համաձայն կազմակերպության տնօրենի հայտարարության/, մինչդեռ այն համաձայն գործող օրենսդրության պահանջների պետք է իրականացվեր խնամակալի միջոցով:

«Անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ» ծրագրի շրջանակներում «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամին դրամաշնորհի ձևով տրամադրված ֆինանսական աջակցության օգտագործման մասին» պայմանագրերի կատարման մասով

- 2019 թվականի ընթացքում Կազմակերպության կողմից կացարան տրամադրված թվով 177 անօթևան անձանցից թվով 116 անօթևաններ խնամվել էին «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված 90 օրից ավելի: Արդյունքում կազմակերպությունը 22038 մարդ/օր-ով ավելի է ծառայություն մատուցել, որի համար փոփոխուն ծախսերի մասով 16,775.5 հազ. դրամի չափով ավելի սննդի գումար է ծախսվել:

- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ փաստացի մատուցված ծառայությունը 61,6%-ով պակաս է մատուցվել Պայմանագրով նախատեսվածից, որի կապակցությամբ ըստ պայմանագրի պետք է կատարվեր համապատասխան 20%-ի չափով նվազեցում, որը չի իրականացվել: Արդյունքում, Նախարարության կողմից հաստատուն ծախսերի մասով առնվազն 4,978.0 հազ. դրամ չհիմնավորված գումար է փոխանցվել Կազմակերպությանը:

- Հաշվետու ժամանակաշրջանում թվով 59 անօթևանների անհատական տվյալները չեն համադրվել Բնակչության պետական ռեգիստրի տվյալների բազաներում, այն դեպքում երբ ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 1069-Ն որոշմամբ հաստատված Հավելված 4-ի 23-րդ կետի համաձայն՝ «Ժամանակավոր

կացարան տրամադրող կազմակերպությունն իր միջոցների հաշվին կազմակերպում է որոշակի բնակության վայր չունեցող անձի՝ բնակչության պետական ռեգիստրում հաշվառվելու գործընթացը՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում»:

«Միայնակ տարեցներին, հաշմանդամներին տնային պայմաններում և տարեցների ցերեկային խնամքի կենտրոնում սոցիալական սպասարկում» ծրագրի շրջանակներում «Առաքելություն Հայաստան» բարեգործական հիմնադրամին դրամաշնորհի ձևով տրամադրված ֆինանսական աջակցության օգտագործման մասին» պայմանագրերի կատարման մասով

• ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 1112-Ն որոշմամբ հաստատված հավելված 2-ով սահմանված 35-րդ և 69-րդ կետերի պահանջներին չհամապատասխանող գործողությունների արդյունքում, բնակության վայրի տարածքը սպասարկող սոցիալական աջակցության տարածքային գործակալության կամ բաժնի ղեկավարի որոշման հիման վրա, Կազմակերպությունում խնամք են ստացել թվով 1,038 անձ ավելի (օրինակ՝ թվով 386 «Փյունիկ» համակարգում չհաշվառված անձինք, թվով 241 անչափահաս երեխաներ կամ թվով 152 աշխատանքով ապահովված անձինք և այլն), որոնք չպետք է ընդգրկվեին ուսումնասիրվող Ծրագրում, որի արդյունքում էլ Նախարարության կողմից հաստատուն ծախսերի մասով առնվազն 30,400.2 հազ. դրամով ավելի գումար է փոխանցվել Կազմակերպությանը:

• Արձանագրվել է անհամապատասխանություն՝ ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի «Ծերերի և հաշմանդամների խնամքի և սոցիալական սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» թիվ 730-Ն որոշմամբ հաստատված հավելված 6-ով սահմանված «Սոցիալ-վերականգնողական ցերեկային կենտրոնում հաճախորդներին հատկացվող սննդամթերքի» նվազագույն չափորոշիչների և Կազմակերպությունում հատկացվող սննդամթերքի չափաքանակների միջև:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից իրականացվող «ՀՀ մանկատան շրջանավարտներին բնակարանի ապահովում» միջոցառման մասով

• Շահառուների սեփականության իրավունքի պետական գրանցման վերաբերյալ 01.12.2020թ. դրությամբ նախարարությունը չի տրամադրել Ծրագրի շրջանակներում բնակարանների գնման վկայագրերի (ԲԳՎ) միջոցով շրջանավարտների կողմից ձեռք բերված բնակարանների իրենց անունով սեփականության իրավունքի պետական գրանցման վերաբերյալ որևէ տեղեկատվություն:

• ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից 14.01.2021թ.-ի թիվ ԴՍ/121-2021 գրությամբ տրամադրված տեղեկատվության վերլուծության արդյունքում արձանագրվել են դեպքեր, երբ շրջանավարտները կնքել են առուվաճառքի պայմանագրեր, սակայն 30-օրյա ժամկետում չեն իրականացրել սեփականության իրավունքի պետական գրանցումներ, որոնցից թվով 7 դեպքում համաձայն «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ

մասի պահանջների անվավեր են և առոչինչ: Տվյալ պարագայում վճարված գումարների՝ շուրջ 44,1 մլն դրամի հետագա տնօրինումը անորոշ է:

- Նախարարի առ 26.11.2019թ.-ի թիվ 163-Ա/1 հրամանի 2-րդ կետի պահանջով Հանձնաժողովին հանձնարարվել է մինչև 30.11.2019 թվականը զանգվածային լրատվամիջոցներով իրազեկել մանկատան շրջանավարտներին ԲԳՎ-ների տրամադրման կարգի և պայմանների մասին, սակայն Հանձնաժողովի կողմից զանգվածային լրատվամիջոցներով որևէ իրազեկում չի իրականացվել, ինչը ստեղծել են անհավասար պայմաններ այն շրջանավարտների համար, ովքեր օբյեկտիվորեն կարող են տեղեկացված չլինեն ԲԳՎ-երի տրամադրման գործընթացի միջոցառման մասին:

- Արձանագրվել է դեպք, երբ շրջանավարտի դիմումում նշված տվյալները լիարժեք և ամբողջական չուսումնասիրելով, նախարարության կողմից մերժվել է ԲԳՎ տրամադրումը, սակայն նույն անձի նույնական տվյալները հետագայում կրկին ուսումնասիրելուց հետո, այնուամենայնիվ, տրամադրվել է բնակարանի գնման վկայագիր:

- 24.07.2020թ.-ի դրությամբ ԲԳՎ տրամադրումը մերժված անձանց թիվը կազմել է 157, որից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից, անորոշ մեթոդիկայով ընտրվել է թվով 24 անձ, որոնց ԲԳՎ տրամադրելու նպատակով Նախարարությունը 24.07.2020թ.-ին ՀՀ կառավարություն է ներկայացրել «ՀՀ կառավարության 07.11.2019թ. թիվ 1555-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» որոշման նախագիծը, որը 30.07.2020 թվականին հաստատվել է ՀՀ կառավարության թիվ 1269-Ն որոշմամբ: Արդյունքում վերոնշյալ թվով 24 անձ անձանց տրամադրվել է բնակարանի գնման վկայագրեր՝ անհավասար և ոչ միատեսակ մոտեցում է ցուցաբերվել մերժում ստացած մյուս շրջանավարտների իրավունքների հանդեպ:

- Հանձնաժողովի որոշումներով թվով 2 քաղաքացիների տրամադրվել է բնակարանի գնման վկայագրեր, այն դեպքում երբ վերջիններս ք. Գավառի մանկատանից Լիճքի գիշերօթիկ դպրոց տեղափոխվել են 1987 թվականի հունվարի 12-ին (ՀԽՍՀ): Համանման հանգամանքներում բնակարանի գնման վկայագիր ստանալու խնդրանքով դիմած թվով 3 քաղաքացու ԲԳՎ տրամադրումը մերժվել է: Նշված դեպքերում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ցուցաբերվել է անհավասար և տարբերակված մոտեցումներ միանման փաստական հանգամանքների նկատմամբ, ինչը արգելվում է «Վարչարարության հիմունքների եվ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթով:

- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը 01.12.2020թ.-ի դրությամբ չի իրականացրել նոտարների դեպոզիտային հաշիվներին 26.12.2019թ.-ին փոխանցված գումարներից ՀՀ քաղաքացիներին իրականացված փաստացի վճարումների ու դեպոզիտային հաշիվներին առկա մնացորդների հստակ հաշվառում:

- Հանձնաժողովի 02.12.2019թ.-ի նիստում ընդունված որոշմամբ հաստատվել է, որ Նոտարների ընտրությունը պետք է կատարվի միայն Կառավարական 3-րդ մասնաշենքից 1 կմ հեռավորությամբ շառավղով տեղակայված Նոտարական գրասենյակների շրջանակից, սակայն տվյալ որոշումը արդարացված չէ և ըստ

էութեան չի համապատասխանում ՀՀ կառավարության առ 07.11.2019 թվականի թիվ 1555-Ն որոշման պահանջներին: Հանձնաժողովը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Ծրագրի շահառու հանդիսացող ՀՀ մանկատան շրջանավարտները բնակվում են ՀՀ ողջ տարածքում և որոշման այդ պահանջը լրացուցիչ ֆինանսական խոչընդոտներ է առաջացրել շահառուների համար:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից իրականացվող «Լսողական սարքեր և հաշմանդամի սայլակներ ձեռքբերելու համար հավաստագրերի տրամադրում», ինչպես նաև «Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցող տեխնոլոգիաներով ապահովում և դրանց վերանորոգում» ծրագրերի մասով

- Արձանագրվել է դեպք, երբ քաղաքացին 10.08.2019թ. մահացել է, սակայն 12.08.2019թ.-ին «Պլանտա Սանա» ՍՊԸ-ից ստացել է թվով 2 հատ «պրոթեզի կոշիկներ» աջակցող միջոցներ (2x13,500 դրամ արժողությամբ), ավելին՝ «Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման տեղեկատվական ենթահամակարգ»-ում առկա է շահառուի կողմից 12.08.2019թ.-ին լրացված դիմում աջակցող միջոց ստանալու վերաբերյալ և շահառուի անձնական քարտ (լրացվում է աջակցող միջոցը ստանալուց):

- ՀՀ ԱԱԾ ՍԷԿՏ համակարգից 15.01.2021թ.-ին թիվ 216/3-23 գրությամբ ստացված տվյալների համադրման արդյունքում արձանագրվել է թվով 67 դեպք, երբ շահառուները աջակցող միջոցները ստանալուց, ըստ համակարգի տվյալների բացակայել են ՀՀ տարածքից: Մասնավորապես թվով 40 շահառու, որոնք ՀՀ սահմաններից դուրս են եկել մինչև 2019 թվականը, սակայն նշված տարեթվին ստացել են համապատասխան աջակցող միջոցներ: Իսկ թվով 27 շահառու, որոնք 2019 թվականի ընթացքում կատարել են մեկից ավելի սահմանահատումներ, աջակցող միջոցները ստանալու օրվա դրությամբ չեն գտնվել ՀՀ տարածքում:

- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն աջակցող միջոցների տրամադրման վերաբերյալ տեղեկանում է կազմակերպությունների կողմից ներկայացված հաշվետվությունների միջոցով և փաստացի որևէ կերպ չի մասնակցում շահառուներին հատկացվող աջակցող միջոցների տրամադրման գործընթացին կամ դրա վերահսկմանը: Ավելին, որևէ կերպ չի իրականացվում կազմակերպությունների կողմից տրամադրված աջակցող միջոցների համապատասխանության գնահատում՝ տեխնիկական բնութագրերով սահմանված նվազագույն պահանջներին:

- «Վերին և ստորին վերջույթների պրոթեզներ» աջակցող միջոցների հավաստագրերի արժեքների համար հիմք են հանդիսացել միայն «Ինտերօրթ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված գները և նրա կողմից ներկայացված գնային արժեքների գնագոյացումները, իսկ «Սրունքի էնդոսկելիտար պրոթեզ կաշվից ընդունիչով» աջակցող միջոցի համար էլ առանց հիմնավորման սահմանվել է 59.0 հազ. դրամով ավելի բարձր հավաստագրի արժեք, քան 2018թ.-ին մրցույթներին ներկայացրած գները: Ընդհանուր առմամբ աջակցող միջոցների հավաստագրերի արժեքների համար հիմք հանդիսացած 2018թ. կայացած գնման ընթացակարգերի արդյունքով ձևավորված գները չեն եղել մրցակցային ընթացակարգի արդյունքում

ծնավորված գներ: Ավելին, 3 տեսակի աջակցող միջոցների հավաստագրերի արժեքները ավելի բարձր են սահմանվել, քան մրցույթին առաջարկված գները:

• ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը աջակցող միջոցների հավաստագրերի արժեքները սահմանելիս չի ունեցել որևէ հիմնավոր գնագոյացման մեթոդիկա, որի առկայության պարագայում հնարավոր կլիներ ունենալ ավելի արժանահավատ հավաստագրերի արժեքներ: Ավելին, չեն կատարվել համացանցային շուկայի լրացուցիչ ուսումնասիրություններ, ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ ԵԱՏՄ անդամ երկրներում գործող գների վերաբերյալ, որի արդյունքում կծնավորվեր ավելի հիմնավոր արժեքներ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից իրականացված գնման գործընթացի վերաբերյալ


• Կենտրոնացված կարգով էլեկտրոնային եղանակով Նախարարության համակարգում գործող պետական ոչ առևտրային կազմակերպությունների կարիքների համար (սննդամթերք, տնտեսական, սանհիգիենիկ և մաքրիչ նյութեր, հանդերձանք և անկողնային պարագաներ, ծխախոտ և վառելիք) կայացած 73 մրցույթներում կնքվել են 1,034,754.2 հազ. դրամի պայմանագրեր: Ուշագրավ է, որ նշված պայմանագրերից շուրջ 721,220.0 հազ. դրամը կամ 70%-ը բաժին է ընկնում թվով 5 առևտրային ընկերության:

• Կենտրոնացված կարգով էլեկտրոնային եղանակով իրականացված էլեկտրոնային աճուրդի արդյունքում նախարարության գլխավոր քարտուղարի և առևտրային ընկերությունների (մատակարարների) միջև կնքված մի շարք պայմանագրերում փոփոխությունները հաստատվել է ոչ թե պատվիրատուի ղեկավարի, այլ կազմակերպությունների տնօրենների կողմից՝ մինչև սահմանված կարգով այդ լիազորությունը ստանձնելը:

• ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ինչպես նաև հաշվեքննության ենթարկված Կազմակերպություններում կամ թերի եղել, կամ առհասարակ բացակայել է գնումների ոլորտը կանոնակարգող ՀՀ օրենսդրությամբ պահանջված գնումների պլանները: Բազմաթիվ դեպքերում դրանք կազմվել են սխալներով, չեն ներկայացրել իրական պահանջարկի ծավալներն ու ժամկետները:

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԱՅԱՆՏԱՌ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննության օբյեկտը	
ՀՀ բնապահպանության նախարարության «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ)	
Հաշվեքննության կատարման ժամկետը	Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը

2019թ. մայիսի 22-ից մինչև 2021թ. փետրվարի 26-ը		2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ը	
Հաշվեքննության առարկան		Հաշվեքննության մեթոդաբանությունը	
Ֆինանսատնտեսական գործունեություն		համապատասխանության հաշվեքննություն	
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ	
1	5	10	
Հաշվեքննության կարծիք			Հղումը
«ոչ լիարժեք եզրահանգում» կարծիք			

Ուշագրավ փաստեր⁴

Անտառահատումներ և փայտանյութ

1. Բնափայտի մթերման տարեկան նորման (հաշվարկային հատատեղ) սահմանելու համար հիմք են հանդիսանում՝ անտառաշինական նախագծերի հիման վրա կազմված անտառների կառավարման պլանները, անտառաշինական նախագծերի բացակայության կամ ժամկետանց ճանաչվելու դեպքում՝ մասնագիտական հանձնաժողովների փաստացի ուսումնասիրությունները և եզրակացությունները, անտառների պետական հաշվառման և գույքագրման տվյալները: ՊՈԱԿ-ի տարեկան առաջադրանքը մասնագիտական հանձնաժողովների կողմից հաստատվել և տարվա ընթացքում ենթարկվել է մի քանի փոփոխությունների (ավելացել են մի քանի անգամ): 2017թ.-ին անտառահատման տարեկան առաջադրանքը տարվա սկզբին կազմել է 10,780.0 խմ, այնուհետև փոփոխությունների արդյունքում ծավալը ավելացել և տարվա վերջին կազմել է 25,181.0 խմ: 2018թ.-ին տարեկան առաջադրանքը տարվա սկզբին կազմել է՝ 17,036.0 խմ, որն ավելացել և տարվա վերջին կազմել է 42,757.0 խմ:

2. ՀՀ գյուղատնտեսության և բնապահպանության նախարարների «Ոչ արտադրական նպատակներով անվճար թափուկ վառելիքայտի մթերման և բացթողման կարգը հաստատելու մասին» համատեղ հրամանով հաստատված կարգի 6-րդ կետի համաձայն՝ թափուկ փայտանյութի հավաքումը և տեղափոխումը իրականացվում է անտառային տնտեսություն վարող կազմակերպությունների կողմից տրված թափուկ փայտանյութի օգտագործման տոմսի հիման վրա (թափուկը անտառային հողի վրա ընկած, մահացած ծառերի մասեր կամ բներն են): Հաշվեքննությամբ պարզվեց, որ տրամադրվել են անտառահատման տոմսեր, որոնցում օգտագործման տեսակը նշվել է թափուկի հավաքում: Հստակ չէ,

⁴ Հաշվեքննիչ պալատի 2021թ. փետրվարի 25-ի թիվ 62-Ա որոշմամբ՝ հաշվեքննության նյութերն ամբողջությամբ ուղարկվել է ՀՀ գլխավոր դատախազություն

իրականում անտառահատման տոմսերում նշվածը վառելափայտ է (հատատեղի հաշվեգնահատման ցուցակներում թվարկված են ծառեր, բների հաստությունով, տեսակով և այլն), որի իրացման դեպքում պետք է վաճառք իրականացվի, թե՛ տվյալ ծավալները իրականում թափուկ էին, որոնց համար տրամադրվել են թափուկ փայտանյութի օգտագործման տոմսեր: Նման կերպ տրամադրվել է 27,065.0 խմ անտառահատման տոմսեր:

3. ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 24-ի Պետական անտառները և անտառային հողերն օգտագործման տալու կարգը սահմանելու մասին թիվ 806-Ն որոշման համաձայն՝ բնափայտ մթերելիս անտառնտնտեսությունները իրավասու են կնքելու 2 տիպի պայմանագիր՝ անտառատնտեսական աշխատանքների կատարման և ծառուտի առուվաճառքի, մինչդեռ հաշվեքննությամբ պարզվեց, որ մասնաճյուղերի կողմից 2017 թվականին կնքվել են պայմանագրեր, որոնց համաձայն գնորդները պարտավորվում են ինքնապատրաստման եղանակով գնել փայտանյութ: Նշված պայմանագրերի 2.1-րդ կետի համաձայն՝ մասնաճյուղը պարտավորվում է գնորդին տրամադրել անհրաժեշտ փայտանյութն իր կողմից հաստատված գնով՝ անտառում, իսկ գնորդը պարտավորվում է իր միջոցներով և իր հաշվին՝ անտառնտնտեսության աշխատակցի անմիջական հսկողության ներքո կատարել գնված փայտանյութի պատրաստումը, դուրս բերումը և տեղափոխումը: Արդյունքում, չպահպանելով ՀՀ կառավարության վերոնշյալ որոշման դրույթները, մթերվել է 30,111.0 խմ փայտանյութ:

4. ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 5-ի թիվ 142-Ն հրամանի համաձայն՝ անտառահատման և անտառային տոմսերը «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից տրամադրվում են «Անտառտնտեսություն» մասնաճյուղերին, որոնք էլ, իրենց հերթին, նույն կարգի համաձայն, լրացնում և տրամադրում են անտառօգտագործողներին: ՀՀ անտառային օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ անտառօգտագործողը ֆիզիկական և իրավաբանական անձն է, որն օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք է ձեռք բերել օգտվելու անտառի և անտառային հողերի օգտակար հատկություններից: Անտառահատման տոմսերի ուսումնասիրությունից պարզվեց, որ տոմսերը «Անտառտնտեսություն» մասնաճյուղի կողմից չեն տրամադրվել անտառօգտագործողներին, և որպես անտառօգտագործող նշվել են հենց «Անտառտնտեսություն» մասնաճյուղը (օրինակ՝ Արծվաբերդ մասնաճյուղի կողմից 2017 թվականի նոյեմբերի 13-ին դուրս գրված թիվ 00999 անտառահատման տոմսը՝ 59 ծառ, 252.77 խմ, Նոյեմբերյան մասնաճյուղի կողմից 2018 թվականի ապրիլի 20-ին դուրս գրված թիվ 01206 անտառահատման տոմսը՝ 424 ծառ, 1,011.8 խմ):

5. ՀՀ բնապահպանության, ՀՀ գյուղատնտեսության և ՀՀ տարածքային կառավարման նախարարների՝ 2011 թվականի նոյեմբերի 29-ի համատեղ հրամանով սահմանվել է «Ոչ արտադրական նպատակներով անվճար թափուկ վառելափայտ ձեռք բերելու արտոնություն ստացող՝ անտառների անմիջական հարևանությամբ գտնվող բնակավայրերի» ցանկը: Գուգարք մասնաճյուղում անվճար թափուկ վառելափայտի բաշխման փաստաթղթային ուսումնասիրությամբ պարզվեց, որ անտառնտնտեսության կողմից 2017 և 2018 թվականներին համայնքներին անվճար բաժանված 579.8 խմ թափուկ վառելափայտից, 219.0 խմ

վառելափայտը հատկացվել է Հրամանով սահմանված ցանկում նշված համայնքներին:

6. Առկա են մի շարք անհամապատասխանություններ՝ անտառահատման տոմսերում և բնափայտի վաճառքի հաշվետվություններում նշված բնափայտի հատման և փաստացի վաճառքի քանակությունների մասով:

7. Ուսումնասիրելով մասնաճյուղերի սպասարկման ոլորտում գտնվող անտառային հողերի արբանյակային պատկերները և արբանյակային պատկերների վերծանման արդյունքում փոփոխված տարածքների (ստացված տեղեկատվության համաձայն՝ փոփոխված տարածքները իրենցից ենթադրում են՝ հատումներ, քամատապա/ձյունակոտոր ծառեր, հիվանդություններով ու վնասատուներով վարակված օջախներ) վերաբերյալ տեղեկատվությունը, այն համադրելով տվյալ մասնաճյուղերի կողմից տրամադրված անտառահատման տոմսերի հետ (ըստ առանձին քառակուսիների և հատվածների), պարզվեց որ առկա են մի շարք դիսկալին հատվածներ: Արծվաբերդի, Գուգարքի, Եղեգնուտի, Նոյեմբերյանի անտառտնտեսություններ ընտրանքային իրականացված այցելությունների ընթացքում պարզվեց, որ Արծվաբերդի, Գուգարքի, Եղեգնուտի մասնաճյուղերի համապատասխան քառակուսիների հատվածներում առկա էին բազմաթիվ հատված ծառեր, որոնք հաշվառված չէին որպես ապօրինի հատումներ:

Ֆինանսներ

1. Չի ապահովվել ՊՈԱԿ-ի դրամաշնորհի պայմանագրերով սահմանված կատարողական ցուցանիշները: Կատարողական ցուցանիշները ըստ էության վերաբերում են անտառփախտման հայտնաբերման դեպքում կազմված արձանագրությունների թվին, այլ ոչ թե՛ իրավախախտման արդյունքում ապօրինի հատված ծառերի քանակին:

2. 2017-2018 թվականներին կնքված դրամաշնորհի պայմանագրերի 2.4.7 կետի համաձայն՝ ՊՈԱԿ-ը պարտավոր է ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան: Մինչդեռ ՊՈԱԿ-ի կողմից 2017-2018 թվականներին առանց նշված ընթացակարգը պահպանելու իրականացվել է թվով 1,030 ձեռքբերում՝ 227,642.5 հազ. դրամի չափով, որի դիմաց վճարվել է 198,493.2 հազ. դրամ:

3. Հաշվեքննության ժամանակահատվածում 83 աշխատակից ընհանուր 2,022 աշխատանքային օր գտնվել են ՀՀ տարածքից դուրս, սակայն աշխատաժամերի հաշվարկման տեղեկագրերում իրականացվել է բացակայած օրերի համար աշխատաժամերի հաշվարկ, առանց համապատասխան փաստաթղթային հիմնավորումների, որի համար վճարվել է 9,216.2 հազ. դրամ:

Անտառային հողերի վարձակալություն

1. ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 24-ի թիվ 806-Ն որոշման հավելվածի 27-րդ կետի համաձայն՝ հայտատուները հանգստի և զբոսաշրջության

նպատակներով անտառների կամ անտառային հողերի վարձակալության իրավունք ստանալու համար հայտի հետ միասին լիազորված մարմին են ներկայացնում անտառօգտագործման ծրագիր, որն ի թիվս այլ տեղեկատվության ներառում է նաև ներդրումների չափը և ժամանակացույցը:

Հաշվեքննության ընթացքում ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փաթեթների ուսումնասիրությամբ պարզվեց, որ վարձակալ ընկերության հայտերին կից ներկայացված ներդրումային ծրագրերում չի նշվել ներդրումների ժամանակացույցը, սակայն վերջիններիս հետ կնքվել են վարձակալության պայմանագրեր, ինչը չի բխում վերոնշյալ որոշման պահանջներից:

2. Հրազդանի անտառտնտեսություն մասնաճյուղում ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ Հայանտառ ՊՈԱԿ-ի և վարձակալի միջև 2018 թվականի նոյեմբերի 31-ին կնքված պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ անտառային հողը տրամադրվել է վարձակալության հանգստի և զբոսաշրջության նպատակով: Նույն պայմանագրի 3.4.7 կետի համաձայն՝ վարձակալը պարտավոր է անտառային հողն օգտագործել իր կողմից ներկայացված անտառօգտագործման ծրագրին և ժամանակացույցին համապատասխան, դրանց իրականացման վերաբերյալ տարեկան մեկ անգամ ներկայացնել հաշվետվություն:

Ըստ ներկայացված ներդրումային ծրագրի առաջարկվել է նախատեսվող տարածքում տեղակայել «Ձիփ Լայն»-ի ճոպանի ամրացման ժամանակավոր կայան: Նախատեսվել է ներդնել մոտ 10,000.0 հազ. դրամ, բարեկարգել վարձակալված տարածքը և պահպանել նրա կանաչ ծածկույթը: Ըստ ներկայացված կառուցման աշխատանքների ժամանակացույցի՝ աշխատանքները պետք է կատարվեին 12 ամսում: 2020 թվականի սեպտեմբեր ամսին աշխատանքները կատարված չեն եղել:

3. Հայանտառ ՊՈԱԿ-ի և վարձակալի միջև 2018 թվականի հոկտեմբերի 31-ին կնքվել է թվով երկու վարձակալության պայմանագիր: Պայմանագրերի համաձայն անտառային հողը տրամադրվել է վարձակալության հանգստի կազմակերպման նպատակով: Վարձակալը պարտավոր է անտառային հողը օգտագործել իր կողմից ներկայացված անտառօգտագործման ծրագրին և ժամանակացույցին համապատասխան, դրանց իրականացման վերաբերյալ տարեկան մեկ անգամ ներկայացնել հաշվետվություն: Ըստ ներկայացված փաստաթղթերի՝ իրականացված աշխատանքների համար ներդրվել է գրեթե 400,000.0 հազ. ՀՀ դրամ, իսկ առաջիկայում նախատեսվում է ներդնել մոտ 500,000.0 հազ. ՀՀ դրամ ևս: Ըստ ստացված տեղեկատվության 2020 թվականի հոկտեմբեր ամսին անտառապետի այցելության ժամանակ աշխատանքներ կատարված չեն եղել:

Անտառային կոմիտե

2018 թվականի հունիսի 22-ի ՀՀ բնապահպանության նախարարի N-172-Լ հրամանով հաստատվել է Անտառային կոմիտեի կանոնադրությունը, որի 11.1 կետի

համաձայն, կոմիտեի գործառույթներից է անտառային պետական ծառայությանը օրենքներով վերապահված լիազորությունների իրականացումը:

Անտառային պետական ծառայություն ստեղծելու նախագիծը մշակվել և քննարկման է ներկայացվել 2018 թվականի մարտի 16-ին: Նախագիծը մշակվել է «Հողերի և անտառի կայուն կառավարման ներդրումը հյուսիս-արևելյան Հայաստանի լեռնային լանդշաֆտներում» ծրագրի աջակցությամբ և պայմանավորված է ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 30-ի N 50 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած անտառային ոլորտի բարեփոխումների հայեցակարգի 17-րդ կետի պահանջներից: Անտառային կոմիտեն գործում է դեռևս 2018թ.-ի հունիսի 22-ից, սակայն իրեն վերապահված գործառույթները լիարժեքորեն չի կարողանում իրականացնել, քանի որ անտառային պետական ծառայության մասին օրենքի նախագիծը մինչ օրս գտնվում է լրամշակման փուլում:

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ

Հաշվեքննության օբյեկտը

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ) ջրային կոմիտե

Հաշվեքննության կատարման ժամկետը	Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը
---------------------------------	--

2020 թվականի հունիսի 8-ից մինչև 2021 թվականի մարտի 31-ը

2019 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը:

Հաշվեքննության առարկան	Հաշվեքննության մեթոդաբանությունը
------------------------	----------------------------------

Ֆինանսատնտեսական գործունեություն

համապատասխանության հաշվեքննություն, կատարողականի հաշվեքննություն

Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
-------------------------------------	-------------------------------------	-------------------------------------

2

27

-

Հաշվեքննության կարծիք և կատարողականի հաշվեքննության Համառոտ եզրակացություն	Հղումը
--	--------

- «Ոչ լիարժեք եզրահանգում» կարծիք
- Չեն պահպանվել օգտավետության և արդյունավետության սկզբունքները



Ուշագրավ փաստեր

Ջրօգտագործող ընկերությունների վերաբերյալ

- ՀՀ կառավարության 06.07.2017թ. թիվ 818-Ն որոշմամբ հաստատված՝ 2018-2020 թթ. Միջնաժամկետ ծախսերի ծրագրով, ինչպես նաև ՀՀ պետական բյուջեով Ջրօգտագործող ընկերություններին (ԶՕԸ) 2019 թվականի համար նախատեսվել է 3,636.7 մլն դրամի պետական ֆինանսական աջակցություն, փաստացի հատկացված աջակցությունը կազմել է 14,766,900.0 հազ. դրամ, կամ հավելյալ հատկացվել է 11,130,200.0 հազ. դրամ, որը շուրջ երեք անգամ գերազանցում է նաև նախորդ տարիներին այդ ուղղությամբ հատկացված պետական ֆինանսական աջակցության չափը (2017 թվականին՝ 5,253,100.0 հազ. դրամ, 2018 թվականին՝ 4,761,800.0 մլն դրամ): Հաշվեքննությամբ պարզվել է, որ աննախադեպ մեծության այդ աջակցությունը հատկացվել է՝ առանց Ջրային կոմիտեի կողմից արդյունավետության գնահատման համար վերջնական արդյունքի ֆինանսական կայունության չափանիշների ու նախապայմանների սահմանման և ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության չափաքանակների մեծությանը վերաբերող մեթոդաբանության և մեխանիզմների ընդունման:
- Չի ապահովվել ՀՀ կառավարության 15.02.2019 թվականի թիվ 128-Ն որոշման 3-րդ կետի պահանջի կատարումը, որով եռամսյա ժամկետում պետք է ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացվեր միջնաժամկետ ժամանակահատվածի համար ԶՕԸ-երի կրեդիտորական պարտքերի հիմնավորվածության, կանխարգելման և դրանց մարման կարգի վերաբերյալ միջոցառումների իրականացման ճանապարհային քարտեզ՝ կոնկրետ գործողությունների ծրագրով և ժամկետով: Սակայն կրեդիտորական պարտքերի խնդրի հիմնովին կարգավորմանն ուղղված ՀՀ կառավարության հանձնարարականը ժամանակին չի կատարվել և փոխարենը 2019 թվականին պետական բյուջեից ԶՕԸ-ին հատկացվել են չնախատեսված հավելյալ միջոցներ:
- Ըստ ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի և ԶՕԸ-երի միջև կնքված սուբսիդիայի տրամադրման պայմանագրերի 1.2. կետի պահանջի՝ սուբսիդիան պետք է ուղևորվեր 2019 թվականի գործունեության ֆինանսական ճեղքվածքի մարմանը, մինչդեռ ԶՕԸ-երը ստացած սուբսիդիայի գումարների զգալի մասն ուղղել են մինչև 01.01.2019 թվականը գոյացած պարտքերի մարմանը: Այսպես, ՀՀ կառավարության 15.02.2019 թվականի N 128-Ն որոշմամբ 12001 միջոցառման համար հատկացված 3,798,900.0 հազ. դրամն ամբողջությամբ, իսկ 11002 միջոցառման համար հատկացված 3,636,760.0 հազ. դրամից 2,159,000.0 հազ. դրամն օգտագործվել է նախորդ տարում «Ամերիա բանկ» ՓԲԸ-ից ստացված վարկերի գծով վարկային պարտավորությունների մարմանը:
- Ոռոգելի հողատարածքները 2018 թվականի համեմատ 10,3 հազ. հեկտարով պակասելու, սակայն ծախսերի և ջրի ինքնարժեքի նախատեսվածից ավել լինելու պարագայում 2019 թվականին ԶՕԸ-երին հատկացված ֆինանսական աջակցությունը 5,937,600.0 հազ. դրամով գերազանցել է ոռոգման ջրի ինքնարժեքի ու սահմանված սակագնի տարբերությունից գոյացած ֆինանսական ճեղքվածքը: Այս պարագայում տարվա վերջին ԶՕԸ-երի մոտ կուտակվել է

1,977,600.0 հազ. դրամի կրեդիտորական պարտքեր, դեբիտորական պարտքերը ավելացել են 2,369,200.0 հազ. դրամով, հասնելով 22,473,600.0 հազ. դրամի: Կարևոր է նշել նաև, որ վերջին 7 տարվա ընթացքում ԶՕԸ-երում չի իրականացվել աուդիտ կամ մշտադիտարկում:

Ջրառ ՓԲԸ-ի վերաբերյալ

- Ջրառ իրականացնող ոռոգման ոլորտի Ֆինանսական կայունության բարելավման ռազմավարությամբ նախատեսվել է յուրաքանչյուր տարի ծախսերի 10 %-ով կրճատում՝ 2019 թվականին դրանք հասցնելով 2,557,500.0 մլն դրամի, ոռոգելի հողատարածքները՝ 136.3 հազ. հեկտարի: Իրականում, այն պլանավորվել է 101.4 հազ. հեկտարի համար, իսկ ԶՕԸ-երի տվյալների համաձայն՝ ոռոգելի հողերը կազմել են ընդամենը 82.7 հազ. հեկտար:

ՀՀ կառավարության 2016 թվականի օգոստոսի 25-ի թիվ 33 արձանագրային որոշմամբ ոռոգման ոլորտի Ֆինանսական կայունության բարելավման Ռազմավարության 34-րդ կետի համաձայն՝ ոռոգում ջրառ միավորված ընկերության համար նախատեսվել է սահմանել լրիվ ինքնաձախսաձածկող սակագներ և սկսած 2019 թվականից՝ ընկերության պարտքերի վերակառուցման դեպքում, դադարեցնել ոռոգում ջրառ համակարգի պետության կողմից սուբսիդավորումը: Սակայն նշված ծրագիրը չի իրականացվել և սուբսիդավորումը շարունակվել է՝ 2019 թվականին կազմելով 1,218.2 մլն. դրամ:

- «Ջրառ» ՓԲԸ-ի կողմից ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 2121-Ն որոշմամբ հաստատված՝ ոռոգման ջրի մատակարարման և օգտագործման կանոնների չպահպանումը և ԶՕԸ-երի հետ կնքված պայմանագրերի համաձայն մատարակարարված ջրի դիմաց վճարման պարտավորությունների չկատարումը հանգեցրել է դեբիտորական պարտքերի կուտակմանը և կրեդիտորական պարտքերի առաջացմանը:

«Մելիորացիա» ՓԲԸ-ի վերաբերյալ

Կոլեկտորադրենաժային ցանցի պահպանում և շահագործում ծրագրով 2019 թվականին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 336,500.0 հազ. դրամ, որով նախատեսվել է մաքրել 182 կմ դրենաժային ցանց, որը կազմում է ընդհանուր կոլեկտորադրենաժային բաց համակարգի ընդամենը 17 տոկոսը, այն դեպքում երբ ՀՀ կոլեկտորադրենաժային ցանցի պահպանում և շահագործում Ծրագրի արդյունավետության գնահատման չափանիշներ սահմանված չեն:

Մինչդեռ, ոռոգելի հողերի մելիորատիվ վիճակի բարելավմանն ուղված միջոցառումների և մասնավորապես, 2019թ-ին իրականացված Ծրագրի ցածր արդյունավետության մասին է վկայում այն, որ Արարատի մարզում, որտեղ իրականացվել են ամենից շատ մաքրման աշխատանքներ (94 կմ), գերխոնավ հողերի տարածքը մինչև մաքրումը կազմել է 6,870 հա, մաքրումից հետո՝ 7,120 հա: Ընդ որում, նույն բացասական արդյունքը եղել է նաև 2018 թվականին՝ Արարատի մարզում մաքրման աշխատանքներից հետո գերխոնավ հողերը ավելացել են 150 հեկտարով, Արմավիրի մարզում՝ 247 հեկտարով:

Դրենաժային ցանցերի ոչ պատշաճ մակարդակով շահագործման հետևանքով առ այսօր պահպանվում են 1992-1998 թթ.-ին աղակալված տարածքները, որոնց մեխորատիվ վիճակի բարելավումը հնարավոր չէ իրականացնել առանց լրացուցիչ միջոցառումների: Չի իրականացվում թույլ աղակալված հողերի աղազերծումը լվացման միջոցով:

Արարատյան դաշտում գործող 190 ձկնաբուծական տնտեսությունները, որոնց կողմից շահագործվող թվով 470 արտեզիան հորերից մղվող՝ շուրջ 605,500 հազ. խմ հետադարձ ջրերը, խախտելով ջրօգտագործման թույլտվություններով նախատեսված պայմանները, անարգել թափվում են կոլեկտորադրենաժային համակարգ, ինչի արդյունքում հավելյալ բարձրանում է դրենաժային ջրերի մակարդակն ու ելքերը, դժվարացնելով և թանկացնելով մաքրման աշխատանքները:

Խիստ անմխիթար է փակ դրենաժների տեխնիկական վիճակը, որոնց վրա միջոցներ չի ծախսվում 1998 թվականից:

Բացակայում է Հայաստանի Հանրապետությունում հողերի մեխորատիվ վիճակի բարելավմանն ուղղված երկարաժամկետ, բազմակողմանի և համապարփակ Ծրագիրը, որում կներառվի այս բնագավառում իրականացվող պետական քաղաքականության մեջ մարտավարական փոփոխությունների և նոր մոտեցումների ձևավորումը, դրանք զուգորդելով ջրերի կառավարման ու ոռոգման համակարգերի արդյունավետության բարձրացման քայլերին:

«Ջրառ» և «Մեխորացիա» ՓԲԸ-ների գույքագրումների վերաբերյալ

Ինչպես «Ջրառ», այնպես էլ «Մեխորացիա» ՓԲԸ-ներում հիմնական միջոցների գույքագրումը կրել է ձևական բնույթ, իսկ կատարված գույքագրման արդյունքները չեն ամփոփվել և չեն լրացվել ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 02.06.2000թ.-ի թիվ 102 հրամանով հաստատված՝ օրինակելի N գ-1 ձևաչափին համապատասխան:

Արդյունքում, «Ջրառ» ՓԲԸ-ի հիմնական միջոցների ցանկը չի համապատասխանում դրանց կազմի իրական պատկերին՝ պատվարների, պոմպակայանների, ջրանցքների անվտանգության ներդրումային (վարկային), ինչպես նաև Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացված ծրագրերով կատարված աշխատանքների գումարները չեն արտացոլվել հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքներում, հաշվեկշռում առկա են հիմնական միջոցներ, որոնք փաստացի չեն գույքագրվել, հաշվառվել են արդեն իսկ սեփականության իրավունքով իրենց չպատկանող գույքը, չեն հաշվառվել և թերի են ձևակերպվել «Հազարամյակի Մարտահրավեր Հիմնադրամ-Հայաստան» ծրագրի շրջանակներում գույքի վրա կատարված կապիտալ բնույթի 12,415,400 հազ. դրամ ծավալային աշխատանքներից ձևակերպվել է 8,133,100.0 հազ. դրամը, կամ չի ձևակերպվել 4,282,500.0 հազ. դրամի աշխատանքներ: Վարկային ծրագրերի շրջանակներում Մարմարիկի ջրամբարի 5,082,100.0 հազ. դրամ վերականգնված գույքից ընկերության հիմնական միջոցների ցանկում արտացոլվել է միայն 12,500.0 հազ. դրամի գույքը:

«Հազարամյակի Մարտահրավեր Հիմնադրամ-Հայաստան» ծրագրի շրջանակներում լուրջ թերացումներ են արձանագրվել նաև «Մելիորացիա» ՓԲԸ-ում, որտեղ 868,700 հազ. դրամ գումարը չի բաշխվել և կատարված կապիտալ ծախսերը չեն ներառվել համապատասխան դրենաժային համակարգերի արժեքներում, այլ դրանք մեկ տողով և ընդհանուր գումարով արտացոլվել են Ընկերության հաշվեկշռում հաշվառված հիմնական միջոցների ցանկում և այդ գումարի նկատմամբ հաշվարկվել է մաշվածություն: Ավելին, 2016 թվականի սեպտեմբեր ամսից 30,610.4 հազ. դրամ սկզբնական արժեքով փակ դրենաժային համակարգի տակ գտնվող 400 հա տարածքից 30 հա-ն օգտագործվել է «Գրինհաուզ» ՍՊԸ-ի կողմից՝ ջերմոցային տնտեսություն կազմակերպելու նպատակով:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի վերաբերյալ

Հաշվեքննության է ենթարկվել նաև ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի և «Վիոլա Օ Ժեներալ դեզ Օ» կոմանդիտային բաժնետիրական ընկերության և «Վիոլա Ջուր» ՓԲԸ միջև ստորագրված վարձակալության պայմանագրի երրորդ տարվա իրականացման դրույթները:

2019 թվականի համար «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն մանրաձախ ջրամատակարարման ծառայությունների մատուցման սակագինն առաջարկել է 1 խմ-ի դիմաց 205.125 դրամ: Գործող սակագինը (180 դրամ/խմ) անփոփոխ թողնելու նպատակով ՀՀ կառավարության որոշումներով 2019 թվականի հունիսի 25-ին ՀՀ ԷԵԲՊ նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի միջև կնքվել է 2019 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսված սուբսիդիայի տրամադրման թիվ 1-Ս պայմանագիրը՝ 1,289,780.0 հազ. դրամ գումարով, որը տարեվերջին ավելացվել է ևս 102,600 հազ. դրամով: Տրամադրված սուբսիդիան բավարար չէր սակագնի բարձրացման հետաձգման (բաժանորդների համար չկիրառման) համար, ուստի համակարգը պահպանելու, վերանորոգելու նպատակով Վարձակալի «Պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագրով» իրականացման ենթակա նվազագույնը 2,250,000.0 հազ. դրամի (առանց ԱԱՀ-ի) կապիտալ ծախսերը նվազեցվել է 2019 թվականին 1,028,000.0 հազ. դրամով (առանց ԱԱՀ) և նույն չափով տեղափոխվել է 2025 թվական: Ձեռնարկված միջոցների արդյունքում չեզոքացվել է սակագնի բարձրացման հնարավորությունը:

Ջրային կոմիտեն, չունենալով հիմնական պայմանագրով սահմանված կապիտալ աշխատանքներ իրականացնելու որևէ պարտավորություն, 2018 թ. դեկտեմբերի 12-ին կնքել է 8-րդ համաձայնագիրը, որով հիմնական պայմանագրում կատարվել են փոփոխություններ, որոնց համաձայն 2019 թ. ստանձնել է 1,293,100.0 հազ. դրամ նախահաշվային արժեքով 12 կապիտալ ենթածրագրերի իրականացման աշխատանքները վարկային ծրագրերի խնայողությունների հաշվին կատարելու մտադրությամբ: Սակայն, այդ աշխատանքները ֆինանսավորվել են ՀՀ պետական բյուջեից: Չնայած դրան՝ տարեվերջի դրությամբ ենթածրագրերից ոչ մեկով սահմանված կապիտալ շինարարական աշխատանքները շահագործման չեն հանձնվել, ՀՀ պետական բյուջեով նախատեսված ռեսուրսների օգտագործմամբ համապատասխան որակով, քանակով ու ժամկետում առավելագույն արդյունք չի

ստացվել, իսկ ծախսերը կատարվել են 29,5 %-ով, կամ ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի կողմից չեն պահպանվել ինչպես նպատակային այնպես էլ ծախսային արդյունավետության սկզբունքները: Այնուհետև, նպատակ ունենալով գործող սակագները պահպանել նաև 2020 և 2021 թվականների համար «Վեոլիա Ջուր» ՓԲԸ և Ջրային կոմիտեն 2019 թվականի հուլիսի 25-ին կնքել են թիվ 13-րդ համաձայնագիրը, որով համաձայնել են փոփոխություններ կատարել գործող կարգավորումներում: Այսինքն, ըստ այդ համաձայնագրի 2-րդ կետի Վարձակալը Վարձատուին ներկայացրել է առաջիկա հինգ տարիների՝ 230 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ ներդրումային ծրագիրը: Ներդրումային ծրագրի իրականացնող «Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ» Պետական հիմնարկը ներկայացրել է առաջիկա երեք տարիներին «Երևանի ջրամատակարարման բարելավման» ծրագրով 3,310,000.0 հազ. դրամի, իսկ «Համայնքային ենթակառուցվածքի ծրագիր II Փուլ 3» ծրագրով 25,440,000.0 հազ. դրամի ներդրումային ծավալներ: Այսինքն, երեք տարիների համար նախատեսվում է իրականացնել 28,750,000.0 հազ. դրամ կամ մոտ 60,000.0 հազ. ԱՄՆ դոլարի ներդրումային ծավալ, որը կազմում է ամբողջի (230,000.0 հազ. ԱՄՆ դոլարի) 26%-ը: Միևնույն ժամանակ, համաձայնագրի 8-րդ կետով նվազեցվել են համապատասխան տարիների վարձակալական վճարները, մանրաձախ բազիսային սակագներն ու մանրաձախ ջրամատակարարման բազիսային ծավալները: Վարձակալության պայմանագրով ամրագրված վարձակալության վճարները նվազվել են 9,322,700.0 հազ. դրամով, այդ թվում՝ 2019 թվականի համար՝ 935,800.0 հազ. դրամով, 2020 թվականին՝ 3,738,900.0 հազ. դրամով, 2021 թվականին՝ 4,648,000 հազ. դրամով:

«Աէրացիա» կեղտաջրերի մաքրման «նոր» կայանի վերաբերյալ

ՀՀ կառավարության 2016 թվականի նոյեմբերի 21-ին ՀՀ ԷԵԲՊ նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի և «Վեոլիա Օ Ժեներալ դեզ Օ» բաժնետիրական ընկերության միջև ստորագրված վարձակալության պայմանագրի հավելված 2-ի 11-րդ կետի համաձայն՝ կոյուղու մաքրման 6 կայաններն, այդ թվում՝ Երևանի Աէրացիա «հին» մաքրման կայանի կառուցվածքները, հանձնվել են վարձակալության:

Երևան քաղաքի Աէրացիայի կեղտաջրերի մաքրման «նոր» կայանը կառուցվել է 2015-2017 թվականներին՝ 2008 թվականի հոկտեմբերի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ կառավարության և Ֆրանսիայի կառավարության ֆինանսական արձանագրության համաձայն: Ծրագրով մասնավորապես, նախատեսվել է վերականգնել ջրազտման «Աէրացիա» կայանը՝ կեղտաջրերի սկզբնական և ցեխանստվածքների նախնական մշակումը բարելավելու միջոցով: Ծրագրի 24,400.0 հազ. եվրո արժեքից 10,500.0 հազ. եվրոն ուղղվել է նոր կայանի կառուցմանը:

Երևան քաղաքի «Աէրացիա» կայանի կեղտաջրերի մաքրման նոր կայանը կառուցելու Կապալի պայմանագրի Պատվիրատու և նրա գործառույթների կրողներն են հանդիսացել՝ Երևանի քաղաքապետարանի, 2017 թվականի մայիսից Ջրային պետական կոմիտեի «Համայնքային զարգացման ԾԻԳ» պետական հիմնարկը՝ մինչև 01.09.2017 թվականը, «Ջրային տնտեսության ԾԻԳ» պետական հիմնարկը՝ մինչև 28.12.2019 թվականը և Հայաստանի տարածքային զարգացման


հիմնադրամը 01.01.2020 թվականից հետո: Պատվիրատուի առաջին փոփոխությունից սկսած, ինչպես Կապալառուն, այնպես էլ Տեխնիկական հսկիչ Ինժեները բազմաթիվ գրություններ են ուղարկել Պատվիրատուին, որպես ՀՀ-ում ջրային համակարգերի կառավարման պատասխանատուի, նոր կայանը շահագործող Օպերատորի բացակայության, պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման անհնարինության, փորձարկման աշխատանքները չիրականացնելու և հետևանքների մասին: Պատվիրատուների վերը նշված ժամանակագրությունը ցույց է տալիս, որ հաշվեքննությամբ ընդգրկված ժամանակաշրջանում՝ 2019 թվականին, նոր գույքի օգտագործումը պետք է կատարվեր Ջրային կոմիտեի կողմից: Սակայն 10,500.0 հազ. եվրո վարկային միջոցներով ստեղծված գույքը դեռևս երեք տարվա ընթացքում սահմանված կարգով փորձաքննություն չանցնելու, և չգործարկվելու հետևանքով այդպես էլ չի ստացել պետական սեփականության կարգավիճակ և չի շահագործվել ըստ նպատակային նշանակության:

Չշահագործվելու հետևանքով շարքից դուրս են եկել վահանային փականների հերմետիկության ռետինե ներդիրների մեծ մասը, չեն կատարվել հիդրավլիկական փորձարկումները և էլեկտրական նորակառույց ենթակայանի միացումը քաղաքային բաշխիչ էլեկտրահաղորդման ցանցին: Ստուգման կարիք ունեն բոլոր ուժային սարքավորումները, քանի որ անցել են դրանց երաշխիքային ժամկետները, գողացվել են էլեկտրական անջատիչներն ու այլ սարքավորումները:

Հաշվի առնելով, որ նոր կայանի ստեղծման համար նախատեսված ռեսուրսները ֆինանսական արձանագրությամբ տրամադրված վարկային միջոցներն են, որոնք արդեն իսկ ծախսվել են, իսկ ստեղծված գույքը 2019 թվականին համապատասխան որակով, քանակով ու ժամկետում շահագործման չի ընդունվել, հետևաբար չի ապահովվել կատարողականի հաշվեքննության ծախսային արդյունավետության սկզբունքի պահպանումը:

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՁՄԵՌԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ, ԸՆԹԱՅԻԿ ՊԱՀՊԱՆՈՒՄ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ

Հաշվեքննության օբյեկտը	
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	
Հաշվեքննության կատարման ժամկետը	Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը
2019թ. նոյեմբերի 9-ից մինչև 2021թ. փետրվարի 26-ը	2017թ. հունվարի 1-ից մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ը

Հաշվեքննության առարկան		Հաշվեքննության մեթոդաբանությունը	
Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում		համապատասխանության հաշվեքննություն	
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ	
2	-	2	
Հաշվեքննության կարծիք			Հղումը
«ոչ լիարժեք եզրահանգում» կարծիք			

Ուշագրավ փաստեր

Միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքներ ենթածրագիր

• ՀՀ կառավարության 13.02.2014թ.-ին թիվ 265-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների ցանկում որոշ ճանապարհների ըստ նշանակության դասակարգումը չի համապատասխանում «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ մասերով սահմանված պահանջներին:

Արդյունքում, որպես միջպետական նշանակության ավտոճանապարհներ դասակարգված ավտոճանապարհներից 387 կմ ավտոճանապարհները հանդիսանում են հանրապետական նշանակության ճանապարհներ և դրանց պահպանման աշխատանքների համար կատարողականներով հաշվարկված գները գերազանցում են որպես հանրապետական նշանակության նույն վիճակի և պահպանման մակարդակի ավտոճանապարհների համար կապալառու ընկերությունների առաջարկած պայմանագրային գները 323,347.0 հազ. դրամով: 167.8 կմ ավտոճանապարհներ հանդիսանում են տեղական նշանակության ճանապարհներ, որոնց կատարողականներով հաշվարկված գները գերազանցում են որպես տեղական նշանակության նույն վիճակի և պահպանման մակարդակի ավտոճանապարհների համար նույն կապալառու ընկերությունների առաջարկած պայմանագրային գները 223,162.0 հազ. դրամով: 34.5 կմ երկարությամբ ճանապարհներ, որոնց պահպանման համար 2017-2019թթ. վճարվել է 46,777.0 հազ. դրամ, հանդիսանում են դաշտամիջյան ճանապարհներ, որոնց պահպանման աշխատանքներ ՀՀ օրենսդրությամբ չի նախատեսվում և չի իրականացվում:

Որպես հանրապետական նշանակության ավտոճանապարհներ դասակարգված ավտոճանապարհներից 569.3 կմ ճանապարհները, որոնց պահպանության համար կատարողականներով հաշվարկվել և վճարվել է 2,041,260.0 հազ. դրամ, հանդիսանում են մարզային նշանակության ավտոճանապարհներ և այդ ճանապարհների տնօրինման մասով պետական ճանապարհային մարմին են հանդիսանում ՀՀ մարզպետները: 58.7 կմ-ը հանդիսանում է դաշտամիջյան ճանապարհներ, որոնց պահպանության համար կատարողականներով հաշվարկվել և վճարվել է 101,701.5 հազ. դրամ, այնինչ ՀՀ օրենսդրությամբ այդ ճանապարհների պահպանություն չի նախատեսվում: 7.6 կմ-ը Հրազդան քաղաքի փողոց է, որի պահպանության համար կատարողականներով հաշվարկվել և վճարվել է 22,469.0 հազ. դրամ:

- Ձյան տեղումների բացակայության պայմաններում պետք է կատարողականներից նվազեցվեր 122,474.0 հազ. դրամ, ինչը չի կատարվել:

- Թվով 10 օբյեկտներում պահպանման աշխատանքներն իրականացնող ընկերությունների հետ կնքվել են նաև այդ ճանապարհահատվածների վերանորոգման աշխատանքների (հիմնականում փոսային նորոգման) պայմանագրեր այն դեպքում, երբ պահպանության պայմանագրերի շրջանակներում ստանձնած պարտավորությունների մեջ արդեն իսկ մտնում էին վերանորոգման աշխատանքների պայմանագրերում ներառված աշխատանքների իրականացումը, կամ նույն աշխատանքները նույն կապալառուներին պատվիրվել են կրկնակի և պահպանման պայմանագրերով նախատեսվածից վերանորոգման պայմանագրերով ավելի է վճարվել 185,339.0 հազ. դրամ: Միաժամանակ, չնայած այն փաստին, որ վերանորոգման պայմանագրերով սահմանվել է 1 տարի երաշխիքային ժամկետ, ճանապարհների վիճակը վերանորոգումից հետո չի գնահատվել, այլ թողնվել է նույն վիճակի, ինչ վերանորոգման աշխատանքներից առաջ էր, ինչի արդյունքում կատարողականներով ավելի է հաշվարկվել և վճարվել 78,088.0 հազ. դրամ:

- Չնայած նրան, որ պահպանման աշխատանքների համար կազմվել են յուրաքանչյուր ամսվա համար թվով 3 միջանկյալ դիտարկման ամփոփագրեր, գործուղումներով հիմնավորվել է ընդամենը ամսական մեկ դիտարկման համար կատարված շրջայցը:

- Համաձայն ՀՀ կառավարության 10.01.2008թ-ի թիվ 113-Ն որոշմամբ հաստատված «Ճանապարհային գծանշմանը ներկայացվող պահանջները, դրա կիրառման կանոններ»-ի 22-րդ կետի պահանջի՝ ճանապարհների գծանշումը, բացառությամբ 4-րդ կարգի ճանապարհներինը, պետք է կատարվի լուսանդրադարձիչ նյութի կիրառմամբ: Բացի այդ, սահմանված են գծանշման պայծառության, լուսանդրադարձման և լուսարտացուման գործակիցներ: Այնինչ գծանշման աշխատանքներն ընդունելիս չեն ստուգվել վերոնշյալ ցուցանիշները՝ գործակիցները: Ինչպես նաև որևէ փաստաթղթով (սերտիֆիկատ, անձնագիր և այլն) չեն հիմնավորվել աշխատանքներն իրականացնելիս օգտագործվող ներկանյութերով վերոնշյալ կանոններով սահմանված պայծառության, լուսանդրադարձելիության և լուսարտացուման ապահովման հնարավորությունները:

Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պարբերական պահպանում (միջին նորոգման) ենթածրագրով

- Չնայած նրան, որ Մ-4, Երևան–Սևան–Իջևան–Ադրբեջանի սահման միջպետական ավտոճանապարհը I-ին տեխնիկական կարգի է և համաձայն ՀՀՇՆ IV-11.05.02-99-ի պահանջների, ճանապարհի վերին շերտը պետք է կառուցվեր Ա տիպի I մակնիշի ասֆալտբետոնյա խառնուրդով, թվով 2 պայմանագրերի շրջանակներում կատարված աշխատանքներում ասֆալտբետոնյա վերին շերտի ծածկը կառուցվել է Ա տիպի II մակնիշի ասֆալտբետոնե խառնուրդով, կամ 178,845 քմ ասֆալտապատման աշխատանքները գումարով 701,175.5 հազ. դրամի, չեն համապատասխանում գործող շինարարական նորմերի պահանջներին:
- Համաձայն ՀՀՇՆ IV-11.05.02-99-ի 15.3 կետի և Գ) հավելվածի պահանջների՝ աշխատանքներն ընդունելիս մի շարք այլ ցուցանիշների հետ միաժամանակ պետք է ստուգվեն նաև ճանապարհային պատվածքի և ավտոմոբիլի անիվի կառուցումը ծածկից կամ ծածկի անողորկությունը (խորդուբորդությունը) և ճանապարհային պատվածքի հարթությունը: 2017-2019թթ. որևէ պայմանագրի շրջանակում աշխատանքներն ընդունելու համար պարտադիր ստուգման ենթակա նշված ցուցանիշներից ծածկի անողորկությունն ընդհանրապես չի ստուգվել, իսկ 3,071,828.0 հազ. դրամ աշխատանքների դեպքում չի ստուգվել նաև պատվածքի հարթությունը:
- Համաձայն ԳՕՍՍ 9128-2013-ի 4.1.19 կետի պահանջի ասֆալտբետոնե խառնուրդում բիտումի պարունակության շեղումը չպետք է գերազանցի նախագծով (բաղադրատոմսով) սահմանված զանգվածի +/- 0,5%-ը, այնինչ թվով 2 պայմանագրերի շրջանակում իրականացրած 250,203.8 հազ. դրամի ասֆալտապատման աշխատանքներում շեղումը գերազանցել է 0,5%-ը, կամ այդ աշխատանքները չեն համապատասխանում գործող ստանդարտների պահանջներին:
- Թվով 6 պայմանագրերի շրջանակներում աշխատանքները պայմանագրով սահմանված ժամկետներում և նախագծով, նորմերով և ստանդարտներով սահմանված պահանջներին համապատասխան չկատարելու պարագայում պատվիրատուն չի օգտվել Պայմանագրերի 3.1.4 կետի բ և գ ենթակետերով իրեն վերապահված իրավունքից՝ միակողմանի չի լուծել պայմանագրերը և չի պահանջել հատուցել իրեն պատճառված վնասը և չի նախաձեռնել գործընթաց, որ այդ ընկերությունները ընդգրկվեն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ավելին, 2020թ.-ին Նախարարությունը այդ ընկերությունների հետ կնքել է նոր պայմանագրեր և համաձայնագրեր: Ընդ որում, նշվածներից թվով 3 պայմանագրի դեպքում, չունենալով նման իրավասություն, պատվիրատուն կասեցրել է պայմանագիրը, հնարավորություն տալով կապալառուին խուսափելու պայմանագրով նախատեսված վերը հիշատակված տույժից կամ տուգանքից, ավելին, պայմանագրով չունենալով կանխավճար տալու պարտավորություն, պայմանագրային ողջ գումարը փոխանցել է կապալառուին որպես կանխավճար:


- Մեկ պայմանագրի շրջանակում կառուցված ասֆալտբետոնյա ծածկի վերին շերտի հանուկների լաբորատոր հետազոտության արդյունքների համաձայն 21,000 քմ ճանապարհածածկույթին համապատասխանող ասֆալտբետոնե ծածկի միջին խտությունները պակաս են աշխատանքներն ընդունելու համար ՀՀՇՆ IV-11.05.02-99-ի 14.77 կետով սահմանված թույլատրելի ցուցանիշներից, մինչդեռ 96,012.0 հազ. դրամի աշխատանքները չեն մերժվել:
- Համաձայն «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի երկրորդ մասի թ) կետի և ՀՀ քաղաքաշինության նախարարի 1998թ. թիվ 44 հրամանով հաստատված շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգի 1.3 կետի պահանջների՝ կառուցապատողը պարտավոր է ապահովել քաղաքաշինական օբյեկտների շինարարության որակի տեխնիկական հսկողությունը՝ օրենքով սահմանված կարգով: 2,583,614.0 հազ. դրամի աշխատանքների դեպքում պատվիրատուն չի ապահովել օրենսդրությամբ սահմանված կարգով որակի տեխնիկական հսկողության իրականացում:

Մետաղական արգելափակոցների պահպանման և վնասված հատվածների վերականգնման աշխատանքներ ենթաձրագրով

- 2016-2018թթ. հանրապետական և միջպետական նշանակության ավտոճանապարհներին տեղադրվել են 167,163 գծմ նոր մետաղական արգելափակոցներ, որոնցից 21,856 գծմ-ի երաշխիքային ժամկետը սահմանվել է 3 տարի, իսկ մնացածինը 1 տարի: Տեղադրման հենց հաջորդ տարվանից, դեռևս երաշխիքի մեջ գտնվող արգելափակոցները հանձնվել են պահպանության այնինչ համաձայն ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 24.02.2011թ. թիվ 79-Ն հրամանով հաստատված մետաղական արգելափակոցների պահպանման աշխատանքների և դրանց ընդունման կարգի ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող պարսպող հարմարանքների պահպանման աշխատանքների զգալի մասն ըստ էության արգելափակոցներում՝ ԳՕՍՏ-ի պահանջների նկատմամբ ի հայտ եկած թերությունների վերացման աշխատանքներ են և երաշխիքային ժամկետում դրանց ի հայտ գալու դեպքում այն պետք է իր հաշվին վերացնեին արգելափակոցները տեղադրող կապալառու ընկերությունը:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննության օբյեկտը	
ՀՀ ոստիկանություն	
Հաշվեքննության կատարման ժամկետը	Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը
2020 թվականի հունիսի 8-ից մինչև 2021 թվականի մարտի 31-ը	2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը
Հաշվեքննության առարկան	Հաշվեքննության մեթոդաբանությունը

Ֆինանսատնտեսական գործունեություն		համապատասխանության հաշվեքննություն
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
1	-	5
Հաշվեքննության կարծիք		Հղումը
«Ոչ լիարժեք եզրահանգում» կարծիք		

Ուշագրավ փաստեր

1. ՀՀ ոստիկանության և «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ միջև կնքված գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն՝ հատուցվում են հավատարմագրային կառավարման հանձնված համակարգերի, շահագործման, կառավարման և տեխնիկական սպասարկման նպատակով փաստացի կատարված ծախսերը:

«Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ կողմից ՀՀ ՊԵԿ ներկայացված 2018 և 2019 թվականների «եկամտային հարկի և սոցիալական վճարի» հաշվարկի ամսական հաշվետվությունների ուսումնասիրությունից պարզվել է, որ «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ-ն, որպես փաստացի կատարված ծախսեր, ներկայացրել է և ոստիկանությունից, որպես փոխհատուցում ստացել պետության կողմից փոխհատուցվող նպաստների (եկամտային հարկից նվազեցվող գումարներ) գումարները՝ շուրջ 42,692.2 հազ. դրամի չափով (2018թ.-ին՝ 14,763.7 հազ. դրամ, 2019թ.-ին՝ 27,628.5 հազ. դրամ): Ընդհանուր առմամբ, հաշվետվություններով ներկայացված աշխատավարձի ֆոնդերից, որպես փոխհատուցում, ավելի է ստացվել շուրջ 74,133.9 հազ. դրամ:

Հավատարմագրային կառավարիչն իր հերթին ծառայությունների ձեռքբերման պայմանագիր է կնքել մեկ այլ կազմակերպության հետ, որը պետք է իրականացներ արագաչափ և տեսանկարահանող սարքերի սպասարկման, ինչպես նաև՝ այլ ծառայություններ: Միայն տեսանկարահանող սարքերի սպասարկման համար նախատեսվել է տարեկան 376,008.0 հազ. դրամ, որից՝ 141,000.0 հազ. դրամը՝ դրանց 141 տպասալիկների տարեկան ծրագրային ապահովման (հեղինակային իրավունքի օբյեկտ) «լիցենզիաների» արժեքը: Հատկանշական է, որ իրավասու մարմնում այդ ընկերության անունով որևէ լիցենզիա կամ մտավոր սեփականության օբյեկտ հաշվառված չէ, արդյունքում՝ չի հիմնավորվել այդ ծախսերի անհրաժեշտությունը:

Հավատարմագրային կառավարիչը տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պայմանագիր է կնքել մեկ այլ կազմակերպության հետ, որի մասով,

որպես կատարած ծախսերի փոխհատուցում, ուստի կանոնադրության ստացել է շուրջ 80,636.3 հազ. դրամ: Հաշվեքննության ընթացքում պարզվել է, որ այդ կազմակերպությունը գրանցվել է հավատարմագրային կառավարման պայմանագրի կնքումից 7 օր առաջ: 2018-2019 թվականներին ունեցել է ընդամենը մեկ կամ երկու աշխատակից (78 հազ. դրամ աշխատավարձով) և այդ ժամանակահատվածում ձեռքբերումներ չի ունեցել:

2. Տեսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության խախտումների համար Ճանապարհային ոստիկանության կողմից նշանակված տուգանքների գանձման գործընթացի ուսումնասիրությունից պարզվել է, որ 2018 և 2019 թվականներին, համապատասխանաբար, 235 և 91 ֆիզիկական անձինք կատարել են տարեկան 100 և ավելի խախտումներ (ընդհանուր 36210 և 14169 խախտում), համապատասխանաբար՝ 328,251.5 և 143,017.5 հազ. դրամի: Սակայն այդ խախտումների համար նշանակված տուգանքներից Ճանապարհային ոստիկանությանը վճարումներ չեն կատարվել, և հետագայում Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից այդ տուգանքներից որևէ մուտքեր չեն ապահովվել: Օրինակ, անձը 2018 թվականին կատարել է 210 խախտում 11,015.0 հազ. դրամի գումարով, կամ մեկ այլ անձ կատարել է 178 խախտում 8,646.0 հազ. դրամի գումարով, կամ անձը 2019 թվականին կատարել է 248 խախտում 6,469.0 հազ. դրամի:

Պարզվել է նաև, որ այդ ֆիզիկական անձանց կողմից նշանակված տուգանքները սահմանված ժամկետում չվճարելուց հետո 2018 և 2019 թվականներին, համապատասխանաբար, 672 և 162 դեպքերում (5,195.5 հազ. և 1,526.0 հազ. դրամի) դրանք չեն ուղարկվել Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն՝ տուգանքի գումարը բռնագանձելու համար:

Բացի այդ, Ճանապարհային ոստիկանության էլեկտրոնային շտեմարանի տվյալների վերլուծությունից պարզվել է, որ 2018 և 2019 թվականներին, համապատասխանաբար, 8 և 18 ֆիզիկական անձինք կատարել են 1,000.0 հազ. դրամից ավելի գումարային 26,946.5 հազ. դրամի և 35,305.5 հազ. դրամի խախտումներ, սակայն Ճանապարհային ոստիկանությանը և հետագայում Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը վճարել են նշանակված տուգանքների գումարի չնչին մասը: Մասնավորապես, մեկ ֆիզիկական անձ կատարել է 280 խախտում, որի համար նշանակված 10,224.0 հազ. դրամի տուգանքներից վճարել է 7.0 հազ. դրամ, մեկ այլ ֆիզիկական անձ կատարել է 1,085 խախտում, որի համար նշանակված 7,481.0 հազ. դրամի տուգանքներից վճարել է 8.0 հազ. դրամ:

3. Գնումների գործընթաց

- 2019 թվականին կնքվել է հանդերձանքի գնման պայմանագրեր՝ 678,874.3 հազ. դրամի: Նշված հանդերձանքի մի մասը չի մատակարարվել: Ընդհանուր առմամբ, չի մատակարարվել շուրջ 216,719.9 հազ. դրամի հանդերձանք: Գործող օրենսդրության համաձայն՝ պայմանագիրը ենթակա էր լուծարման, իսկ պայմանագրերի ապահովման 10 տոկոսի գումարը 21,671.9 հազ. դրամի չափով ենթակա էր վճարման պետական բյուջե: Ուստի կանոնադրությունը սահմանված ժամկետներում գործողություններ

չի իրականացրել՝ պայմանագրի ապահովման գումարները գանձելու ուղղությամբ: Ավելին, ոստիկանության կողմից կնքված պայմանագրերից 5-ի մասով տուժանքի համաձայնագրերում գործողության ժամկետներ չեն նշվել: Արդյունքում, պայմանագրերի ապահովման 21,671.9 հազ. դրամ գումարը պետական բյուջե չի փոխանցվել:

Չի հաշվարկել և գանձել չմատակարարված վերոնշյալ ապրանքների մատակարարման ժամկետների ուշացված օրերի համար պայմանագրերով նախատեսված տույժերը՝ առնվազն 2,941.1 հազ. դրամ:

Ոստիկանությունը սահմանված ժամկետում չի դիմել իրավասու մարմին վերոնշյալ մատակարարներին գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցողների ցուցակում ընդգրկելու նպատակով, այլ դիմել է ուշացումով, որն էլ՝ հիմք է հանդիսացել գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից մերժելու ոստիկանության առաջարկը: Արդյունքում, վերոնշյալ որոշ մատակարարներ մասնակցել են հաջորդ տարվա գնման գործընթացներում և ճանաչվել հաղթողներ:

- 2018 և 2019 թվականներին ՀՀ ոստիկանության և «Հայփոստ» ՓԲԸ միջև փոստային ծառայությունների մատուցման համար կնքվել են 1,117,072.6 հազ. դրամի պայմանագրեր: Համաձայն փաստաթղթերի՝ 20 գրամ քաշով ունիվերսալ փոստային ծառայություն 1 հատի համար վճարել է 350 դրամ, 20 գրամ քաշը գերազանցող կամ արտասահման առաքանու ուղարկման 1 հատի համար՝ 2,370 դրամ: ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի կողմից 28.12.2001թ. սահմանված սակագների մինչև 20 գրամ քաշով, պատվիրված, ետադարձ ծանուցմամբ նամակի ուղարկման արժեքը կազմում է 280 դրամ, իսկ 20 գրամից բարձր քաշով արտասահման ուղարկվող առաքանու 1 հատի արժեքը կազմում է 1,970 դրամ, կամ ՀՀ ոստիկանությունը այդ տեսակի փոստային ծառայությունների 1 հատի համար վճարել է համապատասխանաբար 70 և 400 դրամ ավելի գումար: Լրացուցիչ ծառայությունների մատուցման արժեքները սահմանված չեն պայմանագրերով և հնարավոր չէ գնահատել սակագներից ավելի վճարված գումարների հիմնավորումը:

Հատկանշական է, որ ԴԱՀԿ ծառայության և «Հայփոստ» ՓԲԸ-ի միջև կնքված պայմանագրերի սակագների հետ համեմատության արդյունքում պարզվել է, որ մեկ առաքանու գինը, պայմանավորված նամականիշի արժեքով, տատանվում է 70 դրամից մինչև առավելագույնը 280 դրամ:

- ՀՀ ոստիկանության և «Լեհական արժեթղթերի արտադրամաս» բաժնետիրական ընկերության միջև նույնականացման անվանաքարտերի տպագրման աշխատանքների կատարման համար կնքված պայմանագրերի մասով չի հաշվարկվել պայմանագրով նախատեսված մատակարարումների ժամկետների ուշացումների մասով սահմանված տույժերը՝ 2,998.8 հազ. դրամի չափով:

- Ոստիկանության կարիքների համաձայն դիզեյնին գեներատորի ձեռքբերման մրցույթի ժամանակ ամենացածր գնառաջարկը «KATANA KD 225» գեներատորի համար կազմել է 14,500.0 հազ. դրամ (առանց դրա տեղադրման ու մոնտաժման աշխատանքների, անխափան սնուցման սարքի և երաշխիքային սպասարկման): Գնահատող հանձնաժողովը փաստաթղթերը թերի ներկայացնելու և հրավերի

տեխնիկական բնութագրի պահանջներին անհամապատասխանությունների պատճառով ընկերությանը հաղթող չի ճանաչել: Մրցույթում հաղթող է ճանաչվել հաջորդաբար 2-րդ տեղ զբաղեցրած մասնակիցը 24,780.0 հազ. դրամ արժեքով: Հատկանշական է, որ հաղթողը ներկայացրել է նույն «KATANA KD 225» ապրանքանշանի դիզելային գեներատորը: Պայմանագիր կնքելու համար հաղթող մասնակիցը ներկայացրել է տեխնիկական բնութագիրը, որը, սակայն, չի համապատասխանում նախկին մասնակցի առաջարկված նույն գեներատորի, ինչպես նաև արտադրողի պաշտոնական կայքում տեղադրված նույն «KATANA KD 225» դիզելային գեներատորի տեխնիկական բնութագրին առնվազն 5 մասով: Արդյունքում, գնահատող հանձնաժողովը պետք է ճանաչեր առաջարկված «KATANA KD 225» դիզելային գեներատորը մրցույթով պահանջված գնման առարկայի տեխնիկական բնութագրին չհամապատասխանող և մերժեր պայմանագրի կնքումը: Ավելին, «Էյչ Գրուպ» ՍՊԸ կողմից «KATANA KD 225» դիզելային գեներատորի փոխարեն ՀՀ ոստիկանությանը փաստացի մատակարարվել է այլ դիզելային գեներատոր, որը չի համապատասխանում մրցույթի հրավերի և կնքված պայմանագրով սահմանված գնման առարկայի տեխնիկական բնութագրին:

- ճանապարհային երթևեկության հսկման սարքերի գնման ընթացակարգը իրականացվել է օրենսդրության պահանջներին անհամապատասխան, և մրցույթը չկայացած հայտարարելու և նոր գնման ընթացակարգ սկսելու փոխարեն մրցույթում հաղթող է ճանաչվել և կնքվել է պայմանագիր՝ 197,000.0 հազ. դրամի չափով:
- Գնման գործընթացների էական անհամապատասխանություններով են (բանկային երաշխիքների, նախկինում առկա փորձի, համապատասխան փորձառությանը առնվազն 45 աշխատակցի առկայության և այլն) կնքվել գծանշման, լուսանշանների սպասարկման, ճանապարհային նշանների տեղադրման աշխատանքների պայմանագրերը 1,631,073.6 հազ.դրամ գումարով:


4. Պետական սեփականության մասով

Առկա են մի շարք անհամապատասխանություններ՝ կապված պետական սեփականության օգտագործման մասով, մանավորապես՝ տարածքների վարձակալության տրամադրման գների, ինչպես նաև՝ ժամկետների հետ կապված: Օրինակ՝ 1 քմ վարձավճարի գինը նույն շենքի տանիքում տեղակայված բջջային ռադիոռելեային ալեհավաքների և լարուղիների համար մեկ վարձակալի համար կազմում է 4.0 հազ դրամ, իսկ «եկ այլ վարձակալի հետ կնքված պայմանագրով՝ 15.1 հազ. դրամ:

5. Լիցենզավորման գործընթաց

Հաշվեքննությամբ պարզվել է, որ պահնորդական գործունեության նկատմամբ ստուգումների մեթոդաբանությունը, նկարագիրը և ստուգաթերթերը ՀՀ կառավարության որոշումներով հաստատված չեն, և առ հաշվեքննության պահը չեն կատարվում «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի պահանջները և լիցենզավորված մասնավոր թիկնապահական և պահնորդական կազմակերպությունների գործունեության նկատմամբ պետական վերահսկողությունը:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննության օբյեկտը		
ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայություն		
Հաշվեքննության կատարման ժամկետը		Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը
2019 թվականի մայիսի 6-ից մինչև 2021 թվականի մարտի 31-ը		2018թ. հունվարի 1-ից մինչև 2019թ. մարտի 31-ը
Հաշվեքննության առարկան		Հաշվեքննության մեթոդաբանությունը
Ֆինանսատնտեսական գործունեություն		համապատասխանության հաշվեքննություն Հաշվեքննության շրջանակներում իրականացվել է ստուգում «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամում
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
6	1	6
Հաշվեքննության կարծիք		Հղումը
«Ոչ լիարժեք եզրահանգում» կարծիք		

Ուշագրավ փաստեր

1. «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի և 51.19 հոդվածի համաձայն՝ քրեակատարողական ծառայողն իրավունք չունի կատարելու վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից, նմանատիպ սահմանափակում նախատեսված է նաև քաղաքացիական ծառայողների մասով: Հաշվեքննության ընթացքում պարզվել է, որ 85 քրեակատարողական և քաղաքացիական հատուկ ծառայողներ միաժամանակ կատարել են վճարովի աշխատանք թվով 96 այլ կազմակերպությունում:
2. Քրեակատարողական ծառայության աշխատակիցների տվյալները համադրելով 2018 թվականի վճարվող և չվճարվող արձակուրդների, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակության մեջ գտնվելու ժամանակահատվածները և ՀՀ տարածքից դուրս գտնվելու ժամանակահատվածները, հայտնաբերվել են այնպիսի աշխատակիցներ, որոնք անհարգելի բացակայել են աշխատանքից՝ գտնվելով ՀՀ տարածքից դուրս: Արդյունքում ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության թվով 14 աշխատակիցներ անհարգելի՝ 103 օր բացակա լինելու պարագայում

աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրում նշվել են որպես «ներկա» և ստացել աշխատավարձ:

3. Քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց, ինչպես նաև հղի, կերակրող մայր, անչափահաս և (կամ) հիվանդ կալանավորված անձանց և դատապարտյալներին տրված սննդի օրական նվազագույն սահմանված չափաբաժինների և փաստացի տրված քանակների համադրման արդյունքում պարզվել է, որ սննդամթերքի գերակշռող տեսակների դեպքերում առկա են ՀՀ կառավարության 15.10.2015թ. թիվ 1182-Ն որոշման 1.1 և 1.4 կետերի հավելված 1-ով և հավելված 4-ով սահմանված նվազագույն չափաքանակներից էական շեղումներ (առկա են և՛ չափաքանակից քիչ, և՛ չափաքանակից ավելի դեպքեր):

4. Չեն պահպանվել սննդամթերքի մատակարարման պայմանագրերի տեխնիկական բնութագրերով սահմանված մատակարարման վայրերի մասով պահանջները: Մասնավորապես, սննդամթերքի շարժի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությամբ՝ մատակարար կազմակերպությունները «Գորիս» քրեակատարողական հիմնարկ մատակարարումներ չեն իրականացրել, այլ վերջինիս մատակարարումները իրականացվել են «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկից:

5. ՀՀ ԱՆ ՔԿՎ-ի և Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի միջև 2015թ. և 2016թ. կնքվել է ընդհանուր 2,458,233.0 հազ. դրամի 11 քրեակատարողական հիմնարկներում էներգախնայողության ծրագրերի իրականացման պայմանագրեր: Էներգախնայողության աշխատանքներ իրականացված 6 քրեակատարողական հիմնարկներում էլեկտրաէներգիայի տարեկան սպառման ծավալը էապես գերազանցել է էներգախնայողության աշխատանքներից հետո նախատեսված էլեկտրաէներգիայի ծավալներին: Էներգետիկ ծառայությունների համար ՔԿԾ-ի կողմից վճարված գումարները, էներգախնայողության աշխատանքների արդյունքում ակնկալվող նվազման փոխարեն, 2017թ. ավելացել է 305,999.6 հազ. դրամով, իսկ 2018թ.՝ 166,487.1 հազ. դրամով:

Աջակցություն դատապարտյալին հիմնադրամ

1. ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման համաձայն՝ քրեակատարողական ծառայության կարիքների համար «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված հիմնադրամի արտադրած ապրանքների, կատարած աշխատանքների և մատուցած ծառայությունների մեկ անձից ձեռքբերում կարող է իրականացվել՝ պայմանով, որ գնվելիք ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գները պետք է հավասար կամ ցածր լինեն դրանց շուկայական գներից:

ՔԿԾ-ի և Հիմնադրամի միջև 2018 թվականի ապրիլի 20-ին կնքված պայմանագրի համաձայն, Հիմնադրամը պետք է մատակարարի ընդհանուր 169,893.4 հազ. դրամի հանդերձանք և անկողնային պարագաներ: Վերոնշյալ պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով՝ չունենալով նշված արտադրանքներ արտադրելու հնարավորություններ,

հիմնադրամը մեկ ամիս անց մեկ այլ կազմակերպության հետ կնքել է պայմանագիր, որի համաձայն կապալառուն պարտավորվում է իրականացնել պայմանագրի հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրերով նախատեսված կտորեղենի ձևվածքների և կիսաֆաբրիկատների պատրաստման աշխատանքներ, սակայն տեխնիկական բնութագրերում ներկայացված է պատրաստի արտադրանքների ամբողջական նկարագիր:

Պայմանագրի ընդհանուր արժեքը կազմում է 137,490.7 հազ. դրամ: Արդյունքում ստացվում է, որ նույն տեխնիկական բնութագրերով, նույն քանակությամբ հանդերձանք և անկողնային պարագաներ հնարավոր էր ձեռք բերել 137,490.7 հազ. դրամ արժեքով 169,893.4 հազ. դրամի փոխարեն՝ 32,402.7 հազ. դրամ ավելի էժան: Նմանատիպ անհամապատասխանություն առկա է նաև Հիմնադրամի կողմից 172,840.0 հազ. դրամի հացի մատակարարման պայմանագրերում: Մասնավորապես, Հիմնադրամը հացը մատակարարել է 1 կգ-ը 298 դրամով, սակայն միաժամանակ որոշ քանակությամբ հաց ձեռք է բերել 1 կգ 265 դրամով:

2. Հաշվեքննության արդյունքում արձանագրվել են Հիմնադրամի գույքի օգտագործման մի շարք անհամապատասխանություններ: Մասնավորապես, գույքի օգտագործման պայմանագրերով նախատեսված պարտավորությունների կատարման, այդ պայմանագրերից բխող ներդրումների իրականացման, այդ պայմանագրերի շրջանակներում դատապարտյալների աշխատուժի օգտագործման, վարձակալական վճարների հաշվարկման մասով:

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվեքննության օբյեկտը		
Արտակարգ իրավիճակների նախարարություն		
Հաշվեքննության կատարման ժամկետը	Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	
2020թ. սեպտեմբերի 22-ից 2021թ. մարտի 31-ը	2018թ. հունվարի 1-ից 2020թ. դեկտեմբերի 31-ը	
Հաշվեքննության առարկան	Հաշվեքննության մեթոդաբանությունը	
Փրկարար ծառայություններ	կատարողականի հաշվեքննություն	
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
10	6	6
Համառոտ եզրակացություն		Հղումը

Չեն պահպանվել օգտավետության և արդյունավետության սկզբունքները



Ծանոթություն:

- Փրկարար ծառայության (այսուհետև՝ ՓԾ) կազմակերպման գործընթացում 2018-2020թթ. արձանագրվել են մի շարք անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ: ՓԾ պլանավորման, աշխատանքների կազմակերպման և ծառայության կատարման գործընթացներն իրականացվել են բազմաթիվ թերություններով: ՓԾ պատշաճ մակարդակով չի իրականացրել հասարիքային և նյութական ապահովումը, իսկ կանչերի սպասարկման գործընթացում արձանագրվել են ոչ արդյունավետ ծախսային բաղադրիչներ և տարրեր:
- ՓԾ կազմակերպման գործընթացի համար հաշվետու ժամանակահատվածում հատկացված ֆինանսական միջոցների օգտագործման կառավարումն արդյունավետ չի եղել, և օրենսդրորեն սահմանված նպատակային արդյունքների ամբողջական իրականացմանը չի հանգեցրել:
- Ծախսային արդյունավետության գնահատման նպատակով ելքի ինքնարժեքի (ծախսեր/ելքի քանակ) հաշվարկման ընթացքում, մարտական հաշվարկի ելքի ամենաբարձր ինքնարժեքը 2020թ. գրանցվել է Գեղարքունիքի մարզում՝ 1,521.1 հազ. դրամ, իսկ ամենացածրը՝ Երևան քաղաքում՝ 176.1 հազ. դրամ: 2018-2020թթ. ՓԾ միավոր ելքի միջին ինքնարժեքը կազմել է 331.3 հազ. դրամ: Ազդանշող սարքերի կողմից արձանագրված կեղծ կանչերի հետևանքով հաշվետու ժամանակահատվածում կատարվել է 436,711.8 հազ. դրամի ծախս, իսկ տեղի ուժերով մարված և ինքնամարված հրդեհների համար իրականացված ելքերի հետևանքով՝ 1,651,846.6 հազ. դրամի ծախս:
- Ծախսային արդյունավետության գնահատման նպատակով հաշվարկվել է ևս մեկ բաղադրիչ՝ զանգերի ընդունման և կանչերի արձանագրման ինքնարժեքը՝ մեկ զանգի սպասարկման ինքնարժեքը Երևան քաղաքում կազմել է 376 դրամ, մարզերում՝ 488 դրամ, իսկ մեկ կանչի արձանագրման ինքնարժեքը համապատասխանաբար՝ 25.1 հազ. դրամ և 44.1 հազ. դրամ:

Ուշագրավ փաստեր

- ՀՀ-ում վերջին տասնամյակում արձանագրվել է արտակարգ դեպքերի թվի աճ, որի շուրջ 70%-ը, բաժին է ընկել տեխնաժին դեպքերին: Երևան քաղաքի 6 վարչական շրջաններում հրշեջ մեքենաների թիվը 27-ով պակաս է քաղաքաշինության նորմերով սահմանված քանակից, իսկ Մալաթիա Սեբաստիա և Քանաքեռ Չեյթուն վարչական շրջաններում հրշեջ փրկարարական ջոկատներ տեղակայված չեն:
- Տարերային և տեխնաժին արտակարգ իրավիճակների վերաբերյալ տեղեկատվության հաշվառման, մշակման և պահպանման համար իրավական կարգավորումներ չի սահմանվել, չի մշակվել տեղեկատվության պահպանման ձևաչափի սահմանման որևէ կարգ: Արտակարգ դեպքերի դասակարգման ստանդարտներ չի մշակվել, չի եղել միջազգային պրակտիկայում կիրառվող դեպքերի աճի վաղ ազդանշման համակարգ (Early warning systems):
- Հրշեջ փրկարարական ջոկատներում հերթապահություն իրականացնող մարտական հաշվարկների գերակշիռ մասը սահմանված 6 հրշեջ փրկարարի փոխարեն բաղկացած է 4, երբեմն նաև 3 հոգուց, այն դեպքում, երբ ՓԾ

կենտրոնական ապարատում ներգրավված են ծառայության ավելի քան 20%-ը, իսկ ապարատի մի շարք վարչություններ ունեն 30-ից ավելի հաստիքներ:

- Կենտրոնական ապարատի բարձրագույն սպայական կազմի մեծ թվով պայմանավորված, ինչպես նաև հաշվի առնելով Ծառայության առանձնահատուկ պայմանների համար տրամադրվող հավելավճարների տրամադրման կարգի բացակայությունը՝ 2020թ.-ին ծառայության առանձնահատուկ պայմանների համար նախատեսված հավելավճարների շուրջ 32%-ը (592,785.4 հազ. դրամ) վճարվել է կենտրոնական ապարատի աշխատակիցներին, ովքեր Ծառայության առանձնահատուկ պայմաններին չեն առնչվել, և հրշեջ-փրկարարական աշխատանքներին ուղղակի մասնակցություն որևէ կերպ չեն ունեցել:

- ՓԾ կազմում շահագործվող տրանսպորտային միջոցների 73.2%-ը 10-տարի և ավելի հնության են: Ընդ որում, 2011-2020թթ. արտադրության 114 տրանսպորտային միջոցներից 51-ը Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնին է, և ՓԾ-ին տրամադրվել է ժամանակավոր, անհատույց շահագործման նպատակով: Հին, շահագործումից հանված և ոչ պիտանի 174 տրանսպորտային միջոցի համար նախատեսվել է վառելիքի և պահպանման ծախսեր:

- Փրկարար ծառայողների հանդերձանքով ապահովման համար պետական բյուջեից հատկացված ֆինանսավորումը վերջին տարիներին շուրջ 5 անգամ պակաս է պլանավորվածից, ինչի հետևանքով հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքներին մասնակցող անձնակազմի անհատական պաշտպանական միջոցներով ապահովվածությունը կազմել է ընդամենը 30%:

- Հրշեջ փրկարարական ջոկատների կողմից իրականացված ընդհանուր ելքերի շուրջ 8%-ի դեպքում հրդեհը մարվել է ինքնուրույն կամ տեղի ուժերով՝ նախքան մարտական հաշվարկի ահազանգման վայր հասնելը: Կեղծ ահազանգով պայմանավորված ելքերի թիվը կազմել է ընդհանուր ելքերի շուրջ 7%-ը, որի շուրջ կեսը արձանագրվել է հրդեհների ահազանգման համակարգերի միջոցով:

- Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնում զանգերի գրանցման ողջ գործընթացը իրականացվել է ձեռքի աշխատանքի միջոցով, առկա չի եղել կանչերի տեղորոշման, տվյալների փոխանցման և կանչի աստիճանի որոշման ավտոմատացված համակարգ, որը հնարավորություն կտար ոչ միայն բարձրացնել կանչերի գրանցման և արձագանքման արդյունավետությունը, այլև նվազեցնել կեղծ կանչերի վրա ծախսվող ռեսուրսները: Կանչի աստիճանի որոշումը փաստացի իրականացվել է դիսպետչերի կողմից՝ ահազանգի արդյունքում ստացված տեղեկատվության հիման վրա:

- Թվային քարտեզները և գեոլոկացիոն համակարգերը եղել են ոչ լիարժեք և ունեցել են սահմանափակ հնարավորություններ:

- Կանչի արձագանքման արդյունավետության գնահատման համար չեն սահմանվել ամբողջական արդյունքային չափորոշիչներ, սահմանված որոշ չափորոշիչներ (նորմատիվներ) ակնհայտ ավելի բարձր են եղել փաստացի ցուցանիշներից, համակարգի գործունեության մշտադիտարկում և գնահատում չի իրականացվել:

- Քաղաքացիական պաշտպանության ուժերի հավաքական կենտրոնի թվով 16 հենակետերից 6-ն ընդհանրապես տրանսպորտային միջոց չի ունեցել, իսկ 3 հենակետերում եղել է ընդհանուր օգտագործման օժանդակ ավտոմեքենա, որը նախատեսված չէ հրշեջ-փրկարարական աշխատանքներ կատարելու համար: 2020թ. բոլոր հենակետերը միասին իրականացրել են թվով 84 ելք:
- ՓԾ հաստիքացուցակում ներառված և վերջինիս բյուջետային միջոցներից վարձատրվող թվով 146 փրկարար ծառայողներ, առանց որևէ իրավական հիմնավորման, ՀՀ տարածքում գործող թվով 11 հատուկ նշանակություն ունեցող օբյեկտներում իրականացրել են փրկարար ծառայողին չվերապահված, վերոնշյալ օբյեկտների ամենօրյա ուղղակի պարտականությունը հանդիսացող գործառույթներ:

ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

Հաշվեքննության օբյեկտը		
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն		
Հաշվեքննության կատարման ժամկետը		Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը
2020թ. հունիսի 8-ից մինչև 2021թ. փետրվարի 26-ը		2017թ. հունվարի 1-ից մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ը
Հաշվեքննության առարկան		Հաշվեքննության մեթոդաբանությունը
պահպանման ծախսեր, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտին առնչվող բյուջետային միջոցների օգտագործում, բյուջետային մուտքերի ապահովում և պետական սեփականության օգտագործում		համապատասխանության հաշվեքննություն
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
1	-	1
Հաշվեքննության կարծիք		Հղումը
«ոչ լիարժեք եզրահանգում» կարծիք		

Ուշագրավ փաստեր

1. 2019 թվականի Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային համաժողովի կազմակերպման ծրագրի իրականացման համար տեղեկատվական

տեխնոլոգիաների ու ծառայությունների համաշխարհային այլանսին (WITSA) անհրաժեշտ երաշխիքային կանխավճարի իրականացումն ապահովելու նպատակով պետության կողմից «ԱՏՁՄ» ՀԿ-ին, որը համարվում է Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության իրավահաջորդը, 2015-2019թթ «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» պայմանագրերով հատկացվել է 750.0 հազ. ԱՄՆ դոլար (362,049.0 հազ. դրամ):

2019 թվականի կնքված թիվ 14 պայմանագրի պահանջի համաձայն մինչև 2019 թվականի հոկտեմբերի 30-ը համաժողովի մասնակիցներից հավաքագրված մուտքավճարներից (մասնակցության վճարներից), հովանավորչական փաթեթներից և այլ ներգրավված գումարներից «ԱՏՁՄ» ՀԿ-ն վերը նշված 362,049.0 հազ. դրամը պետք է փոխանցեր ՀՀ պետական բյուջե, սակայն մուտքագրված գումարները առաջնահերթ երաշխիքային կանխավճարի մարմանը ուղղելու փոխարեն օգտագործվել է այլ նպատակներով և առանց նախարարության հետ նախապես համաձայնեցման:

Նախարարության և ՀԿ-ի միջև կնքված համաձայնագրով չեն որոշվել միջոցառման հովանավորներից լրացուցիչ գումարների ներգրավման, դրանց հաշվին ծախսերի իրականացման չափանիշները և չեն սահմանվել լրացուցիչ գումարների հավաքագրման մեխանիզմները, իսկ ՀԿ-ն սահմանված ժամկետներով և կարգով միջոցառման ծրագրի կատարման վերաբերյալ նախարարությանը հաշվետվություն չի ներկայացրել:

«ԱՏՁՄ» ՀԿ-ն դիմել է ՀՀ փոխվարչապետին, խնդրելով պայմանագրում 348,530.6 հազ. դրամ ՀՀ պետական բյուջե վճարելու պարտավորությունը վերախմբագրել նոր բովանդակությամբ, առաջարկելով կազմակերպության կողմից այդ գումարները չվերադարձվեն և դրանց հաշվին կատարվեն այլ պարտավորություններ:

Չնայած, որ ի պատասխան ՀՀ փոխվարչապետի գրությանը ՀՀ բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության և ՀՀ ֆինանսների նախարարների պատասխաններին, որ «ԱՏՁՄ» ՀԿ-ի կողմից առաջարկվող փոփոխություն կատարելը խնդրահարույց է մի շարք իրավական ակտերի դրույթների և ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականության տեսանկյունից, քանի որ այն չի բխում «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով ամրագրված արդյունավետության և օգտավետության սկզբունքների էությունից, ՀՀ կառավարությունը 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1927-Ն որոշմամբ թույլատրել է նախարարության և «ԱՏՁՄ» ՀԿ-ի միջև կնքված պայմանագրում և համաձայնագրում փոփոխություններ կատարելու միջոցով «ԱՏՁՄ» ՀԿ-ին ներել 2015-2019 թվականների «Տեղեկատվական տեխնոլոգիաների ու ծառայությունների համաշխարհային այլանսին» «WITSA» երաշխիքային կանխավճարն իրականացնելու նպատակով պետության կողմից տրամադրված և դեռևս ՀՀ պետական բյուջե չվերադարձված 348,530.6 հազ. դրամի չափով պայմանագրային պարտավորությունը:

2. «Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային համաժողով - 2019» միջոցառման շրջանակներում «ԱՏՁՄ» ՀԿ-ի կողմից կատարված ծախսերը գերազանցել են ՀՀ վարչապետի 2019 թվականի մարտի 14-ի թիվ 238-Լ որոշմամբ հաստատված միջոցառման կազմակերպման նախահաշվով սահմանված ծախսերը՝


791,094.2 հազ. դրամով: Նախահաշվով սահմանված ծախսերից ավելի կատարված ծախսերի վերաբերյալ կազմակերպության կողմից հիմնավորումներ չի ներկայացվել, իսկ վարչապետի որոշմամբ սահմանված ծախսերի նախահաշվի փոփոխություն չի կատարվել:

3. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայություններ ծրագրով «Դիջիթեք 2019» ցուցահանդեսի տաղավարների պատրաստում, «Innoweek.uz 2019» նորարարական և ներդրումային համաժողովի մասնակցություն, «Singapore Week of Innovation and TeCHnology (SWITCH)» ցուցահանդեսին մասնակցություն և «QITCOM» ցուցահանդեսին մասնակցություն միջոցառումների շրջանակներում 14 պայմանագրեր կնքվել են որպես գնում չհանդիսացող ծախս, որոնք սակայն, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի, այդպիսին չեն համարվում:

4. «Դիջիթեք 2019» ցուցահանդեսի տաղավարի վարձակալության համար նախարարությունը «ԱՏՁԱ» ՀԿ-ի հետ 12.11.2019 թվականին կնքել է ծառայությունների մատուցման պայմանագիր 21,000.0 հազ. դրամ գումարով, որի հիման վրա ՀԿ-ից 2019 թվականի հոկտեմբերի 6-ից 9-ը ընկած ժամանակահատվածի համար «Երևան Էքսպո» կենտրոնի 1-ին հարկի տարածքից վարձակալել է 250 ք.մ տարածք /1 ք.մ տարածքի գինը օրական 21,000 դրամ/: «Երևան Էքսպո» կենտրոնի ողջ տարածքը իր հարակից տարածքներով (3300քմ) «ԱՏՁԱ» ՀԿ-ն, 25.09.2019թ-09.10.2019թ ընկած ժամանակահատվածի համար, վարձակալել է «Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ից ընդամենը 10,000.0 հազ. դրամ արժեքով /օրական 1 ք.մ.-ի համար 202 դրամ/: Նախարարության կողմից, «Երևան Էքսպո» կենտրոնի տարածքը վարձակալել է միջնորդված ձևով, 1 ք.մ-ի դիմաց վճարել է օրական 21,000 դրամ, կամ նախարարությունը տարածքը վարձակալել է 103.9 անգամ ավելի թանկ, փասացի վարձակալված գնից:

ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ

Հաշվեքննության օբյեկտը	
ՀՀ կադաստրի կոմիտե	
Հաշվեքննության կատարման ժամկետը	Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը
2019թ. սեպտեմբերի 24-ից մինչև 2020թ. մարտի 31-ը	2017թ. հունվարի 1-ից մինչև 2018թ. դեկտեմբերի 28-ը
Հաշվեքննության առարկան	Հաշվեքննության մեթոդաբանությունը
Անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարման և կադաստրի համակարգի գործունեության ապահովում, ինչպես նաև պետության կողմից գույքի նկատմամբ իրավունքների ճանաչում,	համապատասխանության հաշվեքննություն, կատարողականի հաշվեքննություն

Երաշխավորում և պաշտպանություն		
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
9	-	-
Հաշվեքննության կարծիք , համառոտ նկարագրություն		Հղումը
<ul style="list-style-type: none"> «Ոչ լիարժեք եզրահանգում» կարծիք Չեն պահպանվել տնտեսման և օգտավետության սկզբունքները 		

Ուշագրավ փաստեր

- Կոմիտեի համակարգում առկա չեն կադաստրային քարտեզների համադրման արդյունքում գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման դիմումների կասեցումների կամ մերժումների պատճառների վերաբերյալ խմբավորված տեղեկատվության դաշտեր, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթների կասեցումների և մերժումների պատճառները տարանջատելու մեխանիզմներ, որակավորված մասնագետի սխալ նախագծի կամ նրա կողմից այլ սխալի պատճառով գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման մերժումների կամ կասեցումների վերաբերյալ տեղեկատվություն, ինչը հնարավորություն չի տալիս առավել արդյունավետ իրացնել հաշվեքննվող օբյեկտի նպատակները և գործառույթները:
- 2018թ.-ի նոյեմբերի կառուցվածքային փոփոխությունից (Երևանի տարածքային, մարզերի միավորված և Վայոց ձորի մարզային ստորաբաժանումները միաձուլումից) հետո մարզային միասնական ստորաբաժանումը, Կոմիտեին անհատույց օգտագործման տրամադրված, Փ. Բյուզանդ 1/3 հասցեից (մակերեսը 1,698 ք.մ) տեղափոխվել է Կոմիտաս 35/2: Վերը նշված ժամանակահատվածում «Կենտրոն» սպասարկման գրասենյակը իր գործունեությունը ծավալում է ք. Երևան, Խորենացի 28 հասցեում (մակերեսը 492ք.մ վարձակալական հիմունքներով): 01.12.2018-01.03.2020թթ. Կոմիտեի կողմից Երևան քաղաքում զբաղեցրած տարածքները օպտիմալ օգտագործման արդյունքում տարեկան տնտեսվող գումարը՝ 30,996.0 հազ. դրամ (իսկ 01.12.2018-01.03.2020թթ. ժամանակահատվածում 41,328.0 հազ. դրամ):
- Համակարգի բարելավման շրջանակներում մրցութային ընթացակարգով կնքվել են մի շարք պայմանագրեր, որի արդյունքում ձեռք են բերվել ծրագրեր կամ ծառայություններ, որոնք որպես կանոն չեն օգտագործվել, համապատասխան որակով, քանակով և ժամկետում առավելագույն արդյունքներ չեն ստացվել, որով չի ապահովվել ծախսային արդյունավետությունը.
 - Պայմանագրով ձեռք են բերվել ծրագրային փաթեթների մշակման ծառայություններ («ԱԳՆ «Էլեկտրոնային հյուպատոսության» համակարգին Կոմիտեի ARPIS էլեկտրոնային համակարգի ինտեգրման ծրագրային փաթեթի ձեռք բերման մրցույթի տեխնիկական բնութագրի մշակում)՝ 3,590.0 հազ. դրամ

գումարով: 2020թ.-ի մարտի դրությամբ՝ ծրագիրը դեռևս գտնվում է թեստային փուլում և չէր օգտագործվում:

- Պայմանագրով ձեռք են բերվել 1000 օրինակ «Հայաստանի ազգային ատլաս»-ի Ա և Բ հատորների տպագրական աշխատանքներ՝ 8,500.0 հազ. դրամ գումարով: 19.07.2019թ. ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի կողմից Կոմիտեին ուղղված գրությամբ հանձնարարվել է ատլասները բաշխել տարբեր պետական մարմինների՝ ըստ որոշակի համամասնության: Բաշխումը չի կատարվել, իսկ ատլասները ի պահ են հանձնված «Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ-ին:

- Պայմանագրով ձեռք են բերվել ծրագրային փաթեթների մշակման ծառայություններ (գնահատման էլեկտրոնային համակարգում փոփոխություններ և լրացումներ)՝ 9,850.0 հազ. դրամ գումարով: Ծրագրային փաթեթի 2-րդ մասը (գնահատողի որակավորում ունեցող անձերի և կազմակերպությունների հաշվառման համակարգի ստեղծում) 16.03.2020թ. դրությամբ դեռևս գտնվում էր թեստային փուլում և չէր օգտագործվել Կոմիտեի կողմից:

- Երևան քաղաքում անշարժ գույքի հետ կապված ծառայություններ մատուցելուց առաջ նախապես չեն գանձվել համապատասխան ծառայությունների վճարները, ինչը նաև թողել է իր բացասական հետևանքները, մասնավորապես, ֆինասական պարտավորությունները կատարվել են ուշացումներով և ոչ լիարժեք:
- Շատ դեպքերում կառույցների վաճառքի գնին չեն հավելվել համայնքների կողմից կատարված ծախսերը, իսկ սահմանված վճարների անդորրագրերը կադաստրի էլեկտրոնային տեղեկատվության կազմում արտացոլված չեն:
- Ինքնակամ կառույցով ծանրաբեռնված հողամասերի որոշ աճուրդների դեպքում, չի պահպանվել դիմումատուի կողմից ինքնակամ կառույցի կամ շինության ապամոնտաժված լինելու փաստը հաստատող որակավորում ունեցող անձի եզրակացություն ներկայացնելու պահանջը:

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ և ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐ

Հաշվեքննության օբյեկտը		
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն		
Հաշվեքննության կատարման ժամկետը	Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	
2020թ. սեպտեմբերի 22-ից 2021թ. մարտի 31-ը	2019թ. հունվարի 1-ից 2019թ. դեկտեմբերի 31-ը	
Հաշվեքննության առարկան	Հաշվեքննության մեթոդաբանությունը	
Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ	կատարողականի հաշվեքննություն	
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
2	1	3

Հաշվեքննության կարծիք

Հղումը

Չեն պահպանվել տնտեսաման, օգտավետության և արդյունավետության սկզբունքները



Ուշագրավ փաստեր

- Վարչության կողմից պատշաճ ձևով ու կարգով չեն ընդունվել կանխատեսվող ցուցանիշների և դրանց կատարման վերաբերյալ պայմանագրերով սահմանված տեղեկատվությունը, որի արդյունքում Նախարարության տրամադրված տեղեկատվության մեջ առկա են ոչ ամբողջական, թերի կամ ընդամենագրերի սխալ արձանագրման դեպքեր, թանգարանների հաստիքացուցակներում՝ աշխատակիցների անհատական տվյալների, հանրային ծառայությունների համարանիշերի անճշտություններ, չնույնականացման դեպքեր և այլն: Արդյունքում, կատարողականի հաշվեքննությամբ ստացված արդյունքները ծախսային և նպատակային տեսակետից գնահատվում են որպես ոչ արդյունավետ:
- Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության 2019թ. թիվ 254-Ն հրամանի և հաշվետվությունների՝ «LSREP» համակարգում ներառված ոչ ֆինանսական տվյալների միջև առկա են անհամապատասխանություններ ինչպես Նախարարության կողմից 2017-2019թթ. տրամադրված ընդամենագրերի և ըստ թանգարանների ներկայացված ամփոփ արդյունքային, քանակական ցուցանիշների, այնպես էլ՝ 2019թ. տարեկան ամփոփ ֆինանսական տեղեկատվության սինթետիկ և անալիտիկ մակարդակներում:
- 2017-2018թթ. համեմատական կտրվածքով Նախարարության արդյունքային ոչ ֆինանսական ցուցանիշների և տարեկան ճշտված պլանի նվազման պայմաններում շուրջ 107 մլն դրամով աճել են պետական բյուջեի փաստացի ֆինանսավորված գումարները, և ընդհակառակը, 2018-2019թթ. համեմատությամբ՝ արդյունքային ոչ ֆինանսական ցուցանիշների և տարեկան ճշտված պլանի աճերի պայմաններում շուրջ 328 մլն դրամով նվազել են պետական բյուջեի փաստացի ֆինանսավորումները:
- Նախարարության ենթակայության թվով 15 թանգարաններում թվով 120 աշխատակիցներ 2019թ. ընդհանուր տարեկան հաշվարկով 780 աշխատանքային օրեր գտնվել են արտերկրում, վերջիններիս հավարկվել և վճարվել են աշխատավարձեր՝ 4,253.9 հազ. դրամ: Նշված հանգամանքով պայմանավորված կատարողականի հաշվեքննությամբ արձանագրվել է, որ չի պահպանվել վերոնշյալ գումարի մասով ծախսային արդյունավետության սկզբունքը:
- Նախարարության ենթակայության թվով 21 թանգարանների հաստիքային աշխատակիցների միայն 48.2%-ը են հանդիսանում են թանգարանային բնագավառի մասնագիտական գործառույթներ իրականացնող աշխատակիցներ: Միաժամանակ, թվով 12 թանգարանների թվով 107 աշխատակիցների դեպքում արձանագրվել են նույն կազմակերպությունում աշխատելու և նույն հասցեներում հաշվառվելու փաստեր, իսկ թվով 3 հաստիքային աշխատողներ 2019թ.

միաժամանակ որպես հիմնական աշխատողներ ամբողջ դրույքով աշխատել են տարբեր թանգարաններում:

- Նախարարության ենթակա թանգարաններում գնումները իրականացվում են գերազանցապես «Մեկ անձից գնում» գնման ընթացակարգով, «Procurement.am» տեղեկագրում չեն հրապարակվում «Կնքված պայմանագրի մասին» հայտարարությունները, գնման ընթացքում հայտերի բացման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված տարբերակները հրապարակվում են ուշացումներով:

- Նախարարության ենթակա թանգարաններում բացակայում են գնման նպատակով կատարված գործողությունների և դրանց հիմքերի վերաբերյալ էլեկտրոնային փաստաթղթերը, մասնավորապես՝ մասնակիցներին ուղարկված հրավերները, ինչպես նաև՝ 2019 թվականի տարեկան գնումների պլանով նախատեսված հեռախոսային և համացանցային ծառայությունների մասով գնումներ չեն հայտարարվում, շարունակում են օգտվել ծառայություններից՝ նախորդ տարիներին կնքված պայմանագրերի հիման վրա:

ՎԱՆԱՃՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հաշվեքննության օբյեկտը		
Վանաձորի համայնքապետարան		
Հաշվեքննության կատարման ժամկետը	Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	
2020 թվականի սեպտեմբերի 14-ից մինչև 2021 թվականի մարտի 31-ը	2019 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը	
Հաշվեքննության առարկան	Հաշվեքննության մեթոդաբանությունը	
Ֆինանսատնտեսական գործունեություն	Ֆինանսական հաշվեքննություն, համապատասխանության հաշվեքննություն	
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
4	10	13
Հաշվեքննության կարծիք		Հղումը
«Ոչ լիարժեք եզրահանգում» կարծիք		

Ծանոթություն: Վանաձորի համայնքապետարանի 2019 թվականի եկամուտները կազմել են 2,971,182.5 հազ. դրամ, իսկ ծախսերը՝ 2,979,770.6 հազ. դրամ:

«Ֆինանսական հաշվեքննության» արդյունքում արձանագրվել է 18 դեպքով՝ 283,439.1 հազ. դրամ ընդհանուր գումարով խեղաթյուրումներ, ընդ որում՝ 251,505.9 հազ. դրամը, արձանագրվել է «Համապատասխանության հաշվեքննության» արդյունքում հայտնաբերված անհամապատասխանություններից:

«Համապատասխանության հաշվեքննության» արդյունքում արձանագրվել է 17 դեպքով՝ 336,659.9 հազ. դրամ ընդհանուր գումարով անհամապատասխանություններ:

Ուշագրավ փաստեր

1. Աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներ

Վանաձոր համայնքի 2019 թվականի բյուջեի «Կոմունալ ծառայություններ» հոդվածով՝ ճշտված պլանով նախատեսվել է 301,236.3 հազ. դրամ, փաստացի կատարված ծախսերը կազմել են 269,842.9 հազ. դրամ:

Արձանագրվել են մի շարք անհամապատասխանություններ, որոնք հանգեցրել են ֆինանսական հաշվետվությունների խեղաթյուրման՝ 251,505,9 հազ. դրամ գումարի չափով: Մասնավորապես.

- Ըստ ավագանու կողմից հաստատված սխեմայի՝ սանիտարական մաքրման և աղբահանության ծառայությունները բաժանվել են վեց գոտիների, սակայն փաստացի համայնքում իրականացվող սանիտարական մաքրման և կենցաղային աղբահանության ծառայությունները իրականացվել են յոթ գոտիական բաժանմամբ (անհամապատասխանության հիմքը՝ Համայնքի ավագանու կողմից 2015 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 63-Ա որոշում):
- Սանիտարական մաքրման սխեմայում ներառված փողոցների երթևեկելի մասերի ջրում-լվացում աշխատանքները չի իրականացվել (անհամապատասխանության հիմքը՝ «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ):
- Համայնքի ավագանու կողմից հաստատված սխեմայում բացակայում են համայնքում առաջացող կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի ծավալների մոտավոր հաշվարկը և անհրաժեշտ մեքենա-մեխանիզմներին ներկայացվող պահանջները (անհամապատասխանության հիմքը՝ «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդված):
- Համայնքում օգտահանման ենթակա թափոնների տեսակավորում չի կատարվել, օգտագործման ու վերամշակման համար պայմաններ չեն ստեղծվել, որոնք կնվազեցնեն աղբավայրերում տեղադրվող թափոնների ծավալները (անհամապատասխանության հիմքը՝ «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ):
- Աղբահավաքման կոնտեյներները չունեն կափարիչներ, աղբատար փոխադրամիջոցների թափքերը չեն ավտոմատիկապես փակվում, աղբավայրը չունի տնտեսակենցաղային գոտի, աղբավայրի տարածքը շրջապատից մեկուսացված չէ ցանկապատով (անհամապատասխանության հիմքը՝ ՀՀ առողջապահության նախարարի 22.12.2009թ-ի թիվ 25-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոններ և նորմեր):
- Սանիտարական մաքրման և աղբահանության ծառայություններ մատուցող օպերատորներն աղբարկղներն ամիսը մեկ անգամ չեն ավտոմատիկապես նյութերով, մեքենաները աղբավայր մեկնելուց հետո չեն ենթարկվել ավտոմատիկապես միջոցներով լվացման, աղբը չի տեղադրվել օրենսդրությամբ սահմանված կարգով արտոնագրված աղբավայրում և այլն (անհամապատասխանության հիմքը՝

Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցման պայմանագրերի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներ):

2. Շենք-շինությունների կապիտալ վերանորոգում

2019թ-ին Վանաձորի համայնքապետարանի՝ «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» ծրագրով կատարված աշխատանքները վերաբերում են «Կառլոս Աբովյանի անվան կերպարվեստի թանգարան» ՀՈԱԿ-ի, Վանաձոր համայնքի անձրևաջրատար դիտահորերի, Վանաձորի Հայքի հրապարակի հիմնանորոգմանն ու երգող, պարող և լուսային շատրվանների տեղադրմանը, ինչպես նաև Վանաձորի Հալաբյան փողոցի կամրջի արտաքին լուսավորության ցանցի ապամոնտաժմանը և վերականգնմանը:

Վանաձորի համայնքապետարանի 2019 թվականի բյուջեի «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» հոդվածով՝ ճշտված պլանով նախատեսվել է 715,496.3 հազ. դրամ, փաստացի կատարված ծախսերը կազմել են 363,625.2 հազ. դրամ:

Ընդհանուր առմամբ, արձանագրվել է 10,919.4 հազ. դրամ գումարի չափով անհամապատասխանություն և խեղաթյուրում, մասնավորապես.

- Պայմանագրով ներկայացված շինարարական աշխատանքների կատարողական ակտերը չեն համապատասխանել կատարված աշխատանքների ծավալներին:
- Պայմանագրով աշխատանքների ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված նյութածախսը և նյութերի տեսականին չի համապատասխանել փաստացի ծախսված նյութերի տեսակին և քանակին:

Բացի այդ, տեղի չի ունեցել ապամոնտաժված նյութերի ընդունում-հանձնում և չի կազմվել պիտանելիության որակի գնահատման և հանձնման-ընդունման վերաբերյալ ակտ (անհամապատասխանության հիմք՝ ՀՀ ֆինանսների նախարարի 2016 թվականի մարտի 9-ի «Հանրային հատվածի կազմակերպությունների գործառնությունների փաստաթղթավորման և փաստաթղթաշրջանառության օրինակելի ուղեցույցը հաստատելու մասին» թիվ 142-Ա հրամանի 1.16 կետ):

3. Վանաձորի համայնքապետարանի ենթակայության ներքո գտնվող ՀՈԱԿ-ների աշխատակիցների վարձատրություն

Արձանագրվել են անհամապատասխանություններ Վանաձորի համայնքապետարանի կրթական և մշակութային կազմակերպությունների՝ ավագանու որոշմամբ հաստատված հաստիքացուցակների և աշխատակիցների վարձատրության մասով, մասնավորապես.

- Որոշ մանկապարտեզների հաստիքացուցակներում դաստիարակի, բուժքույրի, տնտեսվարի, դաստիարակի օգնականի, գործավարի, սանիտար դայակի, դերձակի հաստիքները սահմանված են ավելին, քան սահմանված է նախարարի հրամանով հաստատված օրինակելի հաստիքացուցակով, իսկ որոշ ՀՈԱԿ-ներում գործավարի հաստիքները սահմանվել են ավելի քիչ: Արդյունքում,

տեղի է ունեցել տարեկան աշխատավարձի ֆոնդի սխալ պլանավորում (անհամապատասխանության հիմքը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007 թվականի հունվարի 26-ի «ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը, խմբերի խտությունը, նորմատիվները հաստատելու մասին» N 29-Ն հրաման):

- Վանաձորի համայնքապետարանի երկու ՀՈԱԿ-ներում աշխատողը, միաժամանակ զբաղեցրել է տնօրենի (1 հաստիքային միավոր) և գլխավոր բալետմայստերի (1 հաստիքային միավոր) պաշտոնները: Ընդ որում, զբաղվել է նաև մանկավարժական գործունեությամբ՝ համատեղելով տնօրենի պաշտոնը (անհամապատասխանության հիմքը՝ ՀՀ «Աշխատանքային օրենսգրքի» 139-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներ):
- Որոշ աշխատակիցներ աշխատանքային օրերի ընթացքում՝ առանց հրամանների հատել են ՀՀ պետական սահմանը: Սակայն նույն օրերի համար նշված աշխատակիցներին հաշվարկվել և վճարվել է աշխատավարձ (անհամապատասխանության հիմքը՝ Վանաձորի համայնքապետարանի կրթական և մշակութային կազմակերպությունների 2019 թվականի աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրեր):

4. Համայնքապետարանի և նրա ենթակայության ներքո գտնվող ՀՈԱԿ-ների կարիքների համար կատարված գնումներ

Արձանագրվել են նաև Համայնքապետարանի և նրա ենթակայության տակ գտնվող ՀՈԱԿ-ների 2019թ-ին կատարված գնումներում հետևյալ անհամապատասխանությունները.

- Համայնքապետարանի կարիքների համար անհրաժեշտ բազմաֆունկցիոնալ ավտոմեքենա ձեռքբերելու նպատակով հայտարարվել է մրցույթ: Ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական բնութագրերը կազմվել են ոչ ճիշտ՝ հղում անելով կոնկրետ մոդելին /KAMA3 և KO-806/ և կոնկրետ աղբյուրին, որով չի ապահովվել մասնակիցների շրջանակի ընդլայնում և հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար (անհամապատասխանության հիմքը՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ, 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 5-րդ կետեր) :
- Համայնքապետարանի կարիքների համար ձեռք են բերվել նաև համակարգչային տեխնիկա՝ համակարգիչ 2,545.4 հազ. դրամ և տեսախցիկ 609.0 հազ. դրամ արժողությամբ, որոնց տեխնիկական բնութագրերում, խախտելով գնումների մասին օրենսդրությունը՝ նշված է եղել ծագման երկիրը /Չինաստան/: Ընդ որում, տվյալ ապրանքները չեն համարվում բացառություն և դրանց բնութագրումն անհնար չէր առանց տվյալ հղման (անհամապատասխանության հիմքը՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետ):
- ՀՈԱԿ-ներում՝ սննդի ձեռքբերման համար, գնման ընթացակարգի համար սահմանված կարգով հայտում հաշվի չեն առնվել նախկինում նմանատիպ ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման համար պլանավորված մեկ միավորի առավելագույն գինը (անհամապատասխանության հիմքը՝ Գնումների

պլանավորման գործընթացի և ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կարգի կազմակերպման» թիվ 526-Ն որոշման 21-րդ կետի 2-րդ ենթակետի (բ) պարբերություն):

- ՀՈԱԿ-ներում՝ սննդի ձեռքբերման համար, գնման ընթացքում ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու համար՝ առաջարկված գների նվազեցման նպատակով, մասնակիցների հետ բանակցություններ չեն վարվել (անհամապատասխանության հիմքը՝ ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կարգի կազմակերպման» թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետ):

- ՀՈԱԿ-ներում սննդի ձեռքբերման, մասնավորապես, տավարի մսի մրցույթների հաղթած գների և հանձնաժողովի կողմից տրամադրված գնային արդյունքների համադրմամբ հայտնաբերվել է գերաձախս /խեղաթյուրում/ (անհամապատասխանության հիմքը՝ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից տրամադրված 2019 թվականին իրականացված մշտադիտարկման արդյունքներ):

Բացի վերոնշյալից՝ ՀՈԱԿ-ներում առկա են Համայնքապետարանի կողմից հսկողական գործընթացի հետևյալ բացթողումները՝

- Գնումների պլանավորում և իրականացում. պարզվել է, որ նախահաշվային գների որոշման համար որևէ միասնական սկզբունք չի կիրառվել, իսկ նախահաշվային գների և հաղթած գների միջև էական տարբերություն չի եղել: Բացի այդ՝ 2019թ-ի ընթացքում մատակարարների հետ կնքված համաձայնագրերով տեղի է ունեցել որոշակի գնիջեցում (տավարի մսի մասով), սակայն միևնույն մատակարարի կողմից ՀՈԱԿ-ներում դրսևորվել է տարբերակված մոտեցում:

- Գնման մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքի պահպանում. իրականացված մրցույթներում դիտարկվում է մրցակցության ցածր մակարդակ, որն էլ, իր հերթին, բերում է ոչ օբյեկտիվ գնային առաջարկների:

- Սննդի ձեռքբերման համար ՀՈԱԿ-ներին տրամադրվող ֆինանսավորում. համեմատելով սննդի ձեռքբերման համար ֆինանսավորված գումարները ՀՈԱԿ հաճախող սաների թվի հետ պարզվում է, որ դրանց միջև առկա են որոշակի տարբերություններ, այսինքն՝ մեկ սանի հաշվով սննդի գումարի չափը տարբեր է սաների նույն թիվն ունեցող ՀՈԱԿ-ներում, որը տատանվում է 53.2-99.5 հազ. դրամ գումարի միջև:

Հաշվեքննիչ պալատի կողմից ներկայացվել են նշված գործընթացների մասով թերությունների վերացմանն ուղղված առաջարկություններ Վանաձորի համայնքապետարանի և ՀՈԱԿ-ների ներկայացուցիչներին:

5. Հողի հարկի, գույքահարկի և աղբահանության վճարների գծով մուտքեր

Արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները հողի հարկի, գույքահարկի և աղբահանության վճարների գծով.

- Համայնքապետարանի կողմից տարեկան բյուջեի ոչ լիարժեք պլանավորման և իրական ապառքների գումարները նախատեսված պլաններում չներառելու հետևանքով, համայնքի 2019թ-ի բյուջեի հողի հարկի և գույքահարկի գծով ներկայացվել է բարձր կատարողական ցուցանիշ: Ինչպես նաև հայտնաբերվել են անճշտություններ ֆիզիկական անձանց հողի հարկի/գույքահարկի շտեմարանում (*անհամապատասխանության հիմքը՝ «Բյուջեպային համակարգի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասի ե) ենթակետի*):

Հաշվեքննիչ պալատի կողմից՝ նշված անճշտության վերացման նպատակով՝ Համայնքապետարանին առաջարկվում է՝ այսուհետ համայնքի բյուջեի գույքահարկը և հողի հարկը պլանավորելիս հաշվի առնել ապառքները և տարեկան հաշվարկային ցուցանիշները, ինչպես նաև կատարել գույքահարկի և հողի հարկի շտեմարանի ճշտումներ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի հետ, հայտնաբերել և գրանցել չհաշվառված շինությունները/հողերը:

- Շենք-շինությունների հաշվառման և գույքագրման ընթացքում պարզվել է որ, Համայնքապետարանը օրենքով սահմանված կարգով Համայնքի վարչական տարածքում գտնվող, շինության կառուցումն ավարտած, թվով 6 շենք-շինությունների ընթացիկ հաշվառման համար անհրաժեշտ տեղեկություններ չի ներկայացրել անշարժ գույքի կադաստր վարող մարմիններին (*անհամապատասխանության հիմքը՝ «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի*):

- Համայնքապետարանը համայնքի տարածքում գտնվող թվով 22 կիսակառույցների սեփականատերերին օրենքով սահմանված կարգով, գրավոր նախազգուշացում չի արել՝ շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետը երկարաձգելու և այդ ժամկետում կառուցապատումն ավարտելու կամ սեփականության իրավունքով իրեն պատկանող քաղաքաշինական գործունեության օբյեկտն օտարելու մասին: Ինչպես նաև կառուցապատողին որևէ վարչական պատասխանատվության չի ենթարկել, որի արդյունքում կիսակառույցները չեն դարձել եկամտի աղբյուր (*անհամապատասխանության հիմքը՝ ՀՀ կառավարության 19.03.2015թ. N596-Ն որոշման 123 և 125 հոդվածներ*):

- Համայնքապետարանը, իր տարածքում գտնվող, որպես գործող հասարակական նշանակության օբյեկտ, սակայն՝ բնակելի նշանակության, թվով 8 շինությունների մասով չի դիմել անշարժ գույքի կադաստր վարող մարմնին շինությունների գործառնական նշանակությունը փոխելու համար (*անհամապատասխանության հիմքը՝ «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի*):

- Համայնքի փոխադրամիջոցների գույքահարկի 2019թ. շտեմարանում առկա են օտարերկրյա քաղաքացիների սեփականություն հանդիսացող 7,499 ավտոմեքենա (որոնք առաջացել են ԵԱՏՄ երկրների /հիմնականում՝ Ղազախստան/ քաղաքացիների կողմից ժամանակավոր գրանցում ստանալով համայնքում, օտարերկրացու անունով որպես սեփականություն գրանցելով և իրենց հետ իրենց երկիր տանելով նշված փոխադրամիջոցները): Գույքահարկի տարեկան գումարը կազմում է՝ 124,829.1 հազ. դրամ, իսկ համայնքի բյուջեի

պարտքը 31.12.2019թ. դրությամբ կազմում է՝ 152,208.4 հազ. դրամ: Նշված հատկանիշներով հարկատուները Համայնքապետարանի կողմից կարող են համարվել ռիսկային և համայնքի բյուջեի նկատմամբ պարտքը՝ անհուսալի:

- Հաշվեքննության ընթացքում պարզվել է նաև, որ հողի հարկի, գույքահարկի և աղբահանության գծով կան ապառքներ, որոնց առաջացման ժամկետը ավելի վաղ է քան ՀՀ օրենսդրությամբ սահմանված հայցային վաղեմության ժամկետը (անհամապատասխանության հիմքը՝ ՀՀ հարկային օրենսգրքի 44-րդ հոդվածի 2-րդ կետը)

Այս մասով Հաշվեքննիչ պալատը առաջարկում է Համայնքապետարանին իրականացնել հարկատուների ստրատավորում (ենթաբազմությունների տարանջատում)՝ հիմնված ապառքների ժամկետայնության վերլուծության և Համայնքապետարանի՝ շտեմարանում գրանցված հասցեում, ֆիզիկապես չբնակվելու չափանիշի վրա: Նշված ստրատաներով իրականացնել արդյունավետ հսկողության գործընթացներ՝ ապառքների հավաքագրման ուղղությամբ:

ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՔՍԱՏՈՒՐՔԵՐԻ (ՀԱՄԱՐԺԵՔ ԱՅԼ ՏՈՒՐՔԵՐԻ, ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ) ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԵԳՐԵԼՈՒ ԵՎ ԲԱՇԽԵԼՈՒ, ԴՐԱՆՔ ՈՐՊԵՍ ԵԿԱՄՈՒՏ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՆԿԱՏԱՄԲ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ (ԵԱՏՄ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԻԴԻՏԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ)

Հաշվեքննության օբյեկտները		
ԵԱՏՄ անդամ պետությունների գանձապետական և մաքսային մարմիններ		
Հաշվեքննության կատարման ժամկետը		Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը
2020թ. նոյեմբերի 1-ից 2021թ. փետրվարի 19-ը		2019թ. հունվարի 1-ից 2019թ. դեկտեմբերի 31-ը
Հաշվեքննության առարկան		Հաշվեքննության մեթոդաբանությունը
ԵԱՏՄ անդամ պետությունների կողմից ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի և հավաքագրումների) գումարների հաշվեգրման և բաշխման, դրանք, որպես եկամուտ բյուջեներ փոխանցման կարգի պահպանում		Ֆինանսական, համապատասխանության և կատարողականի հաշվեքննություններ
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
1	-	2

Ծանոթություն: ԵԱՏՄ անդամ պետությունների աուդիտի բարձրագույն մարմինների կողմից իրականացվել են անդամ պետությունների լիազոր մարմինների կողմից ներմուծման մաքսատուրքերի գումարների հաշվեգրման ու բաշխման, անդամ պետությունների բյուջեների եկամուտներին դրանց փոխանցման կատարման նկատմամբ համատեղ հսկողական միջոցառումներ: Համաձայն ԵԱՏՄ անդամ պետությունների բարձրագույն հաշվեքննիչ մարմինների կողմից համատեղ հաշվեքննությունն անցկանելու մասին համաձայնագրի, համավարակով պայմանավորված, 2020 թվականի սույն համատեղ միջոցառումներն իրականացվել են յուրաքանչյուր անդամ պետությունում տվյալ պետության բարձրագույն հաշվեքննիչ մարմնի կողմից, իսկ համատեղ հսկողական միջոցառումների արդյունքներն ամփոփվել են առցանց եղանակով:


Համատեղ հսկողական միջոցառումների արդյունքների ամփոփումն և հաշվետվության հաստատումն իրականացվել է աուդիտի բարձրագույն մարմինների համատեղ կոլեգիայի նիստում, որն 2021 թվականի փետրվարի 19-ին անցկացվել է տեսակոնֆերանսի միջոցով:

2019 թվականին ԵԱՏՄ անդամ պետությունների բյուջեներ փոխանցման ենթակա ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխման նորմատիվները սահմանվել են հետևյալ չափով.

- Հայաստանի Հանրապետության համար՝ 1.220 տոկոս,
- Բելառուսի Հանրապետության համար՝ 4.560 տոկոս,
- Ղազախստանի Հանրապետության համար՝ 7.055 տոկոս,
- Ղրղզստանի Հանրապետություն համար՝ 1.900 տոկոս,
- Ռուսաստանի Դաշնության համար՝ 85.265 տոկոս:

Կողմերի բյուջեներ ներմուծման մաքսատուրքերի մուտքագրումների դինամիկան մի շարք տարիների ընթացքում ներկայացված է հիստոգրամի տեսքով ստորև.

Կողմերի բյուջեներ ներմուծման մաքսատուրքերի մուտքագրումները, ընդամենը մլրդ ԱՄՆ դոլար



2019 թվականին ԵԱՏՄ անդամ պետությունների բյուջեներ մուտքագրված ներմուծման մաքսատուրքերի ընդհանուր գումարը կազմել է 12,7 մլրդ ԱՄՆ դոլար, 2018 թվականի համեմատ, ընդհանուր առմամբ, դիտվում է մուտքերի աճ՝ 443,5 մլն ԱՄՆ դոլարով կամ 3,6 %-ով: Տվյալների վերլուծությունը վկայում է նախորդ վերլուծվող ժամանակահատվածների համեմատ 2019 թվականին ներմուծման մաքսատուրքերի մուտքագրումների աճի մասին:

Ներմուծման մաքսատուրքերի մուտքի ամենամեծ աճը գրանցվել է Ղազախստանի Հանրապետությունում, որը 2018 թվականի համեմատ կազմել է 15.3%, Բելառուսի Հանրապետությունում և Ղրղզստանի Հանրապետությունում այն կազմել է 6.0%, Ռուսաստանի Դաշնությունում՝ 5.3% և Հայաստանի Հանրապետությունում՝ 2.5%:

ԵԱՏՄ անդամ պետությունների միջև փոխադարձ հաշվարկների սալդոն 2019 թվականին դրական է ձևավորվել Հայաստանում, Ղազախստանում և Ղրղզստանում և կազմել է համապատասխանաբար 24.1 մլն ԱՄՆ դոլար, 221.3 մլն ԱՄՆ դոլար և 80.7 մլն ԱՄՆ դոլար, իսկ Բելառուսի Հանրապետությունում և Ռուսաստանի Դաշնությունում սալդոն բացասական է և կազմել է համապատասխանաբար՝ 92.2 մլն ԱՄՆ դոլար և 232.6 մլն ԱՄՆ դոլար:

Ուշագրավ փաստեր

Ղազախստանի Հանրապետությունում ընդերքօգտագործողների կողմից 2014-2018թթ. վճարված ներմուծման մաքսատուրքերի գումարները Ղազախստանի Հանրապետության լիազոր մարմնի կողմից չեն բաշխվել ԵԱՏՄ անդամ պետությունների միջև: Արդյունքում չի կատարվել աուդիտի բարձրագույն մարմինների կողմից 2019 թվականի վերահսկողության արդյունքներով տրված հանձնարարականը:

Արձանագրվել են Բելառուսի Հանրապետության գլխավոր պետական գանձապետարանի, Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապետարանի կոմիտեի և Ղրղզստանի Հանրապետության Ֆինանսների նախարարության Կենտրոնական գանձապետարանի կողմից ներմուծման մաքսատուրքերի հաշվեգրման և բաշխման վերաբերյալ հաշվետվությունն ոչ ժամանակին (տեղական ժամանակով ժամը 16:00-ից ուշ) ուղարկելու առանձին դեպքեր:

2019 թվականին ներմուծման մաքսատուրքերի վճարման հետ կապված՝ կենտրոնական մաքսային մարմինների միջև տեղեկատվության փոխանակումը, ինչպես նաև այն Եվրասիական տնտեսական հանձնաժողով ներկայացնելն իրականացվում են էլեկտրոնային կապուղիներով՝ այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի գրաֆիկական էլեկտրոնային պատճենի տեսքով՝ դրանք որպես եկամուտ ԵԱՏՄ անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու միջոցով:

2019 թվականին Կենտրոնական մաքսային մարմինների միջև Միության ինտեգրված տեղեկատվական համակարգի ընդհանուր գործընթացի օգտագործմամբ տեղեկատվության փոխանակում չի իրականացվել:

ՄԱՍ 2. ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննիչ պալատն իր գործունեությունը կազմակերպում է հերթական և արտահերթ նիստերի միջոցով: Հաշվետու ժամանակահատվածում Հաշվեքննիչ պալատն անցկացրել է 22 նիստ, որոնցից 10-ն՝ արտահերթ: Հաշվեքննիչ պալատի բոլոր նիստերի օրակարգերն օրենքով սահմանված կարգով նիստից երկու օր առաջ ուղարկվել են Ազգային ժողով և Կառավարություն: Նույն ժամանակահատվածում Հաշվեքննիչ պալատի կողմից ընդունվել է 253 որոշում, որոնց գերակշիռ մասը՝ 206-ն, առնչվում է հաշվեքննության գործընթացին, 13-ը՝ Հաշվեքննիչ պալատի գործունեության մեթոդական և իրավական ապահովմանը, 15-ը՝ անձնակազմի կառավարման հարցերին, 19-ը՝ ֆինանսատնտեսական գործունեությանը:

Հաշվեքննիչ պալատի նիստերում կայացված որոշումները (բացառությամբ անհատական իրավական ակտերի, հաշվեքննության ու ստուգման առաջադրանքների) երեք աշխատանքային օրվա ընթացքում հրապարակվել են Հաշվեքննիչ պալատի www.armsai.am պաշտոնական կայքում:

Կայքում հրապարակված բովանդակությունը համառոտ ներկայացված է ստորև.

2020թ. պաշտոնական կայքում հրապարակված նյութերի վերաբերյալ բովանդակություն	
	Հրապարակումների թիվ
Հաշվեքննիչ պալատի որոշումներ	101
Հաշվեքննիչ պալատի նիստերի լուսաբանում	22
Միջազգային հարթակներ և համագործակցություն	5
Թափուր աշխատատեղերի և փորձագետների ներգրավման հայտարարություններ	36
Այլ տեղեկատվություն	12

Հաշվետու ժամանակահատվածում զանգվածային լրատվամիջոցները ակտիվորեն լուսաբանել են Հաշվեքննիչ պալատի մամուլի հաղորդագրությունները և հաշվեքննության արդյունքները: Հաշվեքննիչ պալատը էլեկտրոնային լրատվամիջոցների կողմից հիշատակվել է ավելի քան 2,313 անգամ⁵:

Հաշվեքննիչ պալատում հաստիքների առավելագույն քանակը 155-ն է: Հաշվեքննիչ պալատի մարդկային ռեսուրսների վերաբերյալ որոշ տվյալներ ներկայացված են ստորև բերված աղյուսակներում.

⁵ Աղբյուրը՝ Rumorsmonitoring.com

Աշխատակիցների տարիքային խմբերը

I. Աշխատակիցների տարիքային խմբեր	Քանակ	Տոկոս
1. 30-ից երիտասարդ	11	7.6%
2. 30-40 տարեկան	35	24.5%
3. 40-50 տարեկան	41	28.6%
4. 50-60 տարեկան	28	19.6%
5. 60-ից մեծ	28	19.6%
II. 15 տարի և ավելի պետական ծառայության աշխատանքային ստաժ ունեցողներ	21	
III. Միջին տարիք	41	

Աշխատակիցների շարժը

Աշխատակիցների ընդհանուր շարժ (ընդամենը)	55
1. պետական ծառայության հաստիքներում աշխատակիցների շարժ	42
<i>պետական ծառայությունից ազատված</i>	19
<i>պետական ծառայության ընդունված</i>	23
2. պայմանագրային աշխատակիցների շարժ	13

Աշխատակիցների որակավորման բարձրացման շրջանակը

Վերապատրաստման ծրագրեր	Մասնակիցներ
պետական ծառայության /քաղաքացիական ծառայության վերապատրաստումներ	15
ծրագրային բյուջետավորման վերաբերյալ	5
GIZ աջակցությամբ «Excel» ծրագրային ապահովման առցանց դասընթացներ	20

2020 թվականին հաշվեքննիչ պալատի պահպանման նպատակով տրամադրվել է շուրջ 1,028.5 մլրդ դրամ կազմելով ծրագրի 99.7%-ը: Հաշվեքննիչ պալատի պահուստային ֆոնդի գծով նախատեսված 18.9 մլն դրամն օգտագործվել է 100%-ով: Հաշվեքննիչ պալատի կարողությունների զարգացմանը տրամադրվել է 23.4 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 99.5%-ը:

Համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի՝ 2020 թվականին Հաշվեքննիչ պալատի 2019 թվականի ֆինանսական հաշվետվությունը ենթարկվել է արտաքին աուդիտի՝ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից մրցութային հիմունքներով ընտրված արտաքին աուդիտորական կազմակերպության կողմից: Սույն աուդիտորական եզրակացությունը հրապարակված է Հաշվեքննիչ պալատի պաշտոնական կայքում:

2020 թվականի ֆինանսական հաշվետվությունը նույն ընթացակարգով 2021 թվականին կենթարկվի արտաքին աուդիտի, որի ավարտվելուն պես Հաշվեքննիչ պալատը պաշտոնական կայքում կիրապարակի աուդիտորական եզրակացությունը:

2020 թվականի գործունեության ծրագրի 3-րդ մասի շրջանակներում Հաշվեքննիչ պալատում ձևավորված մասնագիտական աշխատանքային խումբն աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային ստանդարտների SAI-PMF մեթոդաբանությամբ իրականացրել է ՀՀ հաշվեքննիչ պալատի 2019 թվականի գործունեության կատարողականի ինքնագնահատման աշխատանքներ: Սա թվով երկրորդ ինքնագնահատումն էր: Նախորդ SAI-PMF ինքնագնահատման աշխատանքներն իրականացվել էին 2018թ.-ին Վերահսկիչ պալատի 2016-2018թթ. գործունեության կատարողականի նկատմամբ, որն անցել էր անկախ հավաստման գործընթաց աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) զարգացման նախաձեռնության (IDI) կողմից: Համաձայն IDI-ի անկախ հավաստիացման՝ Վերահսկիչ պալատի գնահատման միավորը գտնվում էր 1-2 միավորների միջակայքում (SAI-PMF գնահատման սանդղակը մեկից չորս միավորների միջակայքն է): Իսկ արդեն Հաշվեքննիչ պալատի 2019թ. գործունեության ինքնագնահատման արդյունքներով կատարողականի գնահատականը բարձրացել է մեկ մակարդակով՝ դառնալով 2 միավոր: Սույն ինքնագնահատման զեկույցը Հաշվեքննիչ պալատի կողմից ուղարկվել է IDI կազմակերպությանը անկախ հավաստիացման նպատակով, որը ստանալուն պես Հաշվեքննիչ պալատը կորոշի շահառուների շրջանում արդյունքների հրապարակայնացման ձևաչափը:

Հաշվետու տարին կարևոր էր Հաշվեքննիչ պալատի համար անհրաժեշտ անկյունաքարային նշանակություն ունեցող հաշվեքննության մեթոդաբանական հիմքի ստեղծման առումով: Մասնավորապես, Հաշվեքննիչ պալատի կողմից մշակվել և հաստատվել են.

- ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանությունները,
- պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցը,
- հաշվեքննության փաստաթղթավորման ուղեցույցը,
- ընթացիկ եզրակացության նախագծի և դրան կից ներկայացվող փաստաթղթերի պատրաստման ուղեցույցը,
- ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական վճարահաշվարկային և հաշվետվությունների էլեկտրոնային համակարգերից հաշվեքննության նպատակով անհրաժեշտ տեղեկատվությունից օգտվելու ուղեցույցները,
- Հաշվեքննիչ պալատում որակի կառավարման համակարգի ստեղծման հայեցակարգը:


Հաշվեքննիչ պալատը 2020 թվականին նույնպես ծավալուն աշխատանքներ է տարել ներքին իրավական ակտերի բարելավման ուղղությամբ: Մշակվել և հաստատվել են՝

- հաշվեքննողների համար ներքին ծառայողական հարաբերությունների շրջանակում կիրառվող էթիկայի կանոնները,
- հաշվեքննիչ պալատի անդամների գործունեությանն առնչվող միջազգային իրավական պրակտիկայով պայմանավորված ուղենշային չափանիշները,
- հաշվեքննիչ պալատի մասնագիտական կարողությունների շարունակական զարգացման ծրագիրը:

Լրամշակվել են.

- Հաշվեքննիչ պալատի կանոնակարգը,
- Հաշվեքննիչ պալատի կանոնադրությունը,
- Հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրի կազմման համար հիմք հանդիսացող ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանությունը:

Հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրի կազմման համար հիմք հանդիսացող ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանության հիման վրա մշակվել և Հաշվեքննիչ պալատի կողմից հաստատվել է Հաշվեքննիչ պալատի 2021 թվականի գործունեության ծրագիրը, որը հրապարակված է Հաշվեքննիչ պալատի պաշտոնական կայքում:

<p>Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2021 թվականի գործունեության ծրագիր</p>	<p>Հղում</p>
	

Ռազմավարական զարգացման ծրագիր

Հաշվեքննիչ պալատը Եվրոպական միության (այսուհետև՝ ԵՄ) և տնտեսական համագործակցության զարգացման կազմակերպության (այսուհետև՝ ՏՀԶԿ) համատեղ ՍԻԳՄԱ ծրագրի մասնագիտական աջակցությամբ մշակել և հաստատել է 2020-2023 թվականների ռազմավարական զարգացման ծրագիրը և դրա իրականացման միջոցառումների պլանը: Առաջիկա երեք տարիների համար ռազմավարական փաստաթղթով սահմանվել են 4 հիմնական նպատակներ.

1. իրավական դաշտի բարելավում,
2. հաշվեքննության ազդեցության բարելավում,
3. մասնագիտական կարողության և հաշվեքննության հմտությունների արդիականացում,
4. հաղորդակցման և համագործակցության ուղիների հզորացում:

Վերոնշյալ նպատակների իրագործման համար սահմանվել են 13 ենթանպատակներ և դրանցով պայմանավորված 78 միջոցառում՝ հստակ արդյունքային ցուցանիշներով:

Հաշվեքննիչ պալատի ռազմավարության միջոցառումների իրականացման գործում ակտիվորեն ներգրավված են Հաշվեքննիչ պալատի հետ համագործակցային

ավանդույթներ և հարուստ փորձ ունեցող միջազգային կազմակերպությունները և գործընկեր աուդիտի բարձրագույն մարմիններ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննիչ պալատի միջազգային համագործակցության շրջանակը ներառում է միջազգային կազմակերպությունների հետ համատեղ ծրագրերի իրականացումից մինչև մասնագիտական հարթակներում երկկողմ և բազմակողմ համագործակցությունը: Չնայած հաշվետու տարվա համավարակով պայմանավորված մարտահրավերներին՝ միջազգային համագործակցության ուղղությունները եղել են բազմաբնույթ, իսկ հաղորդակցությունը եղել է մեծապես առցանց տեղեկատվական տեխնոլոգիաների լուծումների կիրառմամբ:

ԵՄ և ՏՀԶԿ համատեղ ՍԻԳՄԱ ծրագրի և Հաշվեքննիչ պալատի միջև բարձր մակարդակի համագործակցությունը շարունակվել է նաև հաշվետու տարում: ՍԻԳՄԱ ծրագրի մասնագիտական աջակցությամբ մշակվել է՝

- Հաշվեքննիչ պալատի 2020-2023 թվականների ռազմավարական զարգացման ծրագրի և դրա իրականացման միջոցառումների պլանը,
- հաշվեքննողների համար ներքին ծառայողական հարաբերությունների շրջանակում կիրառվող էթիկայի կանոնները,
- հաշվեքննիչ պալատի անդամների գործունեությանն առնչվող միջազգային իրավական պրակտիկայով պայմանավորված ուղենշային չափանիշները:

Ռազմավարական զարգացման եռամյա ծրագրի իրականացման շրջանակներում ՍԻԳՄԱ ծրագրի հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն իրավական դաշտի բարելավման, հաղորդակցության ռազմավարության մշակման և այլ միջոցառումներում համատեղ աշխատանքների մասին:

ՍԻԳՄԱ-ն նաև ստանձնել է Հաշվեքննիչ պալատի և արտաքին շահառուների հետ բազմակողմ համագործակցության կազմակերպիչ յուրօրինակ դեր: Մասնավորապես, 2020 թվականի դեկտեմբերի 15-ին ՍԻԳՄԱ-ի աջակցությամբ անցկացվել է Ռազմավարական զարգացման ծրագրի առցանց շնորհանդես-նիստը, որի ընթացքում հրավիրված հյուրերին ներկայացվել է Հաշվեքննիչ պալատի 2020-2023 թվականների ռազմավարական զարգացման ծրագիրը և դրա իրականացման միջոցառումների պլանը: Առցանց նիստին, մասնակցում էր Հաշվեքննիչ պալատի արտաքին շահառուների ողջ միջավայրը՝ ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ ֆինանսների նախարարության, Համաշխարհային բանկի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID), Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ), ԱՄՆ աուդիտի բարձրագույն մարմնի, Շվեդիայի աուդիտի բարձրագույն մարմնի ներկայացուցիչներ և այլ միջազգային փորձագետներ:

Որպես Հաշվեքննիչ պալատի երկարամյա գործընկեր՝ ՀՀ-ում «Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությունը» (այսուհետև՝ GIZ) շարունակել է իր ՀՀ հանրային ֆինանսների կառավարման ոլորտի աջակցի կարևոր առաքելությունը:

Մասնավորապես, GIZ-ի աջակցությամբ կազմակերպվել են Excel ծրագրային ապահովման առցանց դասընթացներ Հաշվեքննիչ պալատի թվով 20 աշխատակիցների համար: GIZ-ը նաև տրամադրել է տեխնիկական աջակցություն Հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրի շրջանակներում հաշվեքննության աշխատանքներին որակավորված աուդիտորի ներգրավմամբ:

Հաշվեքննիչ պալատի և GIZ-ի համագործակցությունը կշարունակվի նաև հաջորդ տարիներին՝ պալատի ռազմավարական զարգացման եռամյա ծրագրի նպատակներին համահունչ:

2020թ. նշանավորվել է Հաշվեքննիչ պալատի, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (այսուհետև՝ USAID) և ԱՄՆ աուդիտի բարձրագույն մարմնի (այսուհետև՝ GAO) եռակողմ համագործակցության հենքի ստեղծմամբ: Մասնավորապես, հաշվետու տարում ԱՄՆ Կառավարության կողմից USAID միջոցով միջգերատեսչական պայմանագիր է ստորագրվել GAO-ի աուդիտի գերազանցության կենտրոնի հետ՝ Հայաստանի Հանրապետության աուդիտի բարձրագույն մարմնին՝ ՀՀ հաշվեքննիչ պալատին, տեխնիկական օժանդակության տրամադրման շուրջ:

«Տեխնիկական օժանդակություն ՀՀ հաշվեքննիչ պալատին» ծրագրի մեկնարկը տրվել է 2020թ. հունիսի 23-ին տեղի ունեցած առցանց ձևաչափով համատեղ միջոցառմանը:

Սա USAID հայաստանյան գրասենյակի երկրորդ միջգերատեսչական պայմանագիրն է GAO աուդիտի գերազանցության կենտրոնի հետ: Նախորդ համաձայնագրով GAO-ն Հաշվեքննիչ պալատում իրականացրել է կարիքների գնահատում՝ վերջինիս ուժեղ և թույլ կողմերն ու կարիքները վեր հանելու նպատակով: Այս ծրագրով նախատեսված օրակարգը հիմնված է կարիքների գնահատման արդյունքում արված առաջարկությունների վրա և համահունչ է ՀՀ Կառավարության՝ պետական ֆինանսների կառավարման (ՊՖԿ) բարեփոխումների ռազմավարությանը: Մեկ միլիոն ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով այս եռամյա ծրագիրը կիրականացվի GAO-ի մասնագիտական կարողություններով, որը համարվում է «ոսկե չափանիշ» աուդիտի բարձրագույն մարմինների շրջանում:

Հաշվետու տարում USAID-ին Հաշվեքննիչ պալատին աջակցել է նաև Հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրի շրջանակներում հաշվեքննություններին որակավորված աուդիտորի ներգրավման, ինչպես նաև մի շարք ISSAI ստանդարտների թարգմանության աշխատանքներում:

ՀՀ ազգային ժողովի և Շվեդիայի պառլամենտի համագործակցության խորացմանը զուգընթաց հաշվետու տարում Հաշվեքննիչ պալատը սերտ կապեր է հաստատել Շվեդիայի ազգային աուդիտի գրասենյակի հետ: Ձեռք են բերվել պայմանավորվածություններ առաջիկայում փոխըմբռնման հուշագրի կնքման և համատեղ եռամյա համագործակցության ծրագրի հաստատման ուղղությամբ, որի հիման վրա Շվեդիայի ազգային աուդիտի գրասենյակը կհզորացնի Հաշվեքննիչ պալատի կարողությունները կատարողականի հաշվեքննության, շահառուների

(հատկապես օրենսդիր մարմնի) հետ արդյունավետ հաղորդակցության և այլ համաձայնեցված ուղղություններով:

Հայաստանի, Ուկրաինայի, Մոլդովայի, Վրաստանի, Բուլղարիայի, Հունաստանի, Թուրքիայի աուդիտի բարձրագույն մարմիններն իրենց երկրներում Սևծովյան ավազանի երկրների անդրսահմանային համագործակցության ծրագրի շրջանակներում յուրաքանչյուրն իր երկրում ամենամյա հատուկ աուդիտներ է անցկացնում: Հաշվետու տարվա ընթացքում Հաշվեքննիչ պալատն ակտիվ համագործակցել է միջազգային իր գործընկերների հետ և հաջողությամբ ավարտել է ՀՀ ֆինանսների նախարարությունում (որպես հսկողության գծով համակարգողի) և ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում (որպես ծրագրի ազգային մարմնի) նախատեսված աուդիտները, որոնց արդյունքները ներառվել են Եվրոպական հանձնաժողովին ներկայացված աուդիտորական միասնական հաշվետվությունում, որի պատրաստման համար պատասխանատու է Ռումինիայի աուդիտի բարձրագույն մարմինը: Աուդիտորական առաջադրանքը ներառել է Հայաստանի Հանրապետության, Եվրոպական հանձնաժողովի և Ռումինիայի տարածքային զարգացման, հանրային կառավարման և Եվրոպական հիմնադրամների նախարարության միջև 2016 թվականի նոյեմբերի 25-ին, 2017 թվականի հունվարի 11-ին և 2017 թվականի փետրվարի 6-ին ստորագրված «ԵՀԳ անդրսահմանային համագործակցության 2014-2020 թվականների ծրագրի համար «Սևծովյան ավազան 2014-2020» համատեղ գործառնական ծրագիր» ֆինանսավորման համաձայնագրի շուրջ, ԵՄ թիվ 897/2014 Կանոնակարգի և Աուդիտի ռազմավարության հիման վրա «համակարգի աուդիտ»-ի իրականացումը և նախորդ տարիներին ներկայացված առաջարկությունների կատարման ընթացքի վերաբերյալ հետհսկողության իրականացումը: Աուդիտորական աշխատանքների իրականացումը կրում է շարունակական բնույթ:

Երկկողմ և բազմակողմ համագործակցության շրջանակներում տեղի են ունեցել նաև տեղեկատվության և փորձի փոխանակման նպատակով մի շարք միջոցառումներ.

- Հաշվեքննիչ պալատի ներկայացուցիչները մասնակցել են ԵՎՐՈՍԱԻ և ԻՆՏՈՍԱԻ կողմից «ԿՈՎԻԴ-19» համավարակի մարտահրավերներին համատեղ դիմագրավելու նպատակով կազմակերպված հեռավար աշխատաժողովներին:
- Հաշվեքննիչ պալատի պատվիրակությունը մասնակցել է INTOSAI առանցքային կայուն զարգացման ցուցանիշների աշխատանքային խմբի առցանց անդրանիկ նիստին:
- Հաշվեքննիչ պալատի պատվիրակությունը մասնակցել է EUROSAI-OLACEFS համատեղ առցանց աշխատաժողովին:
- Հաշվեքննիչ պալատի ներկայացուցիչները մասնակցել են ASOSAI կողմից «կայուն զարգացման նպատակների իրականացման աուդիտի» և «աուդիտի բարձրագույն մարմինների արձագանքը «ԿՈՎԻԴ-19» համավարակին» թեմաներով կազմակերպված առցանց սեմինարներին:

ՄԱՍ 3. 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ծանոթություն: «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի հիմքով՝ Հաշվեքննիչ պալատի 2020թ. գործունեության տարեկան հաղորդման մեջ ներառվել է 2019 թվականի պետական բյուջեի կատարողականի հաշվեքննության վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը:

2020 թվականին Հաշվեքննիչ պալատը իրականացրել է 2020 թվականի պետական բյուջեի կատարումը՝ պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման ֆինանսական և համապատասխանության հաշվեքննությամբ: Հաշվեքննությունների արդյունքների հիման վրա Հաշվեքննիչ պալատը պատրաստել է 2020 թվականի պետական բյուջեի կատարման եզրակացություն՝ փախված հաշվեքննության կարծիք: Հաջորդ տարվա տարեկան հաղորդման մեջ առաջին անգամ կներառվի նոր ձևաչափով իրականացված հաշվեքննությունների հիման վրա կազմված՝ 2020 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացության մասին տեղեկատվությունը:

«Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ» ՀՀ հաշվեքննիչ պալատի եզրակացությունը հաստատվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի 2019 թվականի մայիսի 26-ի թիվ 59-Ա որոշմամբ: Եզրակացությամբ արձանագրվել են մի շարք խնդիրներ և ներկայացվել են 7 առաջարկություններ:

Սկսած 2008 թվականից՝ Վերահսկիչ պալատը, այնուհետև նաև Հաշվեքննիչ պալատն առաջարկել է, որ Հայաստանի Հանրապետությանը և համայնքներին ամրագրված բոլոր բյուջետային միջոցները շրջանառվեն գանձապետական միասնական հաշվով: Կառավարությունը, ընդհանուր գալով այդ առաջարկությանը, 2010 թվականից սկսեց աստիճանաբար վարկային և դրամաշնորհային միջոցների մի մասը շրջանառել գանձապետական համակարգով (հատկապես «Ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկներին ամրագրած միջոցների մասով): Իսկ 2018 թվականի վերջից՝ այդ գործընթացը իրականացավ նաև ՊՈԱԿ-ների մասով: Այնուամենայնիվ, ՀՈԱԿ-ների, պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների և հիմնադրամների հաշիվները դեռևս շարունակվում են մնալ առևտրային բանկերում, ինչը չի բխում հանրային միջոցների կառավարման թափանցիկության և վերահսկելիության պահանջներից և հանգեցնում է դրանց օգտագործման գործընթացում հնարավոր ռիսկերի ավելացմանը:

Պետական բյուջեի կատարման մասով արձանագրվել են մի շարք խնդիրներ, որոնք հատկապես վերաբերում են պետական բյուջեի կատարման թափանցիկության, վերահսկելիության և հանրային հաշվետվողականության ապահովման գործընթացներին: Հաշվեքննիչ պալատն առաջարկել է.

- «ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում, ինչպես նաև պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվություններում ներառել ըստ եկամտատեսակների հարկային եկամուտների պլանի, ինչպես նաև ճշտված պլանի ցուցանիշները,

- ձեռնարկել քայլեր բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության կամ Հաշվեքննիչ պալատին ներկայացվող ՀՀ պետական բյուջեի կատարողականի փաթեթի մեջ «ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հավելվածի՝ ՀՀ կենտրոնական բանկի 2019 թվականի վարչական ծախսերի կատարման վերաբերյալ տեղեկատվությունը ներառելու ուղղությամբ,
- «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժույթային պետական պարտատոմսերի սպասարկման ծախսերը ներառել ներքին պետական պարտքի սպասարկման փաստացի ծախսում: Սույն առաջարկությունը բխել է Հաշվեքննիչ պալատի այն եզրահանգումից, որ 2014 թվականից մինչև այժմ ՀՀ պետական բյուջեի կատարողականի հաշվետվություններում՝ ներքին տոկոսավճարներ հոդվածում, ներառված չեն եղել ռեզիդենտների կողմից ձեռք բերված արտարժույթային պետական պարտատոմսերի համար վճարված տոկոսավճարները, որոնք 2019 թվականին կազմել են 38.1 մլրդ ՀՀ դրամ:

Հաշվեքննիչ պալատի կողմից վերլուծվել է նաև պետական բյուջեի ոչ ֆինանսական ցուցանիշների կատարողականը: Վերլուծությամբ պարզվել է հետևյալը.

- 337 ծրագրային միջոցառումների գծով (ընդհանուրի 22.9%-ը) որևէ ոչ ֆինանսական ցուցանիշ սահմանված չի եղել,
- 735 ծրագրային միջոցառումների գծով (ընդհանուրի 49.9%-ը) սահմանված է եղել միայն մեկ տեսակի (հիմնականում՝ քանակական) ոչ ֆինանսական ցուցանիշ, ինչը բավարար չէ ծրագրային միջոցառումների արդյունքների լիարժեք գնահատման, հետևաբար նաև՝ դրանց կատարման արդյունավետության լիարժեք գնահատման համար,
- միայն 86 ծրագրային միջոցառումների գծով (ընդհանուրի 5.8%-ը) է սահմանված եղել ոչ ֆինանսական ցուցանիշների տեսակային լիարժեք կազմ,
- մի շարք ծրագրային միջոցառումների գծով, չնայած ֆորմալ առումով սահմանված են արդյունքային ցուցանիշներ, այնուհանդերձ վերջիններիս բովանդակությունը թույլ չի տալիս պատշաճ գնահատել միջոցառման կատարողականը,
- մի շարք ծրագրային միջոցառումների վրա կատարված ծախսի ճշտված պլանի և փաստացի ցուցանիշները պլանավորված ցուցանիշներից էապես տարբերվելու պայմաններում, արդյունքային ցուցանիշները պլանավորվածի համեմատությամբ մնում են անփոփոխ:

Հաշվեքննիչ պալատն ընդգծել է պետական բյուջեի ոչ ֆինանսական ցուցանիշների հետ կապված իրավիճակի շտկման կանոնությունը, հատկապես՝ լիարժեք ծրագրային բյուջետավորմանն անցում կատարելու համատեքստում: Արդյունքում, առաջարկվել է.

- սահմանել ոչ ֆինանսական ցուցանիշներ այն քաղաքականության միջոցառումների գծով, որոնց համար այդպիսիք դեռևս սահմանված չեն,

- սահմանել ոչ ֆինանսական ցուցանիշների տեսակային առավել լիարժեք կազմ՝ մեծացնելով ոչ քանակական տեսակի ոչ ֆինանսական ցուցանիշների ծածկույթը՝ հատկապես շեշտադրելով որակական տեսակի ոչ ֆինանսական ցուցանիշների ծածկույթի ընդլայնումը:

Պետական բյուջեի ծախսերի ծրագրային դասակարգման վերաբերյալ ուսումնասիրության արդյունքում Հաշվեքննիչ պալատն արձանագրել է.

- «ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված թվով 79 միջոցառումներ՝ ավելի քան 46 մլրդ դրամ ընդհանուր ծավալով, չի կատարվել, այլ կերպ ասած, դրանց գծով վճարումներ չեն իրականացվել,
- թվով 27 միջոցառումներ, 1.1 մլրդ դրամ ընդհանուր ծավալով, «ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված չեն եղել, ճշտված ծրագրով նախատեսվել են, սակայն փաստացի չեն կատարվել, այսինքն վճարումներ չեն իրականացվել,
- 113 միջոցառումների փաստացի կատարողականը ճշտված ծրագրի նկատմամբ կազմել է 50%-ից ցածր՝ առաջացնելով տարեկան ճշտված ծրագրի նկատմամբ 35 մլրդ դրամի շեղում,
- 306 միջոցառումներ «ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված չեն եղել, սակայն հետագայում կառավարությունը դրանք ճշտված ծրագրով ավելացրել է՝ 63.5 մլրդ դրամ, իսկ հետագայում պարզվել է, որ փաստացի դրանից կատարվել է միայն 52.8 մլրդ դրամի ծախս:

Ըստ Հաշվեքննիչ պալատի եզրակացության՝ ՀՀ կառավարության կողմից ՀՀ Ազգային ժողով ներկայացված «ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ» տարեկան հաշվետվությունում եկամուտներին, ծախսերին և դեֆիցիտին ամրագրված ցուցանիշները համապատասխանել են «ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթներին և արտացոլել են պետական բյուջեի փաստացի կատարողականը: Ըստ այդմ, ՀՀ հաշվեքննիչ պալատը պետական բյուջեի կատարման վերաբերյալ տրամադրել է դրական եզրահանգում:

2020թ. գործունեության ծրագրից 2021 թ. գործունեության տարեկան ծրագիր տեղափոխված հաշվեքննությունների ցանկ

1. Առողջապահության նախարարության ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության ծառայություններ,
2. առողջապահության նախարարության սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնություն,
3. առողջապահության նախարարության ոչ վարակիչ հիվանդությունների բժշկական օգնության ապահովում,
4. առողջապահության նախարարության մոր և մանկան առողջության պահպանում,
5. պաշտպանության նախարարության գնումների գործընթաց,
6. պետական եկամուտների կոմիտեի ֆինանսատնտեսական գործունեություն,
7. պետական եկամուտների կոմիտեի կողմից պետական բյուջեի մուտքերի ձևավորման կանոնակարգված գործունեություն,
8. աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայությունում կենսաթոշակառուների ցանկերի ձևավորում, կենսաթոշակների նշանակում, կենսաթոշակների վճարման իրականացում,
9. տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի ֆինանսատնտեսական գործունեություն,
10. տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ցանցի բարելավման դրամաշնորհային և վարկային ծրագրեր,
11. տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում,
12. տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Գյումրու քաղաքային ճանապարհների վարկային և դրամաշնորհային ծրագիր,
13. տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման վարկային և դրամաշնորհային ծրագրեր,
14. կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության նախնական, միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթությունների գծով ուսանողական նպաստների տրամադրում,
15. կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության արվեստների ծրագիր:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Համագործակցությունը իրավապահ մարմինների հետ

Հ/Հ	Թեմա	Երբ է տրամադրվել	Հաշվեքննություն (վերահսկողությունը) ընդգրկող ժամանակաշրջանը	Ծանոթություն
I. Հաշվեքննիչ պալատը նյութեր է տրամադրել ՀՀ գլխավոր դատախազությանը				
1.	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	30.03.2021թ.	01.01.2019թ.- 31.12.2019թթ.	Ուսումնասիրության փուլում է:
2.	ՀՀ բնապահպանության նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ	25.02.2021թ.	01.01.2017թ.- 31.12.2018թթ.	Ուսումնասիրության փուլում է:
3.	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ (գաղտնի)	25.02.2021թ.	01.01.2017թ.- 31.12.2018թթ.	Ուսումնասիրության փուլում է:
4.	ՀՀ բնապահպանության նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ	29.06.2020թ.	01.01.2017թ.- 31.12.2018թթ.	Հարուցվել է 11 քրեական գործ, որից 1-ը կարճվել է, 2 միացվել է արդեն քննվող գործերին, 8-ի մասով կատարվում է նախաքննություն: Միայն 3 գործի մասով պետությանը պատճառված վնասի չափը՝ 7.6 մլն դրամ:

5.	ՀՀ բնապահպանության նախարարության «Սևան ազգային պարկ» և «Հայանտառ» ՊՈԱԿ-ներ	08.06.2020թ.	01.01.2017թ.- 31.12.2018թթ.	Հարուցվել է քրեական գործ, կատարվում է նախաքննություն: Պետությանը պատճառված վնասի չափը՝ 22 մլն դրամ:
6.	ՀՀ ՊՆ արտաբյուջետային միջոցների ձևավորում և օգտագործում (գաղտնի)	30.12.2019թ.	01.01.2009- 30.09.2018թթ.	Հարուցվել է քրեական գործ, կատարվում է նախաքննություն: Պետությանը պատճառված վնասի չափը՝ 1,568.6 մլն դրամ:
7.	ՀՀ ՊՆ ավիավառելիքի ձեռքբերման, պահպանման և օգտագործման գործընթաց	04.07.2019թ. գաղտնի	01.01.2009- 30.09.2018թթ.	Հարուցվել է քրեական գործ, նախաքննության փուլում է:
8.	Ջրային տնտեսության պետական կոմիտե	01.04.2019թ.	01.01.2017- 30.09.2018թթ.	Հարուցվել է քրեական գործ, կատարվում է նախաքննություն: Պետությանը պատճառված վնասի չափը՝ 390 մլն դրամ:
9.	ՀՀ Քաղաքացիական ավիացիայի կոմիտե	01.04.2019թ.	01.01.2017- 30.09.2018թթ.	Հարուցվել է քրեական գործ, նախաքննության փուլում է:
10.	«Բարձրավիտ էլեկտրացանցեր» ՓԲԸ (մոնտաժային և շինարարական աշխատանքների գծով ենթակապալառուների որակավորման նվազագույն չափանիշներին անհամապատասխանության մասով)	08.02.2019թ.	01.01.2017- 30.09.2018թթ.	Հարուցվել է քրեական գործ, նախաքննության փուլում է:

11.	«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ (էլեկտրահաղորդման գծերի ապամոնիտաժման անհամապատասխանության մասով)	08.02.2019թ.	01.01.2017-30.09.2018թթ.	Հարուցվել է քրեական գործ, նախաքննության փուլում է:
12.	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (գուդրոնի, բիտումի և մագլթի գնման գործընթացի ստուգման վերաբերյալ)	08.02.2019թ.	01.01.2015-31.12.2017թթ.	Միացվել է ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտում քննվող քրեական գործին:
13.	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (կահույքի և կենցաղային տեխնիկայի գնման գործընթացի ստուգման վերաբերյալ)	08.02.2019թ.	01.01.2015-31.12.2017թթ.	Միացվել է ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտում քննվող քրեական գործին:
14.	Արմավիրի մարզի Նորակերտ համայնք	01.10.2018թ.	01.01.2016-29.06.2018թթ.	Կցվել է Արմավիրի մարզային քննչական վարչության վարչություն քննվող քրեական գործին, կատարվում է նախաքննություն: Պետությանը պատճառված վնասի չափը՝ 5.3 մլն դրամ:
15.	ՀՀ բնապահպանության նախարարության «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ	23.03.2018թ.	01.01.2016-29.12.2017թթ.	Հարուցվել է քրեական գործ, կատարվում է նախաքննություն: Պետությանը պատճառված վնասի չափը՝ 4.7 մլն դրամ:
16.	Տավարաբուծության զարգացման ծրագիր	23.03.2018թ.	01.01.2016-01.12.2017թթ.	Հարուցվել է 6 քրեական գործ, որոնք կարճվել են:
17.	Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն	22.03.2018թ.	01.01.2016-29.12.2017թթ.	Հարուցվել է 7 քրեական գործ, նախաքննության փուլում է:

II. Հաշվեքննիչ պալատը նյութեր է տրամադրել ՀՀ գլխավոր դատախազության պահանջով

18.	ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայություն	14.05.2021թ.	01.01.2018-31.12.2019թթ.	Գտնվում է ուսումնասիրության փուլում:
19.	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միջպետական եվ հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում	12.05.2021թ.	01.01.2017-31.12.2019թթ.	Գտնվում է ուսումնասիրության փուլում:
20.	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	30.04.2021թ.	01.01.2018-31.12.2020թթ.	Գտնվում է ուսումնասիրության փուլում:
21.	Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ	21.07.2020թ.	01.01.2017-31.12.2018թթ.	Գտնվում է ուսումնասիրության փուլում:
22.	ՀՀ Սյունիքի մարզպետարան	17.03.2020թ.	01.01.2017-31.12.2018թթ.	Հարուցվել է քրեական գործ, կատարվում է նախաքննություն:
23.	Դեղատնային գործունեության լիցենզավորման գործընթաց	22.01.2020թ.	01.01.2017-30.09.2018թթ.	Գտնվում է ուսումնասիրության փուլում:

24.	Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագիր	10.01.2020թ.	01.01.2016-30.09.2018թթ	Գտնվում է ուսումնասիրության փուլում:
25.	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	10.01.2020թ.	01.01.2017-01.10.2018թթ.	Հարուցվել է քրեական գործ, կատարվում է նախաքննություն: Պետությանը պատճառված վնասի չափը՝ 6.1 մլն դրամ:
26.	Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության դրամաշնորհային ծրագրեր	15.01.2020թ.	01.01.2015-20.12.2017թթ.	Գտնվում է ուսումնասիրության փուլում:
27.	Սոցիալական ապահովության պետական ծառայություն	26.12.2019թ.	01.01.2018-31.12.2018թթ.	Գտնվում է ուսումնասիրության փուլում:
28.	Սոցիալական ապահովության պետական ծառայություն	13.12.2019թ.	01.01.2018-31.12.2018թթ.	Գտնվում է ուսումնասիրության փուլում:
29.	ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման պետական աջակցության դրամաշնորհային ծրագրեր	12.12.2019թ.	01.01.2017-31.12.2017թթ.	Գտնվում է ուսումնասիրության փուլում:

30.	ՀՀ բնապահպանության նախարարության կենսառեսուսների կառավարման գործակալություն	11.11.2019թ.	01.01.2017-30.09.2018թթ.	Հարուցվել է 2 քրեական գործ: Պետությանը պատճառված վնասի չափը՝ 407.8 մլն դրամ: Գործերը կարճվել են՝ հանցակազմի բացակայության հիմքով:
31.	«Խոսրովի անտառ պետական արգելոց» ՊՈԱԿ	08.11.2019թ..	01.01.2017-30.09.2018թթ.	Հարուցվել է քրեական գործ, կատարվում է նախաքննություն:
32.	Տեսչական մարմիններ	25.07.2019թ.	01.01.2017-30.09.2018թթ.	Գտնվում է ուսումնասիրության փուլում:
33.	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	09.07.2019թ.	01.01.2018-31.12.2018թթ.	Գտնվում է ուսումնասիրության փուլում:
34.	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն	09.07.2019թ.	01.01.2017-30.12.2018թթ.	Գտնվում է ուսումնասիրության փուլում:
35.	ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ռիսկերի վրա հիմնված համալիր հարկային ստուգումների մեթոդաբանության և ռիսկայնությունը որոշող չափանիշների կիրառություն	04.07.2019թ.	01.01.2018-31.12.2018թթ.	Գտնվում է ուսումնասիրության փուլում:
36.	ՀՀ առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ	14.06.2019թ.	01.01.2017-30.09.2018թթ.	Հարուցվել է քրեական գործ, կատարվում է նախաքննություն: Պետությանը պատճառված վնասի չափը՝ 110.5 մլն դրամ:

37.	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ	19.03.2019թ.	01.01.2017-30.09.2018թթ.	Հարուցվել է քրեական գործ, կատարվում է նախաքննություն: Մեղադրանք է առաջդրվել 2 անձի: Պետությանը պատճառված վնասի չափը՝ 867 մլն դրամ:
38.	Պետական գույքի կառավարման վարչություն	29.05.2018թ.	01.01.2016-29.12.2017թթ.	Գտնվում է ուսումնասիրության փուլում:
39.	«Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ	26.06.2018թ.	01.01.2016-20.12.2017թթ.	Հարուցվել է քրեական գործ, դատաքննության փուլում է: Պետությանը պատճառված վնասի չափը՝ 19 մլն դրամ:
40.	Սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն	26.06.2018թ.	01.01.2016-20.12.2017թթ.	Գտնվում է ուսումնասիրության փուլում:
41.	Ջրային տնտեսության պետական կոմիտե	25.05.2018թ.	01.01.2016-20.12.2017թթ.	Հարուցվել է քրեական գործ, Պետությանը պատճառված վնասի չափը՝ 4.7 մլն դրամ: Կայացվել է մեղադրական դատական վճիռ, որն օրինական ուժի մեջ է մտել:
III. ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը տրամադրված նյութեր				
42.	«Հայաստան» համահայկական հիմնադրամ	20.11.2019թ.	01.01.2013-31.12.2017թթ.	Կցվել է արդեն հարուցված քրեական գործին, նախաքննության փուլում է:

IV. ՀՀ հատուկ քննչական ծառայությանը տրամադրված նյութեր

43.	Պետական եկամուտների կոմիտե	10.05.2019թ.	01.01.2015- 29.12.2017թթ.	Գտնվում է ուսումնասիրության փուլում:
-----	----------------------------	--------------	------------------------------	--------------------------------------

V. ՀՀ քննչական կոմիտեին տրամադրված նյութ

44.	Ջրային տնտեսության պետական կոմիտե	29.07.2020թ.	01.01.2016- 20.12.2017թթ.	Գտնվում է ուսումնասիրության փուլում:
-----	-----------------------------------	--------------	------------------------------	--------------------------------------